




ԼՍԽԱԳԻՐ  
ԿՐԹԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ  
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՇՏՆԱԿԱՆ ԼԵՐԱՏ. ԵՐԹՈՒՄԱԿԱՆ ԵՄԵ ՊԱՏԵՐԱՐԿՈՒԹԵԱՆ

ՆՈՐ  
ԵՐԶԱՆ 1959

ԼԳ.  
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، أدبية، ثقافية، للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in JERUSALEM



# ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Դրեն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		1
— «Թող զմեռեալսն բաղել զմեռեալս իւրեանց»		
ԿՐԹՆԱԿԱՆ	ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՓՈՍ	5
— «Հուսով խոսովանիմ»		
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	ՇԷՆ - ՄԱՀ	9
— Գարուն է	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	10
— Գարազուխ	»	10
— *	»	11
— Կորովր	ՍԱՐՄԷՆ	11
— Գարուն	»	
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	Մ. ՄԿՐԵԱՆ	12
— Նարեկացու սեղծագործութիւնը		
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ	Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ	18
— Հայկական զարդարութեան		
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ	Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ	21
— Գամաղիէի վանք		
ՀԻՆ ԷՋԵՐ	Հրատ. » » »	24
— Քարոզ ի Մկրտաբան Տեառն		
Վարդանանց շարժումը	ՍԱՂԻՄԱՅԻ	25
ԳՐԱԽՈՍԱԿԱՆ		
— «Քերականական եւ Ուղղագրական Աշխատութիւնները	ԱՆՈՒՇԱԽԱՆ ՎՐԻ. ԶՂԱՆԵԱՆ	28
— Հին եւ Միջնադարեան Հայաստանում»		
— «Հայ Աւխատը»	ԳԷՈՐԴ. Ս. ՀԻՆԻՎԷՋԵԱՆ	31
ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ՍՈՒՋ		
— Մեսրոպ Սրբազանի ուղերձը		34
ՄԵՐ ԹԵՄԵՐԷՆ		
— Իրաքի քեմէն		36
Պատշոնական Հաղորդագրութիւն Ս. Արտոյ Դիւանէն		37
Գեր. Տ. Սուրեն Եպս. Քեմհանեան Արքեպիսկոպոսի կը ստանայ		40
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
— Եկեղեցական - Բեմական		41
— Պատշոնական		43
— Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան՝ Հովիւ Հայոց Միլանոյի		44
ՏԻՐՈՒՆԻ		
— Տ. Յովնանէս Խոշակիր Քհնյ. Սիմոնեան		45
— Երկու արկածահար հայ օրիորդներ		45

ՍԻՈՆ-ի Տարեկան Բաժնեգիրն է՝  
 բոլոր երկիրներու համար՝ Անգլ. Շրիին 20  
 Redaction of the Armenian Monthly SION  
 Armenian Patriarchate,  
 P. O. B. 4001  
 Old City - Jerusalem  
 Via Amman (Jordan)



# — ≡ Ս Ի Ո Ն



Լ.Գ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1959

ՅՈՒՆՈՒՆԿՈ - ՓԵՏՐՈՒՆԿ

ԹԻՒ 1-2


## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### “ԹՈՂ ԶՄԵՌԵԱԼՍՆ ԹԱՂԵԼ ԶՄԵՌԵԱԼՍ ԻՒՐԵԱՆՅ”

Աւետարանի խօսքերը, իրենց արտասանուելէն դարեր ետքն ալ, տակաւին կը պահեն իրենց իմաստի թարմութեան հետ նաև ուժական այն թափը՝ որով ըսուեցան անոնք առաջին անգամ կենդանի բարբառով։ Կը նմանին այն հազուադիւտ անթառամ ծաղիկներուն՝ որոնք չեն կորսնցներ ոչ միայն իրենց բոյրը այլ նաև իրենց պայծառ զոյնը։ Անոնք կը հպատակին ուրիշ օրէնքի մը — անմահութեան և յաւերժութեան օրէնքին — որ վեր կը փնայ ժամանակի հարթիչ և տժգունող օրէնքէն։ Կարծես երէկ ըսուած ըլլան սա խօսքերը, այսօր զործադրելու համար. «Տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ»։ «Մի դատիք, զի մի դատիցիք»։ «Եղիցի ձեր բան՝ Այոն այո, և Ոչն ոչ»։ Ասոնց կարգին է զրութեանս վերնագիրը, որուն մէկ տարբերակն է. «Թոյլ տուր մեռելոց թաղել զմեռեալս իւրեանց»։

Աւետարանական այս խօսքին կը յաջորդէ ուրիշ նախադասութիւն մը որ ամբողջացուցիչ և աւելի կարևոր մասն է արտայայտուած զաղափարին. «Եւ դու երթ, պատմեա զարքայութիւնն Աստուծոյ»։ Մեր Փրկչի մտքին մէջ կաւրկորազոյն հրահանգը այս վերջինն էր։ Յիսուսի նպատակը չէր երբեք հայր մը թաղելու նուիրական պարտականութեան արգելք հանդիսանալ, այլ աւելի բարձր և աւելի նուիրական պարտականութեան մը ճամբան բանալ։ Յիսուս լաւ գիտէր թէ շատեր պիտի գտնուէին որոնք սիրով պիտի ուզէին մեռել մը թաղել. (վկայ՝ մեր յուզարկաւորութիւնները, որոնց ներկայ ըլլալու համար շատեր կը ձգեն իրենց զործը և կը վազեն Եկեղեցի, ինչ որ հաւանաբար պիտի չուզէին ձգել Աստուծոյ, ազգին և մինչև իսկ իրենց հոգիներուն համար։) Յիսուս գիտէր միաժամանակ թէ քիչ էր թիւը անոնց՝ որոնք կրնային դրական և դժուար աշխատանքի մը լծել իրենք զիրենք. (վկայ՝ մեր օրերու քահանայական և ուսուցչական ասպարէզները, որոնց մէջ մասնելու քաջութիւն ունեցողները քիչ են թէ՛ որակով և թէ՛ քանակով)։

Հակառակ այս իրողութեան, սակայն, որ Աւետարանէն մէջբերուած վերևի երկու նախադասութեանց հարկորազոյնը վերջինն է, մենք պիտի ուզէինք այս առթիւ շեշտը դնել առաջինի վրայ և կոռուան ծառայեցնել զայն անդրա-



171-98

19340 ա.հ



դառնալու համար զրեթէ ազգային հանգամանք ստացած ժամավաճառութեան մը, որուն յոռի հետեանքներուն քիչեր կ'անդրադառնան: Ակնարկուած ժամավաճառութիւնը՝ եկեղեցիի և ազգին կարծեցեալ կամ իրական հակառակորդներու, այսինքն շարութեան զործակալներու, բրածներով և ընելիքներով, ըսածներով և ըսելիքներով չափազանց մտադրադուրին է: Նման վատառողջ հետաքրքրութիւն մը ոչ միայն ժամավաճառութիւն է, որ ինքնին մեղք է և վնասակար՝ ենթակային, այլ յաճախ զործակցիլ է շարութեան զործակալներուն, և հետևաբար օգտակար՝ հակառակորդին: Ուստի նման կոչի մը թելադրանքը «ձգէ մեռելներուն՝ որ թողեն իրենց մեռեալները» այժմէական է և անհրաժեշտ՝ մեզմէ շատերուն համար:

Ներկայ ժամանակներու մեր ազգային մեծագոյն մեղքը թերևս ուրացումը չէ մեր Աստուծոյն և սրբութեանց, թէ իսկ ծանր այս մեղքը բաւական լուրջ հանգամանք առած ըլլայ մտահոգելու աստիճան մեր օրերու եղիաները. այսուհանդերձ կը հաւատանք որ Աստուած տակաւին պահած է առնուազն «եօթ հազար» հարազատ հաւատացեալներ որոնք «Բահային ծուներ չեն կրկնած»: Մեր մեծագոյն մեղքը թերևս մեր կռուազանութիւնն ալ չէ, որքան ալ տիրող իրականութիւնը այդ ըլլայ մեր ազգային և կրօնական ճակատին վրայ: Կը հաւատանք որ «խաղաղութեան որդիներու» թիւը դեռ չէ իջած վտանգի գիծէն վար: Այս իրողութեան մեծագոյն փաստը կուտայ նոյնինքն մեր եկեղեցւոյ զերագոյն Գլուխը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որ զերմարդկային ճիգերով կ'աշխատի մեր եկեղեցւոյ նաւը առաջնորդել խաղաղութեան նաւահանդիստը, հակառակ ուժգին հովերու՝ որոնք կը փչեն ալէն ու ձախէն, և հակառակ կատաղի փոթորկումներուն՝ որոնք կը կոծեն նաւուն կողերը՝ քայքայել սպառնալով անոր դարաւոր ու զեղեցիկ կառուցուածքը: Ոչ ալ մեր մեծագոյն մեղքը եկեղեցական կանոններու նկատմամբ ցոյց տրուած դատապարտելի սղիտութիւնը և անարգ արհամարհանքն է որ կ'երևի ոչ միայն հոգիէ և կրօնական զգացումներէ պարպուած կարգ մը զործիչներու և կազմակերպութեանց մօտ, այլ նաև բարձրաստիճան ճանչցուած կարգ մը եկեղեցականներու մէջ: Կը հաւատանք սակայն որ Հայց. եկեղեցւոյ դարաւոր օրէնքներուն և նուիրապետական կարգին նկատմամբ յարգանք և հնազանդութիւն տածողներ տակաւին կը կազմեն մեծամասնութիւն: Որքան ալ ծանր և մահացու ըլլան վերոյիշեալ մեղքերը, մենք անոնց պիտի չանդրադառնանք այս առթիւ. այլ պիտի ուզէինք մասնաւոր չափ հասարակ բարի հոգիներու կողմէ զործուած մեղք մը, որ եթէ չդարմանուի, բոլոր ներքի մեղքերու պէս կրնայ մահացու դառնալ: Այդ մարդկային տկարութիւնը, ինչպէս ակնարկեցինք, մեր եկեղեցական ու ազգային մարզին մէջ վնասարարներու շարժումներուն իրենց արժէքէն աւելի տեղ տալ է միտքերու մէջ և խօսքերու ընթացքին:

Ստոյգ է թէ մարդկային է, և հետևաբար հասկնալի, Սաղմոսերգուն պէս դայրանալ և աղաղակել Աստուծոյ. «Մինչև յե՞րբ մեղաւորք, Տէր, մինչև յե՞րբ մեղաւորք պարծեսցին. բարբառեալ խօսեսցին ամենեքեան որ զործեն զանօրէնութիւն: Զթողովուրդս Դո, Տէր, խնարհ արարին, և զժառանգութիւն Դո շարշարեցին... և ասացին՝ ոչ տեսանէ զայս Տէր... Ո՞ր յարիցէ



ընդ իս ի վերայ չարաց, կամ ո՞ր կացցէ վասն իմ հակառակ ամենոյնի որ զործեն զանօրէնութիւն . . . » (Սղմ. ՂԳ., աշխարհաբար՝ ՂԳ.): Բայց միևնոյն երգին մէջ Սաղմոսներգուն իր զայրոյթը թափելէ ետքը կ'աւելցնէ վստահութեամբ. «Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան՝ զի են ընդունայն . . . Երանի մարդոյ զոր խրատես Դու, Տէր . . . : Հանգուցանես զնա յաւուրցն չարութեան, մինչև փոքրացի խորխորատ մեղաւորի: Ոչ մերժէ Տէր զժողովուրդ իւր, և զժառանգութիւն իւր ոչ առնէ անտես . . . հատուցէ նոցա Տէր ըստ անօրէնութեան նոցա, և ըստ չարութեան նոցա կործանեսցէ զնոսա Տէր Աստուած մեր»:

Մեր օրերու բարի հոգիներ, չարը խափանուած տեսնելու իրենց արդար եռանդին մէջ առհասարակ սրտմաշուք ըլլալու սաստիճան առաջ կ'երթան, առանց անդրադառնալու որ այդու կը ծառայեն չարութեան դատին: Չարութեան դէմը երբ չի յաջողիր բարի արամադրութիւններով լեցուած հոգիները իր կողմը շահիլ անոնց դործնական չարիք ընել տալով, զէթ կ'աշխատի զանոնք իր կառքին լծել անդործութեան մատնելով զանոնք: Հոգեբանօրէն հակառակորդի շարժումներով միայն զբաղուած պահուիլը, խորքին մէջ օժանդակել է թշնամիին: Պատերազմներու ընթացքին վարպետ ռազմավարութիւն է վախ և մտահոգութիւն ձգել դիմացի բանակին մէջ թէ՛ բարոյալքելու զանոնք և թէ՛ անոնց յարձակողական ծրագիրները խանգարելու համար: Յաղթանակները ինչպէս նաև պարտութիւնները նախ սրտերու և հոգիներու մէջ տեղի կ'ունենան, և ապա՝ ճակատամարտներուն վրայ:

Չարութեան ասպետներու ասպատակութիւնները ըստ բաւականին լայն ասպարէզ գտած են մեր մէջ ոչ թէ որովհետև խորքին մէջ զօրաւոր են անոնք, այլ անոր համար որ բարութեան բանակի զինուորագրեալները տկար են: Տկար են ոչ թէ թիւով, այլ տկար են իրենց միայն յատուկ զէնքերու զործածութեան մէջ: Աշխարհ իրեն յատուկ զէնքեր ունի — բիրտ ոյժ, դրամ և ասոնց պէս բաներ: Իսկ եկեղեցիին զէնքը իր հաւատքն է և իր վճռականութիւնը ճշմարտութեան ճանապարհէն չհեղելու: Ըլլայ աշխարհիկ պատմութիւնը և ըլլայ կրօնականը՝ հաստատած են որ հաւատքի և համոզումի զէնքերը աւելի ուժեղ են քան աշխարհի կիրարկածները: Առաջին երեք դարերու փոքրածիւ և արհամարհելի ճանչցուած Գրիստոնէութիւնը ի վերջոյ յաղթական դուրս եկաւ իր ժամանակի աշխարհի հզօրագոյն կայսրութեան հետ ունեցած իր պայքարէն, լոկայն պատճառով որ յարատեօրէն և յաջողապէս զործածեց իրեն միայն յատուկ եղած զէնքերը: Ստոյգ է, երբեմն թշնամիի դէմ պէտք է պայքարիլ անոր զէնքերով, բայց երբ մէկը իր ձեռքին մէջ ունի աւելի զօրաւոր զէնք, ինչո՞ւ թըշնամիինը պիտի զործածէ: Դաւիթ փորձեց նախ սուրով և զրահով Գողիաթի դէմ ելնել, բայց զգաց որ անոնք ի՞ր զէնքերը չէին, ուստի ձեռք առաւ ի՞ր զէնքը — պարսպաթիւղ — և յաջողեցաւ ֆիզիքապէս իրմէ անհամեմատօրէն զօրաւոր թշնամիի զգեստնել: Վարդանանք պարտուեցան թշնամիի զէնքերով իրենց մղած ճակատամարտին մէջ, բայց յաղթական դուրս եկան իրենց միջոց զէնքի զործածութեան մէջ, իրենց հաւատքին վրայ անխախտ մնալու իրենց վճռականութեան մէջ: Բարութեան բանակի զինուորներէն պահանջուածը այսօր այս պողպատէ վճռականութիւնն է. զայն ունենալէ վերջ այլևս երբեք չմտահոգուիլ



չարութեան զործակալներու արարքներով. անոնք իրենց աւերը պիտի գործեն Եկեղեցիին մէջ, ինչպէս հովն ու փոթորիկը՝ բնութեան մէջ, որոնց պաշտօնն է մթնոլորտը մաքրել, չորցած ճիւղերը կոտրել և խախուտ տունները տապալել: Որչափ ատեն որ Եկեղեցիի շէնքը հաստատ կը մնայ հաւատքի վէմին վրայ, դժոխքի բոլոր զօրութիւնները պիտի չկրնան խախտել զայն: Եկեղեցիի զէմ պայքարողները, ըլլան անոնք ներսէն կամ դուրսէն, ալէն կամ ձախէն, իրենց ճակատին վրայ զրուած ունին իրենց մահուան դատավճիռը: Ե՞րբ այդ վճիռը կը գործադրուի, այդ Եկեղեցիի Տիրոջ զիտնալիքն է: Մեր զիտնալիքը, ի միջի այլոց, այն է որ Աստուած ողորմած Հայր է ամենքի՝ համար: Աստուած յատկապէս երկայնամիտ է չարերու հանդէպ, որովհետեւ «Ոչ կամի զմահ մեղաւորին, այլ՝ զդառնալ նորա ի շար ճանապարհէն և զկեան»։ Աստուած կը համբերէ, կ'ազդարարէ այլևայլ կերպերով, որ չարագործը դարձի զայ, ետ քաշէ ոտքերը իր քալած չարութեան ճամբաներէն: Եթէ Աստուած ամէն չարագործ պատժէր տեղն ու տեղ, աշխարհի վրայ ցարդ մարդ մնացած չէր ըլլար. ուրեմն.

«Թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց»:

Չգէ որ ժխտական ոյժեր, որոնք աւեր կը գործեն Աստուծոյ Եկեղեցիէն ներս, և քու հոգիիդ մէջ՝ որ մանրանկարն է Եկեղեցիին, թաղուին ինքնաբերաբար ու անցնին պատմութեան իբրև վիճակներ Աստուծոյ արդարութեան: Անտառի մէջ ինկած ամէն կրակ ի վերջոյ պիտի մարի. անտառապահները եթէ կրնան բնականաբար իրենց բաժինը պիտի բերեն կրակը մարելու մէջ. իսկ եթէ տրուած պայմաններու տակ վեր է այդ իրենց ոյժերէն գէթ պիտի աշխատին կղզիացնել կրակը, և թոյլ չտալ որ անտառի մնացեալ մասին ալ փոխանցուի հրդեհը:

Բարութեան զինուորները պէտք է նմանին ծովերը շրջանակող ժայռերու: Չարութեան կատաղի ալիքները ի վերջոյ կը փշուրն անոնց վրայ և փրկուրի կը վերածուին անոնց ոտքերուն առջև: Այդ ժայռերը թոյլ չեն տար որ իրենց ետին կեցող դաշտեր և քաղաքներ ողողուին ծովու չորցնող ջուրով: Չարութիւնը օժտուած է ի վերջոյ ինքզինք քայքայելու քաղցկեղով, պիտի գործէ այդ քաղցկեղը մինչև որ սպաննէ իր մարմինը: Ոչ որ թող անհամբերութեան նշաններ ցոյց տայ այդ օրը փութացած տեսնելու: Ոչ որ թող վատնէ իր ուժերը ապարդիւն սպառումներով և ժխտական մտածումներով: Թող ամէն որ հաւատքով զօրացած դրական գործերու կատարման մէջ գտնէ իր հոգեկան դահացումը և սրտի գուարթութիւնը: «Դու երթ, պատմեա զարքայութիւն Աստուծոյ», և ձգէ հոգով մեռածներուն իրենց մեռելները թաղելու հոգը:



## ԿՐԹՆԱԿԱՆ

## “ՀԱՅՐ ԵՐԿԱՒՈՐ, ԱՍՏՈՒԱԾ ԶՇՄԱՐԻՏ”

«Հայր երկնաւոր, Աստուած նեմարիս,  
Որ առաքեցեր զՈրդիդ Քո սիրելի  
Ի խնդիր մոլորեալ ոչխարին.  
Մեղայ յերկինս եւ առաջի Քո,  
Ընկալ զիս որպէս զանառակ որդին  
Եւ զզեցո ինձ զպատմութեանն զառաքին,  
Զոր մերկացայ մեղօք.

Եւ զորմեա՛ Քո արարածոյ եւ ինձ՝ Զբազմամեղիս»:

(Աղօթք Իւրաքանչիւր Անձին Հաւատացեալ ի Քրիստոս.  
Շնորհալի. Յրդ տուն):

Շնորհալի Հայրապետի «Հաւատով խոս-  
սովանիմ» գոհար աղօթքի առաջին երկու  
տունները ուղղուած էին Ամենասուրբ Եր-  
րորդութեան, իբրեւ մի Աստուածութեան:  
Յաջորդ երեք տուններէն իւրաքանչիւրը  
կ'ուղղուի Ս. Երրորդութեան երեք Դէմ-  
քերէն իւրաքանչիւրին: Եկեղեցւոյ մէջ  
ընդունուած եւ կիրարկուած սովորութիւն է  
որ երբեք աղօթքներ կ'ուղղուին Աստուա-  
ծութեան Անձներէն մէկին կամ միւսին ա-  
ռանձնապէս: Այս իրողութիւնը յստակ կեր-  
պով կ'երևի ծաշու երեք Ժամերգութեանց  
վերջին աղօթքներուն մէջ. ըստ այսմ,  
ծաշու Գ. Ժամու վերջին աղօթքը, «Ուա-  
ղաղութեամբ քով, Հոգիդ Սուրբ Աստուած  
ճշմարիտ», կ'ուղղուի Հոգի Աստուծոյ.  
Ծաշու Զ. Ժամու վերջին աղօթքը, «Հայր  
գթութեանց», կ'ուղղուի Հայր Աստուծոյ.  
Իսկ Թ. Ժամունը՝ «Քրիստոս Որդի Աստու-  
ծոյ», կ'ուղղուի նոյնինքն Որդի Աստուծոյ:  
Եկեղեցւոյ նշանաւոր Հայրերէն Յովհան  
Ոսկերեան, Հոգեգալստեան տօնին առթիւ  
գրած է մեծ աղօթք մը՝ զոր կը բաժնէ  
երեքի, եւ մէն մի մասը կ'ուղղէ Ս. Եր-  
րորդութեան Անձներէն իւրաքանչիւրին:  
Մեր ուսումնասիրութեան առարկայ սոյն  
աղօթատունը կ'ուղղուի Հօր Աստուծոյ:

Այս եւ յաջորդ երկու տուններն ալ կա-  
ռուցուած են մէկ եւ նոյն կաղապարի վրայ:  
Նախ Աստուածութեան իւրաքանչիւր դէմքը  
նեմարիս Աստուած կը գաւանդուի. ապա  
ընտրովի եւ համառօտակի կը յիշատակուին  
իւրաքանչիւր Անձներէն մէկին կամ միւսին

յատուկ եղող այն սնորհներէն, զոր մէն  
մի աղօթատունին մէջ յիշուած Անձը կա-  
տարած է մեր փրկութեան համար: Ապա  
կը կատարուի մեղքի խոստովանանք՝ որուն  
բանաձևը նոյն է երեք տուններուն մէջ ալ:  
Իբրեւ չորրորդ եւ վերջին կէտ կը հայցուի  
իւրաքանչիւր Անձէն այն մասնաւոր զեմու-  
քի, որ Ս. Երրորդութեան Անձներէն մէկը  
կամ միւսը տուած է արդէն ուրիշներուն,  
համաձայն Աւետարանի պատմութեանց:

«Որ առաքեցեր զՈրդիդ Քո սիրելի».  
— Հայրն է տիեզերքի եւ ամենայն ինչի ի  
գոյութիւն գալը, այսպէս ըսենք, յղացողը  
եւ ծրագրողը: Հայրն է իր յաւիտենական  
ծրագիրներու իրականացման համար իմաստ-  
նագոյն միջոցները վճռողը: Հետեւաբար  
նոյնինքն Հայրն է որ մարդու անկումէն  
յետոյ որոշեց զրկել, եւ ի լրումն ժամանա-  
կաց զրկեց, իր սիրելի Որդին՝ մարդու վե-  
րըստին բարձրացման համար: Այս գաղա-  
փարը յատկապէս շեշտուած է Յովհաննու  
Աւետարանին մէջ ծայրէ ծայր. առնուազն  
35 անգամ կրկնուած են «Հայր առաքեաց  
զիս» եւ նման կամ համազօր ասութիւն-  
ները: «Իմ գործերս կը վկայեն որ Հայրը  
զրկեց զիս» (Յովհ., Ե., 36): Երկրէ եր-  
կինք համբառնալու ատեն իր հետեւորդնե-  
րուն ուղղած Յիսուսի վերջին խօսքը եղաւ.  
«Որպէս առաքեաց զիս Հայր եւ ես առա-  
քեմ զձեզ...» (Մատթ., ԻԲ., 18):

«Ի խնդիր մոլորեալ ոչխարին».— Հայրը  
կը զրկէ իր Որդին որպէսզի փնտռէ մոլոր-  
եալ ոչխարը եւ վերադարձնէ զայն Հօր յա-  
ւիտենական գաւիթը: Ոտքը լոկ անհատ  
մոլորեալ ոչխարներու մասին չէ, այլ ամ-  
բողջ հօտին համար է: Թէ արդարեւ մարդ-  
կութիւնը իբրեւ ամբողջութիւն մոլորած է  
ճշմարտութեան ճանապարհէն, կը վկայեն  
ամբողջ մարդկային պատմութիւնը եւ Աս-  
տուածաշունչը: «Ամենեքեան խոտորեցան  
ի միասին, եւ անպիտանացան» (Սղմ., ԺԳ.,  
3): «Ոչ ոք է որ առնէ զբարի եւ չէ ոք  
մինչեւ ի մի» (Սղմ., ԾԲ., 4): Յիսուսի  
աշխարհ գալուն նպատակն է առաջնորդել  
մոլորեալ մարդկութիւնը իր Հօր Արքայա-  
րանը:

Հոգ չէ թէ մարդիկ ինչ ճամբաներու  
մէջ գտնուին, որքան ատեն որ Աստուծոյ  
կամքին եւ Օրէնքին ճամբուն մէջ չեն



գտնուելի, մոլորեալ են: Կրնայ ըլլալ որ անոնք կը գտնուին բարդաւաճման և ճոխութեան ճամբաներու մէջ: Կրնայ ըլլալ որ իրենց սեղանները առատ են և կը յորդին գինիով և իւղով: Կրնայ ըլլալ որ իրենց երկիրը լաւ մշակուած և վաճառականութիւնը ծաղկած է, աշխատաւորին կեանքը և ապագան ապահովուած է: Կրնայ ըլլալ որ զիտութիւնը և արուեստը յառաջացած վիճակի մէջ կը գտնուին: Այս բոլորը բարի և բաղձալի են ամբողջ մարդկութեան համար: Այս երևոյթները սակայն ապացոյցներ չեն երբեք որ մարդիկ մոլար ճանապարհներու մէջ չեն գտնուիր: Երբեք հետեւ նիւթական առաւելութիւններ փաստեր չեն երբեք հոգեկան բարդաւաճման: Ընդհակառակը, երբեք հակափաստեր են անոնք: Աստուած Իր նիւթական բարիքները հաւասարապէս ամէնքի տրամադրութեան տակ դրած է: Իր արեւն ու անձրեւը կուտայ բարիին ու չարին հաւասարապէս: մայր երկիրը իր վրայ աշխատանք թափողը կը վարձատրէ անկախաբար անոր հոգեկան վիճակներէն: Աստուծոյ դրած օրէնքն է թէ ով որ աշխատի յարատեւ և իմաստուն եղանակաւ, ի վերջոյ իր ջանքերը պիտի պսակուին յաջողութեամբ, որչափ ատեն անոնք հակառակ չեն Աստուծոյ յաւիտեանական ծրագրին: Հետեւաբար ոչ ոք թող գանգատի որ չարերը կը յաջողին երկրի վրայ. անոնք կը յաջողին որովհետեւ ի գործ կը դնեն բոլոր այն միջոցները — ներքի կամ աններքի — որոնք անհրաժեշտ են գործի մը յաջողութեան: Կը հետապնդեն իրենց աշխարհիկ նպատակներու իրագործումը առանց խղճահարութեան և առանց երկմտութեան, ուժով գազանի մը անհողութեամբ և ինքնավստահութեամբ: Այս իրողութիւնը ինքնին ապացոյց մըն է անոնց բարոյապէս մոլորած ըլլալուն: Ի վերջոյ, իբրեւ մարդկային բանաւոր էակներ, վերահասու պիտի ըլլան անոնք այս զբաղման իրականութեան, երբ արդէն երբեք շատ ուշ պիտի ըլլայ դարմանումի մասին մտածելը: — Բրիտոս է ճանապարհը, ճշմարտութիւնը և կեանքը. և հետեւաբար Ան միայն կը ցուցնէ մարդկութեան շիտակ և ուղիղ ճանապարհը՝ որ դէպի յաւիտեանական իրականութիւնները և անկապտելի

յաջողութիւններու կ'առաջնորդէ: Հայրը այնքան շատ սիրեց մարդկութիւնը, որ Իր Միածինը զրկեց աշխարհ, որպէսզի ով որ Անոր հաւատայ ճշմայ մոլորած՝ այլ առաջնորդուի ճշմարտութեան ճանապարհը՝ որ կը տանի դէպի յաւիտեանական կեանք:

«Մեղայ յերկինս եւ առաջի Բո».— Զղջումի և դարձի եկող մեղաւորին դասական աղաղակն է այս որ առաջին անգամ հնչեց Աւետարանի Անառակ որդիի բերնին մէջ: Այս խօսքով կը հաստատուի Աւետարանի քարոզած այն ճշմարտութիւնը թէ բոլոր մեղքեր, հոգ չէ թէ անոնք գործնականապէս որո՞ւ դէմ գործուած ըլլան, իրականութեան մէջ կը կատարուին Աստուծոյ առջև և Աստուծոյ դէմ: Արարքի մը Աստուծոյ դէմ գործուած ըլլալու հանգամանքն է որ զայն կը գտէ միւս արարքներէն և մեղքի կը վերածէ: Աստուծոյ դէմ գործուած արարքն է որ մենք մեղք կը կոչենք: — Իմաստով մը մեր բոլոր գործերը կ'ամ Աստուծոյ դէմ են և կ'ամ Աստուծոյ համար. խորքին մէջ, այսինքն արարքները վերջնական վերլուծումի են թարկելի յետոյ, վերահասու պիտի ըլլանք որ չէզոք արարք գոյութիւն չունի բարոյական և կրօնական գիտակցութիւն ունեցող էակի մը համար: Բրիտոս է ըսողը. «Որովհետեւ իմ եղբայրներէս մէկուն համար ըրիք, ինծի համար ըրած եղաք. որովհետեւ եղբայրներէս ունէ մէկուն չըրիք, ինծի ըրած չեղաք»:

Բոլոր մարդիկ անխտիր Աստուծոյ արարածներն են. և իբրեւ այդ՝ Աստուծոյ սեպհականութիւնն են. սեպհականութեան վրայ գործուած վնասը սեպհականատիրոջ կ'երթայ: Փճացման վտանգին ենթարկուած գոյքին, կ'ամ մահուան վտանգին մատնուած կենդանիին հանդէպ ցոյց տրուած անտարբերութիւնը անոնց սեպհականատիրոջ կ'երթայ: Հետեւաբար մարդոց դէմ գործուած չարիք կ'ամ բարիք, մարդոց նկատմամբ բռնուած հոգածու կ'ամ անտարբեր կեցուածք՝ կ'ուղղուին անոնց Արարչին և Տիրոջ: Բաց աստի, Բրիտոս մարդանալով եղբայրացաւ մարդ արարածին հետ համապարփակ իմաստով մը. բոլոր բարիքներ կ'ամ չարիքներ որոնք կը գործուին մեր նմաններուն դէմ, գործուած կ'ըլլան նաև



մարդկութեան Մեծ Եղբոր՝ Քրիստոսի համար կամ Անոր դէմ: Մե՛ր կողմէ մե՛ր անձերուն դէմ գործուած մեղքերն ալ կը գործուին Աստուծոյ դէմ և Աստուծոյ առջև: Կեանքին տէրը Աստուած է, ըլլայ այդ մեր մէջ կամ մեզմէ զուրս. հետեաբար ոչ ոք բարոյական կամ օրինական իրաւունքն ունի այդ կեանքը փճացնելու, եղծելու կամ ապականելու: Քրիստոնէական հասկացողութեամբ, բոլոր մկրտեալներս զնուած ենք Քրիստոսի թանկագին արիւնով. հետեաբար Ի՛ր մարդերն ենք. մեզմէ ոեւէ մէկին դէմ կատարուած մեղանշումը կատարուած կ'ըլլայ Աստուծոյ պատկանող էակի մը դէմ: Դարձեալ, Քրիստոնէական հասկացողութեամբ ամէն մկրտեալ Տաճար մըն է Սուրբ Հոգւոյն համար, և հետեաբար Աստուծոյ Հոգին կը բնակի մեր մէջ: Ունէ անձի դէմ գործուած անսրբութեան կամ բրտութեան արարքները կ'եղծեն Աստուծոյ այդ տաճարը և հետեաբար մեղքեր են՝ գործուած Աստուծոյ առջև և Անոր դէմ:

«Ընկալ զիս որպէս զանառակ որդին».  
— Աւետարանի անառակ որդին օտնակոխած էր իր հօր սէրը. վրաւորած էր անոր սիրտը. վատնած էր անոր հարստութիւնը: Հակառակ այս իրողութեանց սակայն անառակը իր հօր կողմէ ընդունուեցաւ ամենա մեծ խնդադատանքով: Պատճառն այն էր որ որդին նախ անդրադարձաւ իր խնկածութեան. ապա զգաց և հաւատաց որ իր հօր սէրը միայն պիտի կրնար բարձրացնել զինք այդ խնկածութենէն: Արդարեւ հայրը վերստին բացաւ իր սիրոյ ծորակը բարոյապէս և ֆիզիքապէս իր տգեղցած որդւոյն վրայ և լուաց զայն իր արցունքներով: Հայրական համբոյրը կրկին փոխանցեց անառակին այն շնորհը՝ որ զայն վերստին գրաւիչ և գեղեցիկ երիտասարդին վերածեց: Հայրը մորթեց հանդիսական և մեծ օրերու վերապահուած պարարակ եղբ, տօնելու համար իր մոլորեալ զաւկին վերագարձը: Երջանիկ այս պայմաններուն տակ տեղի ունեցաւ անառակին վերադարձը. աղօթասացը կը խնդրէ իր երկնաւոր Հօրմէն, որ ինք ևս նման ընդունելութեան արժանանայ, անառակի որդիով «մեղայ յերկինս և առաջի քո» ըսելէն ետքը:

Թէև անառակ որդիի առակը չէ որ

խնդրոյ նիւթ կ'ընենք, այնուհանդերձ առիթն է որ անդրադառնանք ներումի հետ կապ ունեցող սխալ հասկացողութեան մը՝ որ բաւական ընդարձակ գետին գրաւած է մաքերու մէջ: Ներկայիս սովորաբար փրկաւորուածը և ուզուածը ներողին բարեացակամութիւնն է, առանց նկատի ունենալու ներում խնդրողի մաքի և հոգիի վիճակը: Բանաւոր արարածի մը ներում կը շնորհուի երբ խնդրէ զայն, և իր խնդրանքին համապատասխան գործ ցոյց տայ: Ասկէ տարբեր պայմաններով ներում շնորհելը, այսինքն առանց զղջումի և առանց ուզուած ըլլալու ներելը կամ ենթական անշունչ առարկայի տեղ դնել է, կամ անբան կենդանիի, և կամ, Աւետարանի խկ բացատրութեամբ, մարգարիտները խոգերու առջև նետել: Աւետարանի մէջ երեք գեղեցիկ առակներ կան այս զաղափարները յստակ կերպով արտայայտող: Առաջին երկուքը կորսուած դրամի և կորսուած ոչխարի առակներն են: Երկուքն ալ — դրամը և ոչխարը — զուրկ են գիտակցութենէ և միջոցներէ իրենց տիրոջ վերադառնալու. հետեաբար տէրն է որ զանոնք կը փնտռէ, կը գտնէ և իրենց պատկանած տեղը կը վերադարձնէ: Ասոնք կը խորհրդանշեն հեթանոսները և տգիտութեան խաւարին մէջ անբանացածները, զոր Աստուած Ի՛նք կը փնտռէ և կը գտնէ: Իսկ երրորդ պարագային կորսուածը որդիկն է, այսինքն ընտանիքին մէկ անդամը, որ կը հեռանայ տունէն կամաւորաբար, և ազատ ընտրութեան աստուածատուր շնորհքը ի գործ գնելով: Այս պարագային հայրը չէ որ կը փնտռէ որդին, որովհետեւ գիտէր թէ իր ճիգերը ի զուր պիտի անցնէին, քանի որ նախ քան տղուն տունէն հեռանալը իր հայրական բուրի համոզիչ միջոցները սպառած էր արդէն: Իրեւ փորձառու և խմտառուն հայր գիտէր թէ որքան ատեն որ տղան զգլխանք մը ունէր իր տունը մօռնալու, երբեք պիտի չվերադառնար: Երբ իր ունեցածը սպառէր և վատնելու ոչինչ մնար, կամ պիտի մեռնէր կամ վերադառնար. և հայրը գիտէր նոյնպէս որ ապրելու պապակը աւելի զօրաւոր է մարդոց մէջ քան մեռնելու տենչը: Ուրեմն հայրը իր տղան փնտռելու ժամավաճառ չըլլար. այլ աչքը ճամբուն, անձ-



կանօք կը սպասէ անոր դարձին: Որդին է որ կ'առնէ նախաձեռնութիւնը: Ան է որ ինքնիշխան կուգայ, կ'որոշէ և կը վերահասանայ իր հօր տունը: Որդին է որ լալահառաջ զղջում կը յայտնէ և ներում կը խնդրէ. հայրը կը շնորհէ սիրով իր ուզածը և աւելին: Հետեւաբար անիմաստ է ներել և ընդունիլ մէկը որ ներում չէ ուզած և տուն չէ եկած. անիմաստ է ներել մէկու մը որ ներումի արժանի ոչ մէկ քայլ առած է. իսկ ներել մէկու մը որ դեռ կը շարունակէ իր նախկին ճամբան, պարզապէս սրբութիւն մը — ներումը արդարեւ սուրբ բան մըն է — դարձեալ Աւետարանի բացատրութեամբ՝ չունենու առջև նետել է:

«Զգեցոյ ինձ զպատմութեան զառաջին զոր մեկնացայ մեղօք» — Աղօթասացը կը շարունակէ բանիլ Անառակի առակին վրայ: Նախորդ պաշտամանքով խնդրած էր իր երկնաւոր Հօր սիրոյն մէջ վերահաստատուիլ: Իսկ այսու կ'աղաչէ որ իրեն շնորհուի որդիական պատիւը՝ որմէ կը զրկուի մարդ մեղքով:

Պատմութեան ի հնումն ազնուական դասակարգի զգեստ էր. կը գործածէին զայն իշխաններ և մեծամեծներ, կարծես ըսել ուզելու համար որ իրենք օժտուած են իշխանական ճոխութեամբ մը՝ որմէ զուրկ են հասարակ դասակարգի մարդերը: Արդարեւ անառակը իր հօր տունէն մեկնած էր գեղեցիկ պատմութեանով մը. վերադարձած էր գրգռեալներով: Հայրը, հաստատելու համար թէ իր վերադարձող որդին վերստին կը բարձրացնէ անոր նախկին իշխանական պատիւին, կը հրամայէ հազցնել անոր նոր պատմութեան մը: Պատմութեանը խորհրդանշան է աստուածային շնորհաց, որով կը պնէ Աստուած մարդը՝ երբ սա կ'արժանանայ որդեգրութեան պատիւին:

«Առաջին պատմութեանը զոր մեղքով մերկացած» կը խոստովանի աղօթասացը, ուրիշ բան չէ եթէ ոչ, այս պարագային, շնորհաց այն վիճակը՝ որով կ'օժտուին բոլոր քրիստոնեաներ իրենց մկրտութեամբ: Արդարեւ Աստուած հաւատացող, ապաշխարող և մկրտուող ամէն մէկ մարդը կ'օժտէ որդեգրութեան գեղեցիկ պատմութեանով: Այդ պատմութեանը մեր ուսերուն վրայ կը մնայ այնքան ատեն որ մենք կամաւորա-

պէս զայն մէկդի չնետենք: Դժբախտ իրողութիւնը սակայն այն է որ գրեթէ բոլոր քրիստոնեաներ, քանի որ իրենց մանուկութեան և անգլիտութեան տարիքին մէջ ընդունած են այս պատմութեանը, առհասարակ գրեթէ զաղափար չունին անոր գեղեցիկութեան և արժէքին, ինչպէս չունեցաւ անառակը իր ունեցածին: Եւ դժբախտ իրականութիւնն այն է որ մկրտեալներու մեծ մասը, ուշ կամ կանուխ, կը մերկանայ մկրտութեան այդ շնորհաց պատմութեանէն, և ինքզինք զուրս կը նետէ իր երկնաւոր Հօր տունէն, իրական և անտեսանելի եկեղեցիէն, երբեմնեւ տեսանելի եկեղեցիէն: Սակայն Աստուծոյ անսահման սէրը իր անհուն երկայնատեմութեամբ կը սպասէ անոնց տուն դարձին: Երանի վերադարձողին և ժամանակին վերադարձողին, որովհետեւ պիտի գտնէ գրկաբաց հայր մը որ պիտի ընդունի զինքը «որպէս զանառակ որդի» և համբոյրով մը պիտի հագուեցնէ անոր գեղեցիկ պատմութեանը զոր մերկացած էր մեղքով: Բայց վա՛յ չվերադարձողին, և վա՛յ ուշացողին. որովհետեւ կրնայ ըլլալ որ երբ գայ դռները գոց գտնէ. և ներսէն լսէ խիստ ձայնը որ կ'ըսէ. «Ծշմարիտ կ'ըսեմ որ ձեզ չեմ ճանչնար»:

Ուրեմն աղօթենք մեր շնորհալի հայրապետին հետ իւրացնելով իր աղօթքը և մեր խօսած լեզուին վերածելով զայն.

«Հայր երկնաւոր, Աստուած նւարիս, Որ դիպեցիր սիրելի Որդիդ փնտռելու կորուսած ոչխար. Մեղանչեցի երկինքի դէմ եւ Քու առջեւ. Ընդունէ զիս անառակ որդիին պէս, եւ հազցուր ինձի իմ առաջին պատմութեան, Որմէ մեկնացայ մեղքերու պատճառով. «Եւ ողորմէ Քու արարածներդ, եւ ինձի՝ ծանր մեղաւորիս»:

(4)

ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ





## ԳԱՐՈՒՆ Է

Սիրքս յորդո՛ւն է այնպէս, գարունի մէջ, գարնան պէս ...:

Բայց այս գիշեր՝ ամայի՛, զերթ հով-նոնի ջրափին  
Սիրսն իր գրկած սէր-բամբիշ, որուն աչքերն ու հոգին  
Գիշերներուն կը փամեն խորունկ քախիծը կարծես ...:

Սիրքս յորդո՛ւն է այնպէս, գարունի մէջ, գարնան պէս:

Ան կ'արիւնի կառօճէն իր սէրերուն աբեղայ.  
Պարման օրեր, դառնութիւն, տեսիլք, ընկեր, անցեալէս  
Կ'ապրին անայց գիշերներ՝ գորշ վրանի սակ հիմա ...:

Սիրքս յորդո՛ւն է այնպէս ...:

Եւ ինքզինքէն ան սակաւ  
Կը պարպրի գարնան պէս, որ աշունի շուփերուն  
Կը զգայ կախուիլն իր վերեւ, ցուրտ ու կաշուն ... Եւ որուն  
Գուցէ փչե՛ր մօտեցան բաժնեղու ցուն իր անբաւ ...:

Գարունի մէջ, գարնան պէս, սի՛րս իմ, ծաղկե՛, պարպրե՛ ...

Ու թող սէրերդ մէկ-մէկ բաժակիդ յորդ օրքունքէն  
Կախուի՛ն՝ ամուր քեզ գրկած բեկումներուդ մէջ ամէն,  
Որ դուն մընաս միշտ լեցուն, ու միշտ ծաղկուն ... գարո՛ւն է:

ՇԷՆ - Մ Ս. Է





## ԳԱՐՄԱԳԼՈՒԹՅՈՒՆ

Զարեհի յիշատակին

Գուցակութիւնն Մեծ Քերթողին,  
Կատարուած է հիմա արդէն .  
Մարդիկ ահա Աստու Լուսին  
«Միջոցին մէջ կը շրջապահեն»:

Պիտի այլես աւելցրաքե՛սին,  
Դառնայ Մարդը իշխան ու սէր .  
Տիրենք շուտով պիտի՝ Հրաշին,  
Պիտի՝ հոն երգեն նոր Զարեհներ :

Այս նոր Տարին քող որ բանայ,  
Իմաստութեան դրոները լայն .  
Զարը յաւէտ անէանայ .  
Խաղաղութիւն մարդոց համայն :

\*\*\*

Յանկ Սերմերն ու անցիր անայլայլ,  
Մի վախճար՝ կըրնան կորսնչիլ ի սպառ .  
Օր մը պիտի՝ ծըլին, անին ու մեծնան,  
Բերքը վայելէ շամբորդ մ'անպահառ :

Շամբորդ մ'որ գուցէ անունդ չըլիւք,  
Բայց «Սերմանողին ողորմի» քսէ,  
Երբ վաղուց արդէն դարձեր ես փոփ,  
Ի՛նչ գիտես՝ փոփոգ պիտի չըլլսք :

Ի՛նչ գիտես Արեւն պիտի չիմանայ,  
Լոյսը՝ փոփին երանի չըսայ  
Եւ անոր զըրկէ համբոյր ու ողջոյն .  
Փոփոգ հըրնուանքէն պիտի չըխայսայ :

Մ. ՄԱՆՈՒԿԵՍՆ



ՀԱՅՐԵՆՈՒԹՅՈՒՆ

## ԿՈԹՈՂԸ

Ոտքերիս տակ, խորունկ ծորում գալարում է մի բարակ գետ,  
Զորի եզրին ինձ է նայում հնադարեան մի ձեռակերտ:

Կիսաւեր է այդ կոթողը, չկայ հակառակ գեղեցիկ,  
Ցած են թափուել, փշրուել են սիւներն ամուր, վեհ ու վերծիգ,  
Եւ ամրաշէն պատերի մէջ ժամանակի ձեռքը քանդիչ  
Անդունդ - ճեղքեր է բաց արել, բաժանել է բարը քարից,  
Բայց հիմքը կայ, հիմքի վրայ՝ հէքեաթային ու հաստատուն՝  
Բարձրանում է մարմնացած մի փառայեղ գեղեցկութիւն:

Փա՛ռք քո հոգուն, փա՛ռք քո մտքին, ժողովուրդ իմ մեծաբանքար,  
Քո հանճարն է փառաբանում այս կերտուածքի ամէն մի քար:

Այս վայրկեանին հոգիս լցուած է անպատում հպարտութեամբ,  
Եւ յոյզերիս էլ չի իջնի վհատութեան ոչ մի սեւ ամպ.

Դո՛ւք է թոռան ծոռան ծոռն եմ ես վարպետի այն անանուն,  
Որ քարերից հիւսել է այս հէքեաթն անմեռ ու հմայուն,  
Եւ ծորերում, ժայռի զլխին, քաղաքներում հնամենի  
Կերտել է յոյս - կոթողների մի աստղախումբ, որ մահ չունի:

Փա՛ռք քեզ, վարպետ իմ նախահայր, փառք քո գործին լուսապայծառ,  
Դու իմ հոգում միշտ կը մնաս, որպէս ծիծղուն, ծաղկավառ ծառ:



## ԳԱՐՈՒՆ

Թող քո յոյսը չսասանի,  
Իմ անուշիկ, իմ կակաչ,  
Զմեռն ինչքան դաժան լինի՝  
Կգայ գարունը կանաչ:

Զմեռն ինչքան ահեղ լինի,  
Հողմը ոռնայ՝ վայրաբար,  
Չեն ցամաքի իմ հայրենի  
Աղբիւրները անսպառ:

Թող ժախտող միշտ վառ լինի,  
Խինդը՝ կարմիր մի կակաչ,  
Բուրը ինչքան էլ մոլեգնի՝  
Կգայ գարունը կանաչ:



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Բ) — «ՄԱՍԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

Երբ նարեկացին իրեն հակադրում է Աստծուն և այդ ժամանակ ամէն բացասական բան վերագրում է իրեն, իսկ ամէն դրական բան նրան, յաճախ ստացւում է այնպէս, որ Աստծուն վերագրած այդ դրական յատկութիւններից մի խոշոր մասը կարող էին և մարդուն յատուկ լինել: Միւս կողմից էլ իր մէջ մարդկային բացասական գծերը բացայայտելով ու ժխտելով՝ նարեկացին ինքնըստինքեան ընթերցողի մէջ առաջացնում է դրանց հակադիր՝ դրականի պատկերացումը:

Նարեկացին իր լիրիկական հերոսի կերպարի մէջ միաժամանակ ներկայացնելով դրականի ու բացասականի հակասականութիւնը՝ ձգտում է, որ այն լուծուի յօգուտ դրականի: Նրա Մատեանի բուն ոգին, իրօք, մարդու համար լաւ վիճակի գոյութեան խիզախ պահանջն է և ակնկալութիւնը:

Նարեկացին ունի մարդու մէջ մարդկային իր իղէալ-պատկերը, ինչպէս և մարդու հասարակական կեցութեան դրականի պատկերացումը: Բայց նա իր շրջանի իրականութեան մէջ այդ բոլորը չի գտնում. մարդու մասին նրա պատկերացումները հակասութեան մէջ են մտնում իրականութեան հետ: Նա սիրում է մարդուն և ուզում է, որ ամէն տեսակէտից նա լաւ լինի, որովհետեւ մարդը արժանի է դրան և լաւ լինելու համար է ծնւած, բայց կեանքի պայմանները վատացնում են նրան: Իրօք, ինչ պիտի լինէր մարդը, բայց ինչպիսին է իրականութեան մէջ: Մատեանում մի տեղ նարեկացին այդ գեղեցիկ կերպով պատկերում է այսպէս.

Ահա ի յոսս օսնողական կրողաց

Երկուց միակցող խորհրդականաց,  
Ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար,

Իբր ի բռնիս քեւոց կրկնաբար՝ բազկաց  
վերասնողաց

Յաւառնին հայրենական հայել,

Ով յիմար, զիա՞րդ Բեզէն կորացար յերկիր,

Զասեացս միշտ հոգացեալ դիպուածս,  
Ընդ ցիւսս անապատականս համարեցար:

(Բան 162. — Բ.)

Այնուհետեւ, շարունակում է նարեկացին, մարդու բոլորակ գլուխը իբրեւ բազմաբերան ճրագ է մարմնի աշտանակի վրայ հաստատուել, որպէսզի լոյս տայ: Շատ ուրիշ արժանաւորութիւններ էլ յատկացւած են մարդուն, բայց արդարացնում է մարդը իր ունեցած այդ բոլոր շնորհները. ոչ, չի արդարացնում, — ասում է բանաստեղծը, — որովհետեւ բոլորովին մաքուր և դրական հոգեկան յատկութիւններով ծնւած լինելով՝ նա իրականութեան մէջ գոհակամ է և անազնիւ է դառնում: Նարեկացին մեծագոյն գարշանք և ատելութիւն է տածում մարդկային հոգու բոլոր տեսակի տգեղութիւնների նկատմամբ և մեծագոյն դայրոյթով նշաւակում «նաւախտհուրդ արեւն» ու «չաւախտս բերանները»: Այս մտաւոր «Ողբերգութեան Մատեան»ի գեղարուեստական մեծութիւնը պայմանաւորող կողմերից մէկն է անշուշտ:

Նարեկացին իր Մատեանում շատ անգամ կոնկրետ նկարագրերով կեանքի հանգամանքների նկատմամբ իր քննադատական վերաբերմունքը և դժգոհութիւնն է արտայայտում: Նա անշուշտ ողբերգութիւն է ապրում իր ժամանակ ստեղծուած քաղաքական իրադրութեան պատճառով: Երբ նա գրում էր Մատեանը, ինչպէս վերևում ասացինք, Արծրունիների թագաւորութիւնն իր անկման շրջանն էր ապրում, ուժեղացել էր բիւզանդացիների և հարեան միւսլիմանական իշխանութիւնների ճնշումը, ամենախաղաղ պահերին անգամ այդ իշխանութիւնների հետ մանր ընդհարումներ էին տեղի ունենում, իսկ հասարակութեան ներսում ֆեոդալական ուժակցիան ուժեղ հալածանքներ էր սկսել գիւղացիական ազանդաւորութեան դէմ: Հասարակութեան մէջ ապագայի նկատմամբ հնարաւոր էր որ ստեղծուէր ճնշող անորոշութիւն, որի բնորոշ արտայայտութիւնը կարող են համարուել նարեկացու հետեւեալ խօսքերը.

Տարր ժամանակիս յանգեից,

Անցեալն անյայտ

Եւ ապառնին կարծողական...:

(Բան 26. — Գ.)



Այսպիսի մի վիճակ բնականաբար այն չըջանի խորթափանց մարդկանց մէջ պիտի առաջացնէր հոգեկան անհանգստութիւն և որոշ ահի զգացմունք՝ սպասուող ապագայ անակնկալներէր։ Սրան ապացոյց կարող է լինել մանաւանդ այն, որ նարեկացին շատ դէպքում էլ իր հոգեկան անհանգստութիւնը, ահն ու երկիւղը արտայայտում է բացարձակ ձեռք՝ ուղղակի ու իրականութեան և յարաբերութիւնների մէջ պատկերելով իրեն։

Երբ զինուոր հետանեմ, մահու ական ունիմ.  
Երբ պատգամաւոր՝ խսուրեմ.  
Երբ մասեցադէս՝ մուրհակի կոստեմ.  
Երբ օրինաւոր՝ անիմից.  
Երբ աւետարանական՝ փռույ ոսիցն քօրա-  
Երբ բարեկրօն՝ յանդիմանութեան. [վեղոյ].  
Երբ սպառում՝ կսկիման...  
Երբ ձեռն համբարձեալ՝ կոտման.  
Երբ փոքր ինչ խոսուիլ՝ սարսեմ.  
Երբ սակաւ մի բնդիւն՝ քնդոսիմ.  
Երբ ի խախտանա ընդլեաց հրաւիրիմ՝ դու-  
զամ...

(Թան Ի.Գ. — Գ.)

Անգամ խնջոյքի հրաւիրուելը բանաստեղծին սարսափ է պատճառում, այնքան նա մարդկանցից ոչ մի լաւ բան չի սպասում։ Այնքան մեծ է ահը, որ երբեմն նրան թւում է, թէ կեանքում իրեն ոչ մի փրկութիւն չկայ։ Եթէ ինքը բզկտող արջերից մի կերպ ազատուի, միևնոյն է, արնածաւառ մօժեղներն իրեն պիտի պատահեն։ Եթէ պատահաբար մի տեղ անհոգ նստի, իսկայն չքոտի մօղուկներն կրակի ցնցուղի պէս իր շուրջը պիտի մաղուեն։ Ուրեմն իրեն, իբրև մարդու, թէ՛ ուժեղներից և թէ՛ թոյլերից ամէն քայլափոխին վտանգ է սպասուում։

Հետաքրքրական է, որ վերևում բերուած հատուածի ոգով տողեր հանդիպում են և Արովեանի «Թուրքի աղջիկը» պատմուածքում։ Պատմուածքի սկզբներում Արովեանը գրում է. «Ամէն տեղ սոս փոխելիս՝ ամէն մէկ շունչ քաշելիս՝ էնպէս էի կարծում, թէ հազար թուր սիրտս են խրում, հազար ձեռ զլխիս բռնցկում, հազար թշնամի ետեկիցս վազում, երկինք ու երկիր զլխիս փուլ գալիս՝ որ ինձ տակով անեն։ ... որ կուտակալիցը, ես նախարա-

րիցը (մինիստրիցը) մէկ թուղթ էր գալիս, որ կառավարութիւնիցը (գիրեկցիցը) ստորոժը գիրքը կոնստակին աչքիս չէր երևում, էնպէս էի սարսափում, կարծում թէ էս ա, իմ վերջի օրը հասել, մօտեցել ա... ինձ պէտք է տանեն սաղ-սաղ թաղեն, ես կախ տան։ Երեւակայութիւնը մարդիս ո՛ր դժօխքը չի տանիլ, եղ բերիլ»։ Սա, ի հարկէ, չպէտք է նարեկացուց կրած աղ-ղեցութեան արդիւնք համարել. այս նմանութիւնը, անկասկած, ստեղծուել է ինքնուրոյնաբար։ Հասկանալի է, որ Արովեանի մօտ նարեկացիական նման ապրումներ առաջ են եկել բնականաբար իր ժամանակի քաղաքական հանգամանքների (ցարական ուսակցիայի) պատճառով։ Տուեալ դէպքում կարեւորն այն է, որ Արովեանի «Թուրքի աղջիկը» պատմուածքում նշուած փաստը կարող է լաւագոյն ապացոյցներից մէկը հանդիսանալ նարեկացու ապրումների՝ իրականութեան հետ կապուած լինելուն։

Ժամանակի կեանքի քաղաքական պայմաններից բացի, նարեկացու ստեղծագործութեան վրայ մեծ ազդեցութիւն են թուել նաև ժողովրդի կեանքի սոցիալական հանգամանքները։ Նրան ամենաուժեղ վիշտ ու թախիժ է պատճառել մարդկանց զբրկանքով լի կեանքը, թշուառութիւնն ու աղքատութիւնը։ Բացի այն, որ նարեկացու ամբողջ ապրումների բնոյթից երևում է նրանց սոցիալական էութիւնը, այլև, իրօք, շատ են զրա նաև ուղղակի արտայայտութիւնները. օրինակ մի տեղ փոխաբերաբար պատկերելով իրեն իբր այնպիսի մէկը, որ գանձ է վատնել և մեծ պարտքերի տակ ընկել, գրում է.

Անբարեխօս կապեալ ի պահեստ գառն ար-  
գելանի,  
Հեծումն եւ վաւսակ ցաւոց ճաւակեալ յան-  
ցեոյլ բանսի,  
Անապաւեն ճանչեալ անբուակ կամ ողոր-  
մելի,  
Այլ յեղանակ ինձ ողբականաց ասուուս կրն-  
եցի,  
Փոխադրեցի սովին բարբառով կոծ կսկծելի...  
Ազգասուրբան հնոց յամենուս մասանց մեր-  
կի,  
Անպասուպար բռուառ վճանգեալ արհի ի  
գրաւի,



Տարակուսեալ հոգւով ապաւնորհ այր ի  
վրիպակի,  
Անխնամելի հայցմամբ դասասանն յինեկ  
պահանջի:

(Բան ԻԶ. - Բ.)

Բայց հասարակական կեանքի սրանից  
աւելի լայն քննադատական պատկեր կայ  
Մատենադարանում: Նարեկացին չի բաւականա-  
նում միայն «ամէն կողմից մրրկող աղքա-  
տութեան հնոցի» մասին խորհրդածելով,  
նա միջնադարեան մեր գրողներից առա-  
ջինն է, որ մեծ համարձակութեամբ և ճշ-  
գորէն մերկացրել է ժամանակի մարդկանց  
հասարակականօրէն արտայայտուող բնորոշ  
թերութիւնները: Նա հաւասարապէս քնն-  
նադատում է մարդկանց, անկախ նրանց  
դասակարգային պատկանելիութիւնից: Նա  
գիպուկ կերպով օրակուսներ է տալիս, ու-  
րակուսներ, որոնք միանգամայն անխնայ  
բացայայտում են նրանց հիմնական արատ-  
ները: Դրանով նա միաժամանակ գծում է  
Ժ. դարի հայ հասարակութեան դանազան  
խաւերի սոցիալական-քարոյական բնութա-  
գիրը և ոչ միայն հայ հասարակութեան,  
նարեկացին իր մերկացումներով փաստօրէն  
դուրս է գալիս հայ հասարակութեան սահ-  
մաններից: Նրա գիտողութեան տեսադաշտը  
չատ լայն է և կարելի է ասել ընդգրկում  
է իր ժամանակի բոլոր ծանօթ հասարա-  
կութիւնները՝ խորապէս ըմբռնած լինելով  
նրանց ողջ կենսափորձը: Հետեւել հաւ-  
ուածը լիովին ապացուցում է այս բոլորը:

Աղօթական անխախտ,  
Բեմական ստորնաբաւ,  
Քահանայ անկնդրուկ,  
Օրինական աննուէր,  
Դպիր կէսամբեալ,  
Իմաստակ խելագար,  
Ճարտասան աննոռնի...:  
Մասակարար կամակոր,  
Խորհրդակից նենգաւոր,  
Բարեկամ հասուածեալ,  
Հազարապէս գողամիս,  
Մերձաւոր կծծի,  
Բաշխող ժլատ,  
Վերաստուչ կարկամ...:  
Վանառական վասնիչ,  
Շահաւար շուայտեալ,

Պատեօնեայ արբեցող,  
Դանձուց ուսիկան երկմիս,  
Պատգամաւոր բանարկու,  
Դոճապան քնեաժ,  
Աղբաս հայաւս,  
Մեծասուն ժխտող:  
Դիւանապէս անօրէն,  
Պահապան մասնիչ,  
Բնակակից շարախօս,  
Սուրհանդակ անժաման,  
Թղթաբեր պարտաւոր,  
Աւաքեալ խռովարար,  
Միջնորդ անխմաստ:  
Արքայ արաւած,  
Թագաւոր քարմասար,  
Կայսր ոգեկործան,  
Իշխան սիրադաւ,  
Զօրավար գրկող,  
Դասաւոր ակնառու,  
Թաւիկ ինքնագործ:

(Բան ԻԶ. - Բ.)

Պոէմի ընդհանուր ոճին համապատաս-  
խան՝ այստեղ դարձեալ նարեկացին իբր թէ  
իր արարքների ու բնաւորութեան բացա-  
սական կողմերն է թուարկում. բայց հենց  
այստեղից առաւել ցայտուն կերպով երե-  
ւում է այն, որ նա առհասարակ իր ամբող-  
ջքին ու «թերութիւնները» մատնանշելիս՝  
գերազանցապէս դրանք վերցնում է կոն-  
կրետ հասարակական իրականութիւնից, ու-  
րով և հնարաւոր է դառնում նրա ստեղ-  
ծագործութեամբ՝ ժամանակաշրջանի լայն  
պատկերը կազմել: Նարեկացու գործը ան-  
շուշտ ունի խոշոր ճանաչողական արժէք:

Նարեկացին հանդէս բերելով քննադա-  
տելու նշանակալից համարձակութիւն, միա-  
ժամանակ խորաթափանցութեամբ և նուրբ  
գիտողականութեամբ վեր է հանում իր ժա-  
մանակի տուեալ գիրքի և պաշտօնի անձ-  
նաւորութեան արատներից ամենաէականը:  
Նա մի բառով օրակելով՝ սպառիչ կերպով  
ցոյց է տալիս այն հակասութիւնը, որ կայ  
ժամանակաշրջանի տարրեր խաւի ու գիրքի  
մարդկանց հասարակական կոչման և կոն-  
կրետ գործունէութեան միջև, մարդկանց  
պաշտօնական պարտականութեան և իրա-  
կան արարքների կամ վարքագծի միջև:  
Պարզ երևում է նաև, թէ ինչպէս նարե-



կացին իր ժամանակի շրջագատի երկրները քաղաքական իրադրությունները բերանել է շատ ճիշդ. որքան լաւ է ասուած՝ «թագաւոր թարմատար», «կայսր ոգեկործան», չէ՞ որ նրա ժամանակ, իրօք, շատ կային չնչին աւելորդ թագաւորներ ոչ միայն Հայաստանում, այլև շրջագատի երկրներում: Եայտնի բան է, թէ ինչքան շատ մանր թագաւորութիւններ էին անընդհատ ծագում ու ոչնչանում Սալլիսթասի նուաճած նախկին երկրամասերում, և թէ բիւզանդական կայսրները որքան եղեռն էին գործում դաւանաբանական վէճերի քողի տակ: Մի այլ տեղ խօսելով այն մասին, որ երկրի վրայ ապրողները ոչ ոքի չի կարելի դիմել փրկութեան համար, բանաստեղծը յիշատակում է նաև թագաւորներին. թագաւորներին ինչպէ՞ս կարելի է դիմել փրկութեան համար, ասում է նա, երբ նրանք «զմահացուցանին միշտ արուեստաւորին քան զկենդանործելն» (Բան ԾԲ. — Ա.):

Հասկանալի է, որ իշխող խաւերի կեանքում գործած խժգժութիւնները նոյնպէս պատճառ են հանգիստացել նարեկացու ապրած ողբերգութեանը:

Գիւղացիական հոծ մասսաների կեանքի դժուարին պայմաններից առաջացած վշտին ու թախծին իր ստեղծագործութեան մէջ գեղարուեստական ուժեղ արտայայտութիւն տալու հետ միասին, նարեկացին նոյնքան ուժեղ արտայայտութիւն է տուել այդ պայմանների դէմ նրա բողոքին ու ցասման՝ նոյն ձևով դրանք ընդհանրացնելով և մարմնաւորելով իր անձնական ապրումների ու խոհերի մէջ:

Նարեկացու ողբերգութիւնը յոռեհասկան ողբասացութիւն չէ. նրա պոէմի բովանդակութեան զարգացման ընթացքից երևաց, թէ ինչպէս այդ ողբերգութիւնը վերջանում է լաւատեսական հեռանկարով: Եթէ նարեկացու ողբերգութեան բնորոշ կողմերից մէկը չլինէր աշխատաւորութեան (գիւղացիութեան) բողոքի արտայայտութիւնը, Թումանեանը նրան չէր համեմատի Աբովեանի հետ, նրա ողբը Աբովեանի ողբի հետ, գիտելով դրանք իբրև համարժէք երևոյթներ՝ չնայած նրանց բաժանող հարիւրաւոր տարիներին:

«Ողբերգութեան Մատենանում բանաստեղծը ոչ միայն աղաչում ու խնդրում է Աստուծոյ իր փրկութեան համար, այլև պահանջում է այդ ու պայքարում է դրա համար: Նա ստիքի խորքերից Աստուծոյ հետ խօսելով, մի յամառ հետեւողական թեմայով, մի վերջին հաշիւով Աստուծոյ, որ նա վերջին հաշիւով նոյնիսկ պարտաւոր է իրեն փրկել կորստից: Բայց այս պարզ նկատելու համար անհրաժեշտ է դեռ նրա ողբերգութեան բովանդակութեան մի ուրիշ կողմի հետ ևս ծանօթանալ:

Նարեկացու պոէմի էական գծերից մէկն էլ կեանքի և մահուան հակասութիւնից յառաջացած ողբերգութիւնն է: Մարդը, լինելով մահկանացու, ձգտում է անմահութեան, բանաստեղծը դրան ուղղում է հասնել աստուածային էութեան միանալով: Բանաստեղծը թէպէտ ահաւոր բան է համարում այդ ձգտման մասին խօսելը, բայց հաւաստում է մարդու աստուածանալու հնարաւորութիւնը:

Եւ զոր անաւորն է ասել,  
Կարգեմ ասանդօր  
Յիւստակ եղեալ  
Մեծիդ երախեաց,  
Ասուած իսկ յինչ  
Ընտրութեամբ շնորհիւն...:

(Բան ԾԲ. — Բ.)

Կարո՞ղ է արդեօք մարդը միանալ տիեզերքի մեծութեանը, դառնալ տիեզերք. հնարաւոր է արդեօք մեծի և փոքրի, անվախճանի և վախճանականի աներեւակայիլի տարբերութիւնը և հակադրութիւնը յաղթահարել: Կարո՞ղ է արդեօք մարդը հասկանալ այդ տարբերութեան և հակադրութեան իմաստն ու գաղտնիքը՝ ահա հարցեր, որոնք անընդհատ տանջալից ապրումներ են յառաջացնում բանաստեղծի հոգում: Նրան մտատանջում են տիեզերական տեղծուածները. նա ուղղում է պըրպտել ու որոնել, ճանաչել բնութիւնը և հասկանալ կեանքի և մահուան գաղտնիքները, բայց զո՞ւր, ինչքան նա ձգտում է առաջ գնալ այդ նպատակին հասնելու ճանապարհով, այնքան նրան թւում է, թէ ինքը ետ է մղւում:



Եւ կերպ ի յառաջ դիմեալ՝  
Ոսկ ի վերջ կոյս յետահարեալ,  
Եւ զիսուրեամբ էիցն ի չէիցն միտ խաբեց-  
եալ,

Եւ ի մտացն մարտ՝ ի փոփոխեցն յաղբահա-  
եալ...

Եւ անաւորութիւն էին ընդ փոքրիկութիւն  
բնութեանս ընդհարեալ:

(Բան ԻԳ. — Բ.)

Եւ մտքի մղած մարտի մէջ անգամ  
փոքր երեւոյթներէց պարտութիւն կրած լի-  
նելը և «էի» ահաւոր մեծութեան հետ  
մարդկային փոքրութեան ընդհարումը բա-  
նաստեղծիներ քնաշխարհում յառաջացնում  
են ամենատանջալից հակասութիւններ, ա-  
մենագոյն ապրումներ, նարեկացին՝ մեր  
վերածնութեան սկզբնաւորման շրջանի բա-  
նաստեղծը, Թաուստից, որը եւրոպական  
վերածնութեան շրջանում ստեղծուած լի-  
զենդի հերոսն է, շատ դարեր առաջ է տան-  
ջուել իրական աշխարհի երեւոյթները ճա-  
նաչելու համար, վերջնական ճշմարտու-  
թեան հասնելու համար: Նա թէպէտ ձգ-  
տում է վերջնականին, բայց և հասկանում  
է, որ դրան անհնար է հասնել:

Միտ ուսանիմ եւ երբեք

ի նեմարտութիւն զիսուրեան ոչ հասանեմ.

(Բան 2Ա. — Բ.)

Խոստովանում է նա: Սակայն այս խոստու-  
վանութիւնը նրան հոգեպէս բնաւ չի թի-  
թեացնում. նա չի հաշտուում մարդուն այդ  
անկարողութեան հետ և դրա համար երե-  
ւոյթների էութեան, վերջնական ճշմար-  
տութեան հասնելու պայքարում կրած պար-  
տութիւնը նրա մէջ երբեմն այնպիսի մոռալ  
տրամագրութիւն է յառաջացնում, որ հա-  
ւասար է մահուան գոտնութեան ճաշակ-  
ման.

Ձմացս արագեալ զրեւս յերեւոյր իրին ոչ  
հասի,  
Ձուշին պարտութիւն յանվարեկեացն բաժակ  
բարկութեան ի ձեռն իմ առի,  
Ըզարտամութիւն սարակուսանացս իբր նա-  
շակումն մահու արբի:

(Բան ԻԶ. — Բ.)

Այս շատ գեղեցիկ, ուժեղ ու բնորոշ

տողերը շատ բան են ասում նաեւ նարեկ-  
կումարտայայտութիւն գտած՝ բանաստեղծի  
փիլիսոփայական խոհերի մասին: Պոէմում  
մի այլ տեղ էլ նարեկացին ասում է, որ  
իր էութիւնը յուզում են մարտի կրկնակ  
զրգիռները, ներհակ շարժումներն ու զբանց  
կուտակած խոռովութիւնները և իր բոլոր  
խորհուրդները սրով ու զբաժնով սպառա-  
զինուած ճակատ ճակատի գալով ընդհար-  
ւում են՝ մահուան գերի դարձնելով իրեն:  
Չնայած ինքը ուժգին վազել է ուզում,  
բայց ընկնում է սաստկապէս, ուզում է  
ամբողջ մնալ, բայց մանրուելով խորտակ-  
ւում է, ուստի խորին վշտով բացագան-  
ջում է.

Եւ ես մահացայ կենացն

Եւ կենդանացայ կորսեանն:

(Բան ԾԵ. — Գ.)

Պոէմի բովանդակութիւնից տեսանք,  
որ լինում են ծանր պահեր, երբ բանաս-  
տեղծի ապրելու յոյսի լարը կտրւում է,  
բայց հենց դրան անմիջապէս հետեւում է  
ցասումնալից սթափումը. նա երբեք չի  
հաշտուում այն մտքի հետ, որ ինքը «մի-  
ռել է կեանքի համար ու կենդանացել է  
կորստեան համար», որովհետեւ անբացա-  
տրելի է համարում դրա անհրաժեշտու-  
թիւնը: Նարեկացին սիրում է անմահու-  
թիւնը, իսկ այդ հաւատքը յառաջացնում  
է պայծառ տրամագրութիւն, որը մինչև  
իր վերջնական տիրապետութիւնը գեռ  
որոշ ժամանակ պայքարի մէջ՝ հակառակի  
հետ միասին, ալեկոծում է բանաստեղծի  
հոգին տանջալից հակասութիւնների պատ-  
ճառ հանդիսանալով:

Ընպանակ բեկու յերկոսին ձեռին,  
Մինն արեամբ եւ միւսն կարամբ.  
Երկու բուրանոց կայծակնաւորք,  
Մինն խնկով ու միւսն նենքեքի.  
Սկաւառակ կրկին կրաւորականք համոց,  
Մինն քաղցու եւ միւսն դառնութեամբ...  
Դեմ կրկնակի կերպից,  
Մինն սխեալ եւ միւսն ցասուցեալ.  
Կեսամբանք ընդ միոյ երկու,  
Մինն ասեացս եւ միւսն ապառնեացն.  
Ապաւինութիւնք կարծողականք,  
Մինն գոնե եւ միւսն բերեւս.



Ի մի բերան երկակի բարբառ,  
Մինն եղկուրիւն եւ միւսն խռովուրիւն.  
Երկուս ազգմունս ի միում սրտի,  
Մինն կեղակարծ յուսոյ եւ միւսն նեզրիս  
կորսւսեան...

Արեգակունց երկու ի երկուց ծայրից,  
Մինն խաւարի եւ միւսն կիզման:

(Բան Լ. — Բ.)

Շեքսպիրն անգամ անշուշտ կը նախանձէր մարդկային հոգու երկուութեան նման պատկերման: Այսպէս ուրեմն, որոշ պահեր լոյսն ու խաւարը, յոյսն ու անյուսութիւնը, տանջանքն ու երջանկութիւնը միաժամանակ ապրում են իրար հետ նրա հոգում: Բայց նարեկացին ձգտում է հոգու անդորրութեան, նա ուզում է երկութիւնից ազատուիլ՝ կողմերից լաւի յաղթանակին հասնելով, ուստի և նա «մոնչում է մինչև երկինք» (Թումանեանի արտայայտութիւնն է), կուռւմ է Աստծու հետ և պայքարում է այդ վիճակին հասնելու համար: Այժմ արդէն «Մատեան Ողբերգութեան» պոէմի բովանդակութեան այդ կողմի մասին պէտք է խօսել:

Ամերից առաջ պէտք է նկատել, որ բանաստեղծի՝ իր փրկութեան համար Աստծուն ուղղած աղաչանքների մէջ միաժամանակ զգացւում է նաև այդ բանի ուժեղ պահանջ. օրինակ՝ հետեւեալ հոյակապ հատուածում.

Մի ամէր, ոլորմած, ինձ որ տարժամ ի համառոսս երբի՝  
Անբոճակ ապանեմութեամբ ընդ անկասար ուղին հետեւել:

Մի մասուցաներ բաժակ դառնութեան ի ժամ ծարաւու.

Մի փակեր, գրած, իմ հանդէպ զյաջողուած հոգեւոր օգտիս.

Եւ մի իբր յանկարծադէպ հինից ասպասակ գիւեր մահուն ինձ պատահեցէ.

Մի տապ տօրոյն յանգաւտաս պահուն զարմասս հասեալ ցամաքեցուցէ,  
Եւ մի լուսնական դիպուածմ հասեալ զաղսնեոք վնասեցեն...

Մի հանգիստ մահ բերիցէ,  
Եւ մի ննջումն ի սասակումն յառաջեցէ,  
Մի բունն ինձ կորուստ լիցի,  
Եւ մի նիրհումն ապականութիւն գործեցէ.

Մի վախճանն անյարմար ի վերայ իմ արեւեսցէ,  
Եւ մի շնչոյս վերաճակութիւն ըմբռնեալ ի խոնարհ լցի:  
(Բան ԶԲ. — Զ.)

Նա լաւին ծարաւի է և չի ուզում, որ իրեն զրա փոխարէն «դառնութեան բաժակ» մատուցուի: Մարդու համար խիստ ողբերգական է նպատակին չհասած, ձեռնունայն «անվերջանալի ճամբով» ընթանալ: Նա պահանջում է, որ մարդը այդ վիճակից դուրս բերուի և նրա համար երջանկութեան դռները բացուեն, որ մարդը վերջ ի վերջոյ իր նպատակի ճանապարհին չարչարանքներ կրելով հասնի հոգու խաղաղութեան, հասնի երջանկաւէտ մի հանգրուան՝ ազատ ամէն տեսակ տանջալից կասկածներից և հակասութիւններից: Որքան բուռն է արտայայտուած բանաստեղծի տենչանքը և պահանջը՝ ազատուելու ամէն տեսակ դառն զգացմունքներից, սրտի մոլեգին խռովութիւններից, հոգու և մտքի խորտակող ալեկոծութիւններից, ասենք, հետեւեալ հատուածներում.

Հանգո զվաստակեալս ի բազմաճուխս աշխատութեան,

Բարձր զսաղմապ տարակուսանաց ոգոյս կործանման

Զգառնութիւնն ընդ վեցացն, զանձկութիւնն ընդ բուռնութեանցն...

Հասո զչարաչար հեծութիւն կորսականս խեղդման...

(Բան ԳԱ. — Դ.)

Կամ՝

Սասեսա՛ ի ձմեռն ամբոխեալ ալեաց ոգոյս ծփանաց,

Արձանացո՛ղ զծաւալս մոլեգին շարժման սրտիս խռովութեան,

Ընդոսնեա՛ ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման զյնդեալ մացս վայրագութիւն:

(Բան ՀԱ. — Դ.)

(Շարունակելի՛ 10)

Մ. ՄԿՐԵԱՆ





## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԱՐՈՒԵՍՏ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Այս տեսակետից վերին աստիճանի հզորի և հաղապարհառաջանալու է կատարել ուսն նշանակալի գիտնականի վ. վ. Ստասովը: Խօսքը նորից նրա հրատարակած ալբոմի մասին է, ուր հսկայական տեղ է յատկացվում մուսաբաղադակներին՝ ընդօրինակված տարբեր ժողովուրդների հին ու միջնադարեան ձեռագրերից: Ընթերցողն ինքն էլ կարող է, թե՛ այդ ժողովածուի և թե՛ տարբեր ժողովուրդների դարձվածքներին նույնպես ուրիշ ժողովածուների օգնությամբ, հետևել այստեղ առաջ քաշված հարցին: Այնուամենայնիվ, հարկ ենք համարում, անմիջական համեմատության նպատակով, կատարել որոշ մեջբերումներ: Ընդհանրապես նկատելի է, որ սլավոնական դարձվածքներում պահպանված համապատասխան նմուշները շատ քակի խօսու են, ուստի յիշենք ուստական, բուլղարական, սերբական մանրանկարչությունից մի քանի օրինակ:

Հիստորիան - ուստական միջնադարեան մանրանկարչության մուսաբաղադակներին մեկը իրենից ներկայացնում է մի քառակուսի դարձվածք՝ վարդանդապագային և համապատասխան այլ մատիվների յարաբարդումներով: Ներսեմ պատկերում են երկու թռչուններ՝ պարանոցներով փարված միմեանց: Ամբողջ մուսքի պատկերն, ըստ էության, արտայայտում է այդ ծնող - զոյգի միասնությունը:

Առաջին բարդ տեսք ունի Ռյադանի ժ.Զ. դարի ձեռագրերից մեկի մուսքը: Այս մուսքի հիմնական ուժերը երկու զոյգ էակներ են, ուր մի ծնող - զոյգը մարդագլուխ և թռչնամորմին է, իսկ միւսը թռչնագլուխ կամ զաղանագլուխ էակ,

որի մարմինը վեր է տնտած օձանման զալարների: Այդ երկու զոյգ ուժերի սիմետրիկ և համաշափ միասնականության բաղժություն է, որ պայմանավորել է այդ մուսքի գոյությունը ու իմաստը:

Է՛լ առաջին բարդ տեսք ունեցող մուսքապատկերներից յիշենք Ժ.Բ. դարում Նովգորոդում ընդօրինակված ուստական մի ձեռագրի մուսքապատկերը: Չմանկով մանրամասնությունների մեջ, որոնք էլեմենտ առ էլեմենտ արդեն բացատրված են վերևում, նկատենք, որ այս մուսքն ամբողջապես մի տոնային պատկեր է՝ իր ֆրատրիանների և ենթատոնների բարդ ու օրինաշափ յարաբարդություններով:

Ռուսական կուլտուրայի հին յուշարձանների մեջ յայտնի է մի «բրոնզե կամար», որը պատկանում է Ժ.Բ. դարին: Այս յուշարձանն էլ կարելի է դասել այն առարկաների թվին, որոնց միջոցով պատկերված են եղել տոնային սիմվոլները՝ իրենց ներքին սիմետրիկ կառուցվածքով: Յեռագայում, անշուշտ, այսպիսի ձևերն արդեն տարածված պիտի լինէին արաղիցիայի ուժով:

Կարևոր նշանակություն ունեն ուստական մանրանկարչության նաև այն մուսքապատկերները, որտեղ ցոյց է տրվում ընտանիքի յետագայ ձևի պոյթարը՝ նախորդ ձևի դեմ: Այդպիսիներից են, օրինակ, Նովգորոդի ձեռագրերից ընդօրինակված նմուշները: Այդտեղ նման մուսքերի մեջ երևում են մեկական տղամարդիկ, որոնք ամբողջ ուժով սեղմված են իրենցից աջ ու ձախ ձգված երեմի ֆրատրիանների կենդանակերպ նախնիների կոկորդները: Անշուշտ, այստեղ գործ ունենք տոնատիրական կարգերի քայքայ-



ման և հայրիշխանութեան, մասնաւոր սեփականութեան ու պետութեան զարգացման էպոստոյի արձագանգների հետ:

Նման նկարներ չառ կան նաև սերբական մանրանկարչութեան մէջ: Այդպիսիներից է, օրինակ, ժ.Գ. - ժ.Գ. դարերում ընդօրինակուած մի ձեռագրի մուտքագրակերը:

Խիստ մեծարժէք և հազուագիւտ նմուշներից մէկը պիտի համարել մոլդավո-վալախական մանրանկարչութեան նմուշներից մէկը:

Այս մուտքագրակերում ցոյց է տրուած մի ամբողջ տոհմի կերպարանքը՝ իր երկու հիմնական ֆրատրիաներով, որոնցից մէկը գտնուած է մուտքի մի կէտում, իսկ միւսը՝ միւս կէտում: Իւրաքանչիւր ֆրատրիայի ներսում նկարուած են չորսական ծնող-զոյգեր, որոնք և դրսևորում են տոհմային է՛լ աւելի փոքր միաւորների զաղափարը և նրանց փոխյարարերութիւնները: Ընդհանուր գծերով այս բարդ ու եղակի տեսարանն արդէն հասկանալի է:

Ահա թէ ինչպիսի տեսք են ունեցել հին զարդարուն մուտքերը ճարտարապետութեան մէջ, որոնց մնացուկներն այնքան առատօրէն երևան են գալիս մանրանկարչութեան բնագոտւում:

Մուտքագրակերների ներկայ ունեւնաւորութիւնը հնարաւորութիւն է ստեղծում հասկանալու ոչ միայն խորանների, այլև ճարտարապետական ծագում ունեցող այն միւս մասիվների էութիւնը, որոնց նախնական է ներկայ գլուխը:

Վերցնենք խորանները: Հենց ինքը խորան բառը, ըստ Հայկազեան բառարանի նշանակում է. «Վրան. տաղաւար. կազմած ի կառույ կամ ի մորթոյ՝ կառուցեալ ի բոցի՝ որպէս խուզ կամ տուն շարժական որոյ մեծն և բուն լինի զմբէթաւոր . . . իբր տաճար Աստուծոյ շարժական . . . եկեղեցի, և տաճար . . . Սեղանն կամ բնին ի մէջ տաճարի . . . Դիւան, զմբէթաւոր տառն խորհրդոց. դահլիճ արքունի . . . Խորշք տոմարական աղիւսակաց . . . »:

Մասնագէտներն այս հանգամանքի վրայ յաճախ են ուշադրութիւն դարձրել,

բայց և այնպէս խորանների ուսումնասիրութեան դարձը մնացել է խիստ անբաւարար վիճակում, տեղի տալով մի շարք ոչ ճիշդ եզրակացութիւնների:

Մենք արդէն առիթ ենք ունեցել նշելու, որ առանձին առանձին հանդիպող և վերելում քննուած բոլոր մասիվները խորաններում և մուտքերում երևան են գալիս միասին և տարբեր յարաբարդումներով: Քանի որ այդ մասիվներն արդէն իրենց մանրամասներով մեզ համար հասկանալի են, աւտի առանձնապէս դժուար է նաև նրանց այդ իւրայատուկ խտացումների էութեան հասկանալը:

Խորաններն էլ իրենց ձևերով տարբեր են լինում:

Նրանց բոլորի համար էլ բնորոշ են սիւները որոնց թիւը դարձեալ կայուն է:

Սիւները միացած են լինում միմեանց հետ քառակուսի, քառանկիւնի կամ կամայաւոր վերնամասերով: Այս վերջիններս ահա, իրենց զարդամասիվներով, մուտքերի նման, զարդարուեցան ամենահայտնի կոթողներից մէկն են:

Զպիտի կարծել, թէ այդ կոթողները քրիստոնէական ճարտարապետութեան ծրուէն են: Նրանք ևս, իրենց ծագումը, կապուած են հնագոյն ժամանակների հետ:

Գր. Տաթևացի, խօսելով բիւրիական խորանի մասին, որը պատրաստուած է, իբր թէ, Աստու կամքով և Մովսէսի նախաձեռնութեամբ, գրում է. «Սովոր էին զտաճարս կռցն զարդարել, վասնորոյ առաւել քան զնոսա զարդարէ զխորանն» (\*): Այս վկայութիւնը մի կողմից խորանային կուլտուրան կապում է հեթանոսական սրբավայրերի հետ, իսկ միւս կողմից՝ ցոյց է տալիս առաջինների զարգացման արուեստի աղիւցութիւնը վերջինների վրայ: Երկու առումով էլ այս վկայութիւնը մեզ համար կարեւոր է:

Իրենց զարդարութեամբ խորաններն էլ, մուտքերի նման, լինում են խիստ բազմազան, մերթ պարունակելով միանգամայն պարզագոյն զարդեր, մերթ էլ խիստ և հարուստ զարդերի կոմբինա-

(\*) Գր. Տաթևացի, Դիւք Հարցմանց, Կ. Պոլս, 1729, էջ 342:



ցիաներ: Այստեղ էլ յաճախ բախտավոր  
բացակայում են կենդանական մոտիվները՝  
իրենց տեղը զիջելով բուսական կամ «եր-  
կրաշափական» մոտիվներին: Այս վերջին-  
ներն էլ, անկախ իրենց արտաքինայէս  
պարզ թուացող տեսքից, կապուած են  
ամենարարդ հասկացողութիւնների հետ:  
Վերցնենք մի այդպիսի խորան՝ ընդօրի-  
նակելով № 8205 ձեռագրում պահպան-  
ուած մագաղաթեայ պահպանակից, որը  
կարող է պատկանել IX — X դարերին: Այդ  
խորանը մենք հրատարակում ենք մաս-  
նակի փոքրացումով և նրա գոյների պահ-  
պանմամբ: Դա մի եռասուն խորան է, որի  
վերին մասում, ամենաաջի ընկնող տե-  
քով, ցոյց է արուած մի մեծ շրջագիծ՝  
լցուած փոքրիկ շրջագծերով և խաչա-  
զարդերով:

Այդ խոշոր շրջագիծն ունի չորս գա-  
լարալթակ, որոնց օգնութեամբ նա միա-  
նուծ է իրեն ընդգրկող քառակուսի շր-  
ջանակի չորս կողմերի հետ: Մենք արդէն  
ծանօթ ենք նման զարդերի հատիկա-էլե-  
մենտային էութեան բոլոր մանրամաս-  
նութիւններին: Արդէն հասկանալի են  
նաե թէ՛ նրա ներսում պատկերուած փոք-  
րիկ շրջագծերն ու խաչազարդերը (հա-  
տիկա-էլեմենտային զարդեր) և թէ՛ նրան  
ընդգրկող շրջագծից դուրս գտնուող ծաղ-  
կապատկերները: Բացի դրանից, մենք  
արդէն ծանօթ ենք նաե այդպիսի մոտիվ-  
ների միջոցով դրսևորուած հասարակա-  
կան որոշ հասկացողութիւնների հետ: Այս  
տեսարանում իշխող լոյսի գաղափարը  
ժամանակին սերտօրէն առնչուած է եղել  
նաե տոհմի չորս օջախների իմաստի հետ:  
Այլ կերպ ասած, այստեղ խտացուած են  
բնութեան և հասարակութեան այն խոշոր  
ուժերի գաղափարները, որոնցմով տպրել  
ու զարգացել է տոհմը:

Բրիտանիական թանկանք, նոր իմաստ հա-  
ղորդելով քառաթև և քառալթակ զար-  
դերին, հատիկապատկերներին և միւսնե-  
րին, այդ բոլորն աշխատել է տարածել  
բոս իր գաղափարախօսութեան:

Եթէ նկատի առնենք այն հանգաման-  
քը, թէ ինչպէս ե՛ւ նախնիները, ե՛ւ խո-  
րանները կոնկրետ հասկացողութիւններ  
են եղել, ապա հեշտութեամբ կ'ըմբռնենք

նաե զարդարուն խորանների սկզբնական  
շրջանի անմիջական նշանակութիւնը:  
Դրանք իւրայատուկ կառուցներ են եղել,  
որոնք գտնուել են տոհմի, ցեղի, ֆրատ-  
րիաների և նման ուրիշ միաւորների ու-  
շադրութեան կենտրոնում: Այդպիսի շէն-  
քերն, ամենից առաջ, կապուած կը լինէին  
տոհմային ղեկավարների և ընդհանուր  
ղեկավարութեան հետ: Մարքսի կոնսպեկ-  
տից բերուած վկայութեան մէջ տեսանք,  
թէ ինչպէս տոհմի առաջնորդի բնակա-  
րանում պատկերուած է լինում նրա տե-  
տեմային գերըր: Այդպիսի տեսք պիտի  
աւնենային նաե այն շէնքերը կամ նրանց  
կարեւորագոյն մասերը, ուր տեղի էին  
աւնենում տոհմի ընդհանուր հարցերի  
քննութիւնները: Բացի դրանից, պիտի  
նկատի աւնենալ նաե մի ուրիշ հանգա-  
մանք: Յայտնի է, որ տոհմատիրական  
շրջանում մարդիկ սովորաբար տպրելիս  
են եղել ընդհանուր աներում, որոնք  
նոյնպէս զարդարուել են տոտեմային  
պատկերներով: Այս առումով ուշադրու  
են զարգացման ցածր աստիճանի վրայ  
գտնուող ցեղերի կեանքից առնուած փոս-  
տերը:

«Դեռ 40 տարի առաջ ողջ ծովափով  
մէկ հնդկացիներն տպրում էին փայտեայ  
մեծ աներում: Տունը կառուցուած էր կո-  
լեկալով կերպով: Տիկնիկաների և խոյ-  
ղաների մօտ երկար ժամանակ պահպան-  
ուած էր հին կարգը, որի համաձայն  
տունը կառուցուած էր հակառակ ֆրատ-  
րիայի անդամների կողմից: Այդ աների  
հակառակներին (ֆրատը) պատկերուած էր  
տոհմային տոտեմը կամ այդ տան մօտ  
դրուած էր տոտեմական սիւնը: Տան  
ծածկը պահող սիւները, սովորաբար,  
ծածկուած էին այդ տան բնակիչների  
տոտեմների փորագրութիւններով: Այդ  
տանը տեղաւորուած էին նոյն տոհմին  
պատկանող մի քանի ընտանիք»:

Նոյնը պիտի տեսլ նաե տոհմատիրա-  
կան շրջանում այնքան շատ տարածուած  
աղամարդկանց և կանանց աների միասին:  
Վերջապէս, այդպիսի տեսք պիտի աւնե-  
նային թէ՛ ենթադրեալ նախնիների և  
թէ՛ խոշոր ղեկավարների գերեզմանային  
յուշարձաններն ու նախնական սրբալայ-



## ՀԱՅԿԱՎԱՆ ՎԱՆՔԵՐ

## ԳԱՄԱՂԻՔԼԻ ՎԱՆՔ

ՊԱՏՄԱԿԱՆ. — Ս. Գամաղիէլի վանքը կը գտնուէր Աղձնեաց նահանգի Խիզան քաղաքին մօտ: Վանքը Գամաղիէլի անուանով կոչուած էր որովհետեւ հոն կը պահուէր անոր գլուխը: Եկեղեցին կառուցուած էր յանուն Ս. Աստուածածնի: Գամաղիէլի վանքը պատմութեան մէջ կ'երևի առաւելապէս ԺԴ.-ԺԶ. դարերուն: Վանահայրերէն յիշուած են հետեւեալները:

Ա. — Յովնանէս վարդապետ, 1359-68, որդի Պարոն Փոխանի և Մեծտիկինի. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 442, 458-9, 479, 488:

Բ. — Ստեփանոս Հայր վանից, 1397. — Հ. Բ. Սարգիսեան, Յուշակ Զեռ. Վեհտիկի, Թ. 315:

Գ. — Ներսէս վարդապետ, 1407-1427. — Դ. Վրդ. Փրիզալէմեան, Նօտարք Հայոց, էջ 26, 82-3:

րերը՝ նուիրուած այդ նախնիներին:

Հասկանալի է, որ ճարտարապետական այդ կառոյցները, որոնք ձեռնկերպուել էին տոհմային հասարակութեան ծոցում, պիտի հետզհետէ աւելի քան զարգանային՝ ի վերջոյ հիմք դառնալով ճարտարապետական կառոյցների յատուկ տիպերի:

Անկախ բոլոր տարբերութիւններից, ճարտարապետութեան մէջ, քննուող մօտիվները հարուստ հետքեր են թողել. նրանք, համեմատաբար, շատ են պահպանուած գերեզմանոցներում, կոլտային կառոյցներում, թատերական շէնքերում, պետական-կառավարական պալատներում, ինչպէս և սովորական բնակարանների որոշ մասերում (բուխարիկ-օջախների, դռների, լուսամտաների, ճակատների, պատշգամբների վրայ և այլն):

Ա. Շ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ

(Շարունակելի՝ 3)

Դ. — Ստեփանոս Եպիսկոպոս, 1434. — Սիւրմէեան, Յուշակ Զեռ. Երեսօղէմի, Ա., էջ 356:

Ե. — Յովնանէս վարդապետ, 1441-45. — Թովմայ Մեծօփեցու Յիշատակաբանը, էջ 53:

Զ. — Դուլիք Եպիսկոպոս, 1445-51. — Նօտարք, էջ 145:

Է. — Յովնանէս վարդապետ, 1451-55. — Նօտարք, էջ 181: Սիւրմէեան, Յուշակ Զեռ. Եւրօպայի Մասնաւորաց, 1950, էջ 9:

Ը. — Յովնանէս վարդապետ, 1455-68. — Նօտարք, էջ 181: Ե. Լալայեան, Յուշակ Զեռ. Վասպուրականի, էջ 452:

Թ. — Տէր Աբրահամ, 1674. — Սիւրմէեան, Յուշակ Զեռ. Եւր. Մասնաւորաց, Թ. 14, էջ 24:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Գամաղիէլի վանքին զբի մշակներէն ծանօթ են հետեւեալ անձերը:

Ա. — Յովհաննէս Քահանայ, Կրօնաւոր, Գրիչ, 1359ին օրինակած է մէկ Աւեստան, ընդ հովանեաւ Գամաղիէլի, առ ռոս բարեբարոյ և բարեհամբաւ սուրբ վարդապետին Յովհաննիսիւն. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 442:

Բ. — Գրիգոր Քահանայ, 1356-67, հայր Ստեփանոս և Մկրտիչ քահանաներու, օրինակած է:

1. — Մարգարէութիւն Եսայեայ եւ Թուղբ Պաւղոսի, 1356ին, ուսումնասիր Տիրատուր պատանեկին համար. օրինակը շնորհած է Պարոն Փոխան. — Տաշեան, Յուշակ Զեռ. Վրեհնայի, Թ. 113, էջ 394:

2. — Մեկնութիւն Երզնգ Երզնգի, Գր. Նիւսացւոյ, 1367ին, Փոխանի որդի, աշխարհալոյս Յովհաննէս վարդապետին համար. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 479:

Գ. — Ստեփանոս Գրիչ, կենակիցը Հերմիէք, 1368ին օրինակած է մէկ Աւեստան, Գամաղիէլի սպասաւոր Յովհաննէս աշխարհալոյս վարդապետին համար. — Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 488:

1363ին, ընդ հովանեաւ Ս. Առաքելոյն Գամաղիէլի օրինակած է, Պետրոս Կրօնաւորի հետ, մէկ Մեկնութիւն Աւեստ.



րանին Մասքեոսի, «ի վայելս զերապանծ և մեծ բարունապետին Յովհաննիսի»։ — *Սաղիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 458-9:*

Դ. — Նահապետ Գրիչ, 1374ին օրինակած է մէկ Մարգարեոսիւնց երեմիայի, ի վայելումն Յովհաննէս Վարդապետի։ — *Սաղիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 514:*

Ե. — Ներսէս Գրիչ, որդի Աւտարչահի և Ղիմաթի, 1397ին օրինակած է մէկ Հաւաքումն Տօնական ձառից, Աստուծոյն միայնակեացի պատուէրով։ — *Սարգիսեան, Յուլիան Զեռ. Վեհերիկի, Թ. 315:*

Զ. — Ստեփանոս Եպիսկոպոս, որդի Կիրակոսի և Նազիսթունի, աշակերտ Ներսէս Վարդապետի. 1413ին օրինակած է մէկ Քարոզգիրք Գր. Տաթևացւոյ, իր քեռորդիւն՝ Պետրոս Կրօնաւորի յիշատակին։ — *Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Գ., էջ 846: Սաղիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 167: Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 658:*

Թերևս այս Ստեփանոսին և իր ազգական Պետրոսին կը վերաբերի մեր Թ. 3701 նոտրագիր ժամանակագրութեան պարունակած սա տեղեկութիւնը, արձանագրուած Ռենդ = ՊԶԳ [= 1424] թուականին տակ. «Եւ [յ]այսմ ամի նահատակեցաւ Ստեփանոս Վարդապետն ի Հիզան որ է ի Վանիցն Դամադիէլի և Պետրոս էրէց աշխարհի, որ միմեանց ուրացութեան պատճառ եղեն. վասնորոյ ի միասին յանձն առին զնահատակութիւն վասն անուանն Քրիստոսի» (էջ 53). Ասոնց վկայական մահուան պատմութիւնը գրած է Առաքել Վրդ. Բաղրիշեցի (Հայոց Նոր Վկաները, Ա., էջ 156-168):

Է. — Յովհաննէս Վրդ. Գրիչ, 1427-69, որդի Վարդանի և Դիլշատի Դամադիէլի Վանքին մէջ օրինակած է բազմաթիւ Աւետարաններ, ծանօթ են.

1. — Աւետարան, 1427, խնդրող Հոսիսիմէ. — *Սաղիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 367:*

2. — Աւետարան, 1434, ստացող տէր Կարապետ Քահանայ. — *Սիւրմէեան, Յուլիան Զեռ. Երուսաղէմի, Ա., էջ 353:*

3. — Աւետարան, 1437. — *Ոսկեան, Գ., էջ 848: Սաղիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 478:*

4. — ձառոց, 1442. — *Սաղիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա., էջ 538:*

5. — Աւետարան, 1445. — *Նոտարք, էջ 145:*

6. — Աւետարան, 1451, ստացողք Թումայ Կրօնաւոր և Կարապետ տանուէր. — *Սիւրմէեան, Յուլիան Զեռ. Եւր. Մասնաւորաց, Թ. 6, էջ 8:*

7. — Աւետարան, 1455, Փիլիպպոս Քահանայի խնդրանքով. — *Նոտարք, էջ 181:*

8. — Աւետարան, 1469, Առաքել տանուտիրոջ խնդրանքով. — *Լալայեան, Յուլիան Զեռ. Վասպուրականի, էջ 453:*

Ը. — Ղազար Կրօնաւոր, Գրիչ, որդի Թումայի և Թամարի, 1468ին օրինակած է մէկ Աւետարան, Կարապետի որդի Սարգսի համար. — *Լալայեան, Յուլիան, էջ 451:*

Թ. — Սարգիս Գծող, որդի Կարապետ Քահանայի և Քնարի, աշակերտ Աղթամարցի Յովսէփ Վարդապետի. 1526ին օրինակած է մէկ Մատոց. — *Թ. Աղբար, Բ., էջ 254-5: Արարատ, 1919, էջ 4: Ոսկեան, Գ., էջ 851:*

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՓՈԽԱՆԵԱՆ

(1359-1368)

ԺԴ. Դարու երկրորդ կէսին, Խիզանի շրջանակին մէջ մեծամեծ գովեստներով կը յիշատակուի Յովհաննէս Վարդապետ մը. Ոմն Գրիգոր Քահանայի յիշատակարաններէն կը տեղեկանանք թէ ան որդին էր Պարոն Փոխանի և Մեծտիկինի. Նախ տեսնենք այն մասին խօսող յիշատակարանները:

Ա. — Մարգարեոսիւնց Եսայեայ եւ Թուղբ Պաւղոսի:

1. — «... յիշեցիք... և զժրօղս զսուտանուն Գրիգոր քահանայ, ընդ նմին զհաւատարիմ զբարեպաւոս և զիմաստուն այրն զՊարոն Փոխանց և զժնօղսն իւր... որ զօրինակն շնորհաց և զժոյլս յորդորեաց և ժրացոյց... թվ. Պե (= 1356)»։ — *Տաշեան, Յուլիան Զեռ. Վիեննայի, Թ. 113, էջ 394:*

2. — «Ջսուտանուն Գրիգոր բանի աշակերտ, և զբարեպաւոս հաւատարիմ, զիմաստուն եւ զկոռովաբան զՊարոն Փոխանց,



որ զօրինակն չնորհեաց, յիշխալիք . . . » :  
— Նոյն, անդ :

Բ. — Աւետարան :

3. — «Արդ, ես՝ մեղապարտ և անարհեստ գրիչս Յոհաննէս սուտանուն քահանայ, յանձն առի գրել զսա հրամանաւ սուրբ և երջանիկ, իմաստաւոր եւ ժաշան յամենայն գործս բարութեան Յովհաննէս վարդապետի, որ ետ գրել զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց . . . : Յիշեցէք ի մաքուր և յարժանաւոր յազօթս ձեր՝ զարժանաւոր և զամենամաւուր և ծաղկեալս իմաստութեամբ, զգովելի և զառաքինաւոր վարդապետս մեր զՅովհաննէս ծնողօք իւրովք հանդերձ : . . . : Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՊԸ (1359), ի նուրբ և նեղ ժամանակս . . . : Ընդ հովանեաւ Դամաղիկի առ ոսս բարեբաւոյ եւ բարեհամբաւ սուրբ վարդապետի Յովհաննիսի . . . : — Սաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 442 :

Գ. — Մեկնութիւն Աւետարանին Մատթեոսի :

4. — « . . . ձեռամբ անարհեստ և փցուն գրչի՝ պիտակ անուն Յովհաննէս Կրօնաւորի, ի ստացումն և ի վաշիւս զերապանձ եւ մեծ բաբունապետիս Յովհաննիսի . . . : Արդ, գրեցաւ սայ ի նուրբ և ի նեղ ժամանակի . . . : Ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Դամաղիկի, որ կայ առնթիւր Խիզան քաղաքիս, ի խնդրոյ սուրբ և առաքինազան վարդապետի Յոհանիսի . . . : թվ. ՊԺԲ (1363) — երորդի . . . : — Սաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 458-9 :

Դ. — Մեկնութիւն Ներգոյ Ներգոյն, Դր. Նիւստացոյ :

5. — «Եւ արդ, գրեցաւ աստուածաշունչ տառս ի քաղաքիս, որ կոչի Խզան, ընդ հովանեաւ սուրբ Սարգսի զօրավարին, առ ոսն սուրբ առաքելոյս Դամաղիկի : . . . : յիշեցէք . . . : զաւսարհալոյս վարդապետս մեր զՅովհաննէս անուն կոչեցեալ, և զծնողսն իւր ըստ մարմնոյ՝ զՓոխանն, և զմայրն զՄեծիկին՝ զՓոխեալսն ի Քրիստոս . . . : Ո՞վ պատուական և աստուածահաճո կրօնաւորք, առակեցեալ սուրբ գրոց ընդ աւսարհալոյս վարդապետին մերո, զմեղուցեալ Դրիգոր սուտանուն քահանայ, և զսոքա՝ զերկու որդիքս իմ՝ զՍտեփաննոս քահանայ

և զՄկրտիչ քահանայ, յիշման արժանի առնել աղաչեմ : . . . : մեք գրագիր չէաք, լուր վարդապետի սիրտն չկարացաք թուել՝ գրեցաք, ապա մեր բան չէր, մարդ զիւր գործն պիտի որ առնէ, որ ամաւթով չլինի : Դրեցաւ ի թվ. ՊԺԶ (1367) . . . : » : — Սաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 479 :  
Ե. — Աւետարան :

6. — « . . . Այլ և գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ անիմաստ և տխմար գրչի Ստեփաննոսի, յիշատակ կենակցի իմոյ Հերմիէքի . . . : Դարձեալ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի քաղաքս, որ կոչի Հզան, առ զբանս սուրբ Սարգսի և առ ոսս Դամաղիկի, եւ սորին սպասաւորի՝ աւսարհալոյս վարդապետի մերո Յովհաննիսի, և հաստատ պահեցէ զսա մինչ և ի խորին ձերութիւն, ամէն : . . . : Իսկ էր թվոսն ի ՊԺԷ (1368) յորժամ աւարտեցաւ սուրբ Աւետարանս . . . : » : — Սաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 488 :

Վերոգրեալ յիշատակարաններէն կը քաղուին սա տուեալները :

1. — Յովհաննէս Վարդապետի հայրը կը կոչուէր Փոխան : Պարոն Փոխան հաւասարիմ, բարեպաւս, իմաստուն եւ կորովաբան անձ մըն էր : — Յիշտ. 1, 2, 5 :

2. — Յովհաննէս Վարդապետի մօրը անունն էր Մեծտիկին . . . : — Յիշտ. 5 :

3. — Յովհաննէս Վարդապետ իմաստաւոր, ժաշան, ամենամաւուր, առաքինաւոր, բարեբաւոյ, բարեհամբաւ, զերապանձ, առաքինազան և աւսարհալոյս անձ մըն էր . . . : — Յիշտ. 3, 4, 5, 6 :

4. — Յովհաննէս Վարդապետ՝ Դամաղիկի Վանքին առաջնորդը կամ բարունապետն էր և աշակերտներ կը դաստիարակէր՝ յատկապէս Սուրբ Գրոց ուսման մէջ (1359-1368) . . . : — Յիշտ. 3, 4, 5, 6 :

Այս տուեալներէն կրնայ հետեցուիլ թէ Դամաղիկի Վանքին մշակութային գործունէութեան հիմնադիրն է եղած այս «աշխարհալոյս» Յովհաննէս Վարդապետը, Փոխանի և Մեծտիկինի արժանաւոր զաւակը, զոր պատշաճ համարեցինք մականուանել «Փոխանեան», զանազանելու համար ժամանակակից բազմաթիւ համանուն վարդապետներէ :

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ



## ՀԻՆ ԷՋԵՐ

### ՔԱՐՈՋ Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Յաւերժական ծայնիւ յոգնակի գոչմամբ գեղապարեալ պատուեմք ըզսոսկալի եւ ըզսարսափելի գալուստն ի բոււմ յորովայնիդ սուրբ Աստուածածին Մարիամ, նառեմք զանճառելի ըզծընունդն, քանզի որ էնն ի ծոց Հաւր հայրենի ծնունդ եւ հայրածին մանուկ, որդի անդրանիկ եւ անժամանակ տղայ, յառաջ քան ըզյաւիտեանս, Աստուած հանեցաւ մարմնանալ ի բոււմ յորովայնիդ սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւր ի քէն մարմնացաւ մեզ Աստուած երեւեցաւ. ըզնա անդադար աղաչեա վասն անծանց մերոց, աղաչեմք:

Անպատմին կառք, անդրդուելի աշտարակ, անպարտելի պարիսպ, աղբեր լուսոյ, ականակիտ վտակ, գետ յորդահոս եւ յորդավըտակ, քանզի Հայր Աստուած հինաւուրցն ի հայրաշարժ յաղբերէն առու կարկաչս առնելով անծ[ը]եւածեւ ցաւղանայր ի բոււմ յորովայնիդ սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւր ի քէն մարմնացաւ...:

Կենդանաստեղծին մայր, կենարարին պատճառ, կուսածին առագաստ, կանգնումն Ադամայ եւ կեանք եւայի, պերճութիւն պտղոյն եւ մերժիչ խաւարի, մեղաց լուծիչ եւ մարդկան քաւարան սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւր [ի քէն] մարմնացաւ...:

Ոսկետուփ տումար, դիրայարմար, ասրափայլ անծրեւ եւ լեառն վիմածին, զանծ շարաշարեալ եւ բուրուառ ոսկի անուշահոտ խնկոցըն ծրխիչ, զըզուիչ անեղին եւ պարծանք կուսութեան սուրբ Աստուածածին Մարիամ, քանզի ի վերայ քո կայծակնատարած եւ շող աստուածութեան երեւիր, սիւն առ սիւն հատանէր եւ աստղանման երեւէր, որ այսաւր ի քէն մարմնացաւ...:

Փառաւորեալ Աստուածածին բողբոջ գարնանային մըշտընջենաւորածիդ, քանզի հինաւուրց Աստուածն այսաւր յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, նոյն ինքն խայտայ այսաւր ի ջուրսըն Յորդանանու եւ ի Կարապետէ ձեռնադրի, Հայր ի վերուստ վըկայէ, դայ է իմ սիրելի որդի ընդ որ հանեցայ, որ այսաւր ի քէն մարմնացաւ...:

Աւդ լուսոյ եւ ծառ կենաց հայրենի տնկուած, սընեալ յարարէն սուրբ Աստուածածին, բարունակ բազմածաղիկ եւ թերթ վարդասուն, բաղցրահամ ողկոյզ պանծալի պարտէզ, արեւելք արեգականն արդարութեան եւ պարծանք կուսութեան սուրբ Աստուածածին Մարիամ, որ այսաւր ի քէն մարմնացաւ մեզ Աստուած երեւեցաւ, եւ ընդ մարդկան շրջեցաւ, ըզնա անդադար աղաչեա վասն հանգուցելոց մերոց, աղաչեմք:

Եւ եւս առաւել զյորդորումն...:

Զանծինս մեր եւ զմիմեանս...:

Սոսկալի ծնընդեամբդ ի քէն ցընծան երկինք եւ երկիրս ուրախանան, ամբք նառազայթին եւ արեգակըն հրաշանայ, լուսին նըկարակերտի եւ աստեղք արեգակնանան, եւ մեր հողեղէնքըս հրեղինանամք ընդ հաւր բանին Աստուծոյ, որ այսաւր ի քէն մարմնացաւ սուրբ Աստուածածին Մարիամ: Եւ այժմ ողորմեա...:



## ՎԱՐԴԱՆԱՆՑ ՇԱՐԺՈՒՄԸ

Դիտուած Համաֆրիստոնեական Անկիւնակէտէ

Յորմէ հետէ Հայաստան իր ճակատազիրը կապեց Յիսուս Նազովրեցիին, այն օրէն անիկա մաս կազմեց նոր ընկերային ամբողջականութեան մը՝ որ խորքին, կամ նպատակին մէջ սահմանուած էր ըլլալու նոր և համամարդկային թագաւորութիւն մը։ Արդարեւ Հայաստան կը կազմէր, թէ՛ ժամանակագրականօրէն և թէ՛ աշխարհագրաբար, այս նոր գրութեան յառաջաւոր բանակը։ Իր ծնունդէն առդին Քրիստոնէութիւնը առաջին անգամ Հայաստանի մէջ էր որ թօթափած էր ստորերկրեայ իր կեանքը և լոյս աշխարհ էր եկած իրբն ազատ և տիրող կրօնքը երկրին։ Իսկ Վարդանանց օրերուն, Քրիստոնէութիւնը արդէն իսկ ճանչցուած և հաստատուած կրօնքն էր օրուան մեծագոյն կայսրութեան, որ կ'ընդգրկէր Միջերկրականի ամբողջ աւազանը։ Հայաստան այս նոր կրօնական գրութեան հիւսիս-արեւելեան ծայրագոյն սահմանը կը կազմէր։

Վարդանանց օրին (ինչպէս առհասարակ միշտ եղած է պատմութեան մէջ) երկու մեծ ուժեր կային մեզի ծանօթ աշխարհին մէջ. Բիւզանդական Քրիստոնեայ Կայսրութիւնը և Պարսկական Մազդեզական Թագաւորութիւնը։ Ասոնք շարունակ իրարու հետ բախումի մէջ էին։ Հայաստան, որ նախապէս Պարսկական կողմին մաս կը կազմէր թէ՛ քաղաքականապէս թէ՛ կրօնա-մշակութային տեսակէտէ, յանկարծ ինքզինք գտած էր Բիւզանդական շրջանակին մէջ իրբն արդիւնք իր Քրիստոնէացման։ Բնական էր որ Պարսկական պետութիւնը ճիգ չխնայեր Հայաստանը կրկին բերելու իր շրջանակէն ներս. բայց աւելի քան հարիւր տարիներու զրեթէ ապարդիւն փորձերէ վերջ եկաւ այն շատ բնական եզրակացութեան որ Հայերը վերստին ամբողջապէս իր կողմը շահելու միակ պայմանը առնոց սրտերէն արմատախիլ ընելն էր նոր կրօնքը, և անոր տեղը տնկել վերստին Մազդեզականութիւնը։ Այս էր, իր պարզագոյն հասկացողութեան մէջ, զրդապատճառը Յազկերտի կրօնափոխութեան հրա-

մանագրին, որով ազդանշանը տրուած եղաւ Աւարայրի ճակատամարտին։

Այստեղ փակագծի մէջ և անցողակի կ'արժէ մատնանշել նաեւ որ վերեւ յիշուած տեսանկիւն և ըմբռնելի զրդապատճառէն զատ, յաճախ շատ աւելի խոր և անտեսանելի ոյժեր են որ շարժման մէջ կը գնեն նման դէպքերը։ Ստոյգ է որ կոիւր տեղի կ'ունենար ընդմէջ Հայ գինուորի և Պարսիկ զօրականի, բայց պատերազմը Հայ ժողովուրդի և Պարսիկ ժողովուրդի միջև չէր։ Ստոյգ է որ Աւարայրի վրայ տեսանելիօրէն կատարուածը ծառայում մըն էր փոքրիկ բանակի մը ընդդէմ խոշոր վաշտութեան, բայց քաղաքական ըմբոստացում մը չէր եղածը։ Որովհետեւ Հայեր Պարսից թագաւորին զրած իրենց պատասխան-նամակին մէջ կ'ըսեն բացայայտօրէն. «Եթէ այս հաւատքին մէջ թողուս մեզ՝ երկրի վրայ ուրիշ տէր չենք փոխանակեր քեզի հետ»։ Զուտ կրօնական պայքար մըն էր կատարուածը։ Խորքի մէջ, բանականորէ այս բախումներու ընթացքին և ընդմէջէն երկու անտեսանելի ոյժեր են որ կը պայքարին իրարու հետ . . . Եւ որովհետեւ այս անտեսանելի ոյժերը — իրենց աննիւթական հանդամանքովն իսկ — չեն կրնար դէմ առ դէմ գալ իրարու, կը գործածեն մարդկութիւնը իրբն գործիք և իրբն պայքարի գաշտ։ Ասիկա պատմութեան միստիկ մեկնաբանութիւնն է, որուն ծալքերուն մէջ տեղը չէ խորանալու, բայց բաւ ըլլայ յիշել անցողակի, որպէս լուսարանութիւն, Պողոս Առաքեալի յատկանշական սախօսքը. «Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան (մարդու հետ), այլ ընդ պեռօրիւնս, եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութեան որ ի ներքոյ երկնից» (Եփես., Զ., 12)։ Աւարայրի դաշտին վրայ, վարագոյրի ետին, ճակատ ճակատի եկած էին Քրիստոնէութիւնը և օրուան իր մեծագոյն թշնամին՝ Մազդեզական կրօնքը։ (Դարերու ընթացքին անունը պիտի փոխուի Քրիստոնէական կրօնքի թըշնամին, բայց անոր դէմ պայքարող ոյժերը՝ «այսք չարութեան», պիտի մնան նոյն)։ Ու պատահեցաւ այն՝ ինչ որ միշտ պատահած էր, ինչ որ կը պատահի այսօր և ինչ որ պիտի պատահի միշտ. այսինքն՝



երեւութական ու ժամանակաւոր պարտութիւն եւ իրական յաղթանակ Քրիստոնէութեան:

Պատերազմական այս նոր «թաքսի» սկսու Քրիստոնէութեան Հիմնադիրով իսկ: Ամենէն գէշ պարտութիւնը զոր մարդկօրէն կարելի էր ունենալ, ունեցաւ Քրիստոս — մատնուած՝ աշակերտէն, լքուած՝ իրեններէն, ուրացուած՝ հաւատարիմէն. կատակուած՝ ռաբիներէն. դատապարտուած ու խաչուած որպէս չարագործ՝ Իր յօսերիմ թշնամիներէն: Կրնա՞ք երեւակայել ասկէ աւելի կատարեալ պարտութիւն: Բայց ի՞նչ հրաշալի յաղթանակ Իր դատին և կրօնքին Իր պարտութենէն վերջ: — Յիսուսի քաջերուն հետեող ուրիշ մը, Ստեփանոս, մեռաւ քարերու տարափին տակ, բայց իր կրօնքին շահեցաւ զինքը քարկոծողներուն պարագլուխը, որ ետքէն պիտի ճանչցուէր որպէս «Առաջնորդ նազովրեցոց աղանդին»: Նոյն այս «Առաջնորդը», Պօղոս Առաքեալ, պիտի մեռնէր Հռովմի մէջ, բայց պիտի գրաւէր «յաւիտեանական» այդ քաղաքը, զայն դարձնելու համար միջնարեղրը Քրիստոնէութեան: Առաջին երեք դարերու Քրիստոնեաներ պիտի աշխատէին ու հալածուէին Հռովմէական կայսրութենէն, բայց նոյն այդ կայսրութիւնը ի վերջոյ զուլս պիտի խոնարհեցնէր ընկճուած այս մարդերու կրօնքին ներքեւ և անոնց նշանը — խաչը — պիտի բարձրացնէր իր գրօշին վրայ Հռովմէական արձիւն տեղ: Հայաստանի Քրիստոնէութիւնը գրեթէ ճգմուեցաւ Տրդատի երկաթէ բռնունջքին տակ և Լուսաւորչի հետ մահուան գուրը նետուեցաւ, բայց դուրս եկաւ անկէ յաղթական ու տիրական: — Նոյնը պատահեցաւ Տղմուտի եղերքին: Իրբն ճակատամարտ ու պատերազմական գործողութիւն ամբողջական պարտութիւն մըն էր այն օր Հայոց կրածը: Բանակին սպարապետը, և ոգին այս բոլոր շարժման, սպաննուեցաւ. զօրքին ամենէն անձնուէր տարրը ինկաւ կռուի դաշտին վրայ. բանակին խոշոր մէկ մասը դաւաճանեց ու անցաւ թշնամիին կողմը. մնացեալը նահանջեց գլխիկոր և անգլուխ: Այս բոլորով հանդերձ Աւարայրով հիմքը դրուեցաւ քանի մը յաղթանակներու: Նախ Քրիստոնէութիւնը աւելի ամուր արմատ բռնեց Հայ հողին վրայ: Պատմու-

թիւնը հաստատեց զայն: Դէպքին յաջորդող հալածողական քաղաքականութիւնը ոչինչ կրցաւ փոխել Հայուն զիմագծէն և հաւատքէն, բացի քանի մը անվաւեր Քրիստոնեաներու իսկական զիմագիծը մէջտեղ բերելէ: Դէպքէն երկու դարեր վերջ, ուրիշ ահաւոր փոթորիկ մը, փրթած Արաբիոյ խորքերէն, գրեթէ սրբեց Միջերկրականի հարաւային և արեւելեան ափերուն վրայ աճած Քրիստոնէութիւնը, Մագղեղականութիւնն ալ միասին: Սակայն այս «հարաւային կործանում»-էն վերջ վերապրեցաւ Քրիստոնէութիւնը Հայ հողին վրայ, ու այս վերապրումը ան կը պարտի մեծագոյն չափով Վարդանանց Մահու չափ» զիմագրութեան:

Երկրորդ յաղթանակը այն եղաւ որ Հայեր յարգանք պարտադրեցին թշնամիին Քրիստոնէութեան նկատմամբ: Վարդանանք իրենց արիւնով, այսինքն իրենց նախնւորութեամբ մահուան ի վերայ պարսիկ զինին, զիմացինին մէջ ստեղծեցին այն համոզումը թէ այս փոքր ժողովուրդին մէջ կը գործէ մեծ ոյժ մը՝ զոր կարելի չէր խորտակել, նուիրական սրբութիւն մը՝ որուն համար կ'արժէր մեռնիլ: Մարդ որչափ ալ կուրացած ըլլայ և զրկուած՝ բարձրագոյն գաղափարականներու նկատմամբ յարգանք տածելու շնորհքէն, դարձեալ զիտակցաբար կամ անգիտակցաբար զուլս կը խոնարհեցնէ հերոսութեան և անայլալի համարձակութեան առջև: Քրիստոնէութեան հանդէպ ստեղծուած այս յարգանքին համընթաց, պարսիկ, աւելի շխտակ Մագղեղական ենթագիտակցական աշխարհի մէջ տեղ գտաւ իրենց կրօնքին տկար ըլլալու զգացումը: Եւ պատմական իրականութիւն է որ ոչ միայն Մագղեղական կրակը չփռեցաւ Հայաստանի մէջ, այլ ընդհակառակը Քրիստոնէութիւնը բազմացաւ Պարսկաստանի մէջ: Չմտնալ որ Ղևոնդեանց նահատակութեան սիրտ ճմլող պատմութիւնը կը պարտինք Պարսիկ Քրիստոնեայի մը՝ որ աչք առնելով ամէն վտանգ, հետեւեցաւ անոնց մինչև իրենց անապատային նահատակութեան վերջին հանգրուանը: Եւ յիշել որ Եղիշէի զրքին մէջ էջեր կան յատկացուած դարձի պատմութեան մոզպետի մը, որ չարչարանաց վերակացու նշանակուած էր Ղևոնդեանց խուճիրին: Եթէ մինչև իսկ



առասպել նկատուի այս մոզին դարձն ու նահատակութիւնը, սակայն մոզպետին հոգեկան վիճակը, որ այնքան ճարտարօրէն կը նկարագրէ պատմիչը, խկական ցոլացումն է հոգեկան դրութեան ամբողջ մոզութեան և բոլոր անոնց՝ որոնք չփման եկան Հայկական Քրիստոնէութեան, իր յարձակողական և կրաւորական պայքարի ընթացքին:

Ուրիշ յաղթանակ մը, որ այնքան սերտ կապ ունի վերինին հետ, այն եղաւ որ Վարդանանք ուժգին հարուած մը տուին Մազդեզականութեան՝ որմէ ան չկրցաւ վերականգնուիլ: Վարդանանց պատերազմով կը սկսի Պարսկ կրակապաշտութեան թափին խորտակուիլը և Քրիստոնէութեան համար սպառնալիք մը ըլլալէ զադրիլը: Այստեղ ալ գրեթէ պիտի պատահէր այն՝ ինչ որ պատահած էր գրեթէ դար մը առաջ Հոռովմէական կայսրութեան մէջ: Այս վրձնական զիմադրութեամբ Հայեր բացին լաւագոյն պատեհութիւն մը Քրիստոնէական կրօնքի առաւել տարածման, որմէ սակայն դժբախտաբար Քրիստոնեայ գործիչներ չի կրցան օգտուիլ: Ի՛նչ ընել որ Հայեր, դժբախտաբար, լաւ քարոզիչներ կամ հաւատքի լայն տարածիչներ չեն եղած: Ամէն ազգ, ինչպէս ամէն անհատ, իր մասնաւոր շնորհքն ունի. Հայերուն եթէ չէ տրուած «բարեկան»ի շնորհը, գէթ տրուած է բարձրագոյն սկզբունքները կեանքի վերածելու, ապրելու, ի հարկին անոնց համար մեռնելու շնորհը: Բիւզանդական կամ Հոռովմէական Քրիստոնէութիւնը, որ որպէս թէ ակոյտեանը և զլխաւոր տարածիչն էր այս կրօնքին, տարօրինակ յիմարութեամբ մը ոչ միայն չէր ուղարկեր հարկ եղած եղբայրական օգնութիւնը Աւարայրի մարդոց, այլ լուր կը զրկէր թշնամիին որ մտադիր չէ օգնելու իր կրօնակիցներուն: Ասիկա ինքնին մէկն է շատ մը փաստերէն՝ որ բան մը կար փոխուած «թիկունքին» վրայ . . . Բիւզանդական Քրիստոնէութիւնը փոխանակ ամուլ վէճերով ինքզինք սպառելու, եթէ ունենար գէթ տարրական ողջմտութիւնը իր ոյժերը Քրիստոնէութեան տարածման տրամադրելու, ի՛նչ հոյակապ հունձք կար պատրաստուած իրեն համար: Հայ մշակներ քիչ էին. զլխաւորները ձերբակալուած և արգելափակուած՝ նահատակութեան համար.

մնացեալները զբաղուած էին ներքին վերքերը դարմանելով և փարախին հօտը յափըտակիչ գայլերու դէմ պաշտպանելով:

Ուր որ վրիպեցաւ Բիւզանդիոն, յաջողեցաւ Խալաթը Մազդեզականութիւնը տեղի տուաւ Մահմետականութեան ու Պարսկաստան կորսուեցաւ որպէս զաւտ Քրիստոնէութեան՝ դարերու համար:

Հոս է ուրեմն Վարդանանց շարժման համապարփակ նշանակութիւնը. ոչ միայն պահպանեցին Հայ Եկեղեցին (և անոր պատեանին մէջ՝ Հայ ազգը), այլ՝ թոյլ չտուին որ նեղնան Քրիստոնէութեան սահմանները, գէթ իրենց յանձնուած ճակատին վրայ: Ինչ որ է Պրանք Կարոյոս Մարթէի ճակատամարտը Բուաթիէի մէջ 732ին, որով կասեցաւ Մահմետականութեան յառաջխաղացքը Եւրոպայէն ներս, գրեթէ նոյն է Վարդանի զլխաւորած (և Վահանի ի գլուխ հանած) ճակատամարտը Աւարայրի վրայ: Եթէ չի կրցան յառաջանալ՝ գէթ, ըստ առաքելական պատուէրին, «գտնել կալան»: Ոչ միայն ձեռքէ չհանեցին բարձրագոյն կրօնք մը, այլ օգնեցին աշխարհէն վերցնելու թերի և անկատար կրօնք մը: Ու ամբողջ յանցանքը իրենց չէ եթէ անոր տեղ չկրցան տնկել կատարեալ ու ճշմարիտ կրօնը: «Այլ է որ սերմանէ, այլ է որ հնձէ»: Իրենք տեղ պատրաստեցին, անդաստանը հերկեցին, մինչև իսկ ցանեցին Աւետարանի սերմերը իրենց կեանքի օրինակով և արիւնով. բայց մշակներ չգտնուեցան ցանուածը հնձելու:

Հայութեան գերագոյն գանձն է իր Քրիստոնէութիւնը. այդպէս համոզուած էին նաև Վարդանանք: Եթէ կորսնցնէինք զայն, ոչ միայն շատ բան պիտի կորսնցնէինք մեր արժէքներէն, այլ ամենայն հաւանականութեամբ մենք ալ միասին պիտի կորսուէինք: Պահպանենք զայն ուրեմն այն գուրգուրանքով ու խանդաղատանքով, այն նուիրումով ու վճռականութեամբ որով պահեցին զայն Վարդանանք . . . ու վստահ կրնանք ըլլալ որ ան, Քրիստոնէութիւնը, մեզ պիտի պահպանէ ոչ միայն որպէս հոգիներ, որոնք օր մը պիտի մաս կազմեն Վարդանանց փառանքին, այլ նաև որպէս Հայութիւն, որպէս Հայ ժողովուրդ՝ որ մաս կը կազմէ Աստուծոյ Թագաւորութեան:

ՍՍՂԻՄԱՅԻ



## ԳՐԱԽՑԱԿԱՆ

### “ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԻՆ ԵՒ ՄԻՋՆԱԳԱՐԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ” (V-XV դդ.)

Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ — ԵՐԵՎԱՆ — 1954, էջ 395

1915ին, Ն. Ադոնց կը հրատարակէր իր «Արուեստ Դիոնիսեայ Քերականի և Հայ Մեկնութիւնք Նորին», Բեթրուկրատ, բնագրային բանասիրական հանգամանակից ուսումնասիրութիւնը, ուր քննութեան կ'ենթարկէր յոյն անուանի քերական Դիոնիսիոս Թրակացիի քերականութեան հայերէն թարգմանութիւնը և անոր մեկնութիւնները մինչև 11րդ. դար, հայ քերականներու՝ Դաւիթի, Անանուն Մեկնիչի, Մովսէս Քերթոզի, Ստեփանոս Սիւնեցիի, Գրիգոր Մազլատրոսի և Համամ Արեւելցիի կողմէ, որոնց երկերը Ադոնց վերականգնած էր ձեռագրական համեմատութիւններով: Հայ ձեռագրական շրջանի քերականագիտութեան լաւագոյն աղբիւրը կը հանդիսանար Ն. Ա. Ադոնցի գործը: Քիչ են այլուր հայ քերականներ՝ որոնք յիշատակութիւններ ունեցած ըլլան զիրենք նախորդող քերականներու մասին: Բացի Յովհաննէս Երզնկացիի և Առաքել Սիւնեցիի ակնարկութիւններէն, J. Ch. Cirbied, իր Grammaire de la Langue Arménienneի մէջ, Paris, 1823, ունի համառոտ տեղեկութիւններ: Շահան-Ջրպետը կարեւոր գործ մըն ալ կատարած է, Փարիզի Արքուեական Մատենադարանէն գտնելով ու հրատարակելով Դիոնիսիոս Թրակացիի քերականութեան հայերէն թարգմանութիւնը: Grammaire de Denise de Thrace par J. Ch.-Cirbied, Paris, 1824: Վերջերս, հայ քերականութեան պատմութեամբ զբաղած են նաև հետեւեալ հեղինակները. — Հ. Աճառեան, «Հայոց Լեզուի Պատմութիւն», Բ. Մաս, Երևան, 1951, Ար. Ղաւրիբեան, «Հայոց Լեզուի Մեթոդիկա», Երևան, 1948, «Համառոտութիւն Հայ Բարբառագիտութեան», Երևան, 1941, Գ. Սե-

ւակ, «Քոսթի Մասերի Ուսումնքը», Երևան, 1940, Ս. Ղազարեան, «Գրաբարի Դասագիրք», Երևան, 1951, Ա. Արահամեան, «Գրաբարի Ձեռնարկ», Երևան, 1952, «Հայերէնի Դերբայները և Նրանց Ձևաբանական Նշանակութիւնը», Երևան, 1953:

Գ. Զահուկեան իր աշխատութիւնը նուիրած է հայ ձեռագրական շրջանի (V-XV դդ.) քերականներու գործերու վերլուծման, ուր կը քննուին Դիոնիսիոս Թրակացիի քերականութեան յատկանիշները և անոր հայերէն թարգմանութեան նկարագիրը, և շուրջ հազարամեակ մը հայ քերականներու՝ Դաւիթի, Անանուն Մեկնիչի, Մովսէս Քերթոզի, Ստեփանոս Սիւնեցիի, Համամ Արեւելցիի, Գրիգոր Մազլատրոսի, Արիստակէսի, Գէորգ Սկեռացիի, Վարդան Արեւելցիի, Յովհաննէս Երզնկացիի, Նույի Նշեցիի, Յովհաննէս Քանցիի, Գրիգոր Տաթևացիի և Առաքել Սիւնեցիի կողմէ թրակացիի քերականութեան և անոր հայերէն թարգմանութեան շուրջ կատարուած մեկնաբանութիւնները:

Հայ քերականութեան պատմութիւնը շահեկան է ոչ միայն լեզուաբանական անկիւնակէտէն, այլ մանաւանդ մեր քերականները արժէքաւոր տեղեկութիւններ կուտան մեզի նաև հայ խմատատիրութեան, հայ արուեստի և ընդհանրապէս հայ մշակոյթի մասին:

Հեղինակը ամփոփած է նաև, զրքի վերջաւորութեան, այն քերականներու երկերը՝ որոնց հեղինակի հարցը չէ ճշգուտ, որոնք սակայն կը կանխեն տպագիր քերականութիւնները: 4 զլխաւոր մասերու բաժնուած է գիրքը: Ա. — Ներածութիւն. — Բ. — Դիոնիսիոս Թրակացու «Քերականական Արուեստ» աշխատութեան թարգմանութիւնը և նրա հայերէն մեկնութիւնները 5-10րդ. դդ. — Գ. — Քերականական արուեստի յետագայ զարգացումը և «Գլը-չութեան արուեստի» հետ կապուած ուղղագրական — կէտագրական աշխատութիւնների երևան գալը 11-15րդ. դդ. — Դ. — Թաւեւուածներ:

Ա. — Ներածութիւն. — Հետեւեալ ստորաբաժանումներով: — Հայ քերականութեան սկզբնաւորման արտաքին և ներքին նախադրեալները: Առաջին քերականական



տեղեկությունները: 1) Քերականության յառաջացման ընդհանուր նախադրեալները: Քերականության ծաւալի և դերի նախնական ըմբռնումը: 2) Յունական քերականության յառաջացումն ու զարգացման ընթացքը նախ քան Դիոնիսիոս Թրակացին: 3) Դիոնիսիոս Թրակացու «Τέχνη γραμματική» («Քերականական արուեստ») երկը: 4) Ծարտասանական երկերը և նրանց արժէքը քերականության պատմության համար: 5) Հայերի ունեցած լեզուա-քերականական տեղեկությունները նախամատենագրական շրջանում: 6) Լեզուա-քերականական տեղեկությունները նախալուսարան հայ մատենագրության մէջ (Թրակացու երկի թարգմանություններից առաջ): 7) Թրակացու քերականության թարգմանության անհրաժեշտության հաստատումը:

1) Քերականության յառաջացման ընդհանուր նախադրեալները: Քերականության ծաւալի և դերի նախնական ըմբռնումը: — Հինէն ի վեր, մարդկային լեզուն եղած է հետաքրքրության առարկայ: Հարիւրաւոր տարիներ Ն. Ք. Ասորեստանցիները կազմած են բառերու և վանկերու ցանկեր: Զինացիները բառարաններ կազմած են իրենց լեզուին համար: Սակայն, հնութեան մէջ, հնդկները և յոյներն էին որոնք խորաթափանց կերպով ուսումնասիրած են մարդկային լեզուն: 2 զլիւսւոր հոսանքներ գոյություն ունեցած են՝ խառնատարական-տրամաբանական և փորձառական-նկարագրական: Յոյն քերականությունը եղած է առաւելարար խառնատարական-տրամաբանական, իսկ հնդկականը՝ գործնական-նկարագրական: Հին բնագիրներու բանասիրական ուսումնասիրությունը զլիւսւոր ազդակը հանդիսացած է լեզուի բազմակողմանի քննությանը և քերականության յառաջացման հիմնի: Յունաստանի մէջ, «Քերականական արուեստը» (Τέχνη γραμματική) կը նոյնացուի հին բնագիրներու ուսումնասիրության հետ: Քերականությունը հոմանիշ կը դառնայ գրականության, նշանակելով որեւէ գրաւոր արտայայտութիւն: Յունարէն γραμματική «քերականություն» (բառացի «քերականական») բառը կը ծագի τὰ γράμματα «գրեր» (լատ. littera, որմէ litteratura «գրականություն») բառէն, և կը նշանակէ

որեւէ գրաւոր արտայայտութիւն գրուած քերերը, գրքերը»: Հայ հին քերականները ևս «քերականություն» բառը կը ստուգաբանեն իրր «գրականություն», իսկ «գիր» բառը բղխել կուտան «քերել» բայէն, հետեւով յոյներու օրինակին: Փոխն ի փոխ կը գործածուին «քերական» և «քերթող» բառերը, որպէս ստուգաբանօրէն իրարու հետ լծորդուած: Ծրդ. դարուն, Ստեփանոս Սիւնեցին կը գրէ. «Եւ արդ ստուգաբանեալ լինի քերականություն գրականություն»: Յետագային, քերականության ըմբռնումը աւելի կը սահմանափակուի, ու կը նոյնանայ լեզուաբանության հետ:

2) Յունական քերականության յառաջացումն ու զարգացման ընթացքը նախ քան Դիոնիսիոս Թրակացին: — Յոյն խառնատարները լեզուի հարցերը կը շօշափէին իրի, հասկացողության և անուան հարցերը լուսարանելու մասք: Լեզուն միջոց մըն էր խառնատարական հարցերը լուծելու: Հրատապ էր մանաւանդ անուան և իր կոչման խնդիրը. թէ անունը իր կոչումը կը ստանայ բնութեամբ (φύσει) թէ սովորութեամբ (ἐξεί). Պատահ իր «Գրաթիրութիւն մէջ, նախ Սակրատի բերնով կը պաշտպանէր քննութեամբի տեսակէտը, ապա կը հաշտեցնէր երկու կարծիքները. իսկ հիւլէական խառնատարէր Տեմոքրիթ կողմնակից էր սովորութեամբի: Ստոյիկները երեք մասերու կը բաժնեն լեզուական հարցերը. —

1) Նշանակողը, 2) նշանակուողը, 3) առարկան: Ստոյիկները կը զբաղին նաև բառեստուգութիւնը (ἐτυμολ) ճշդելու աշխատանքով, և ստուգաբանությունը (ἐτυμολογία) նոր թափ մը կը ստանայ: πῶσις «անկում», թաւալում կը գործածեն արդի «հոլով» իմաստով: ἡ ὁρμή πῶσις «ուղղական», πλάττει «թէք» հոլովները երեքի կը ստորաբաժնէին՝ γενική «սեռական», ὁστική «տրական» և αἰτιατική «հայցական», իսկ κλητική «կոչական» միւսներուն համահաստար հոլով չի նկատուիր:

3) Դիոնիսիոս Թրակացիի «Τέχνη γραμματική» («Քերականական արուեստ») երկը: — Արիւստարքոսի աշակերտ, Դիոնիսիոս Թրակացին զլիւսւոր ներկայացուցիչն է Աղեքսանդրեան դպրոցին: Ապրած է Ն. Ք. 170-90, նախ բնակած է Աղեքսանդրիա,



ապա փոխադրուած է Հոգոս: Դիոնիսիոս Թրակացիի «Τέχνη γραμματικῆ» աեւլի դպրոցական նպատակներ կը հետապնդէ: Հին քերականները միայն Հոմերոսով կը զբաղէին: Դիոնիսիոսի գիրքը ուղեցոյց մըն է նաև գեղարուեստական գործերը կարգալու: Դիոնիսիոսը առարկայ եղած է բազմաթիւ յունական—բիւզանդական քերականներու մեկնութիւններուն, և մեծ հեղինակութիւն վայելած է միջին դարերուն: Դիոնիսիոսէն առաջ, լեզուական հարցերը կը ձեռնէին իմաստասիրութեան հետ առնչուած, գոյի և գիտակցութեան հարցի լուծման ստատորոգ իրրև ազգակ. իսկ Թրակացին լեզուին կը մօտենայ զուտ բանասիրական նպատակներով: Դիոնիսիոսի համար, քերականութիւնը «հմտութիւն» է («ἐμπειρία») գրողները և պատմաբանները հասկնալու: Դիոնիսիոս հետեւեալ ձևով կը ստորաբաժնէ քերականութիւնը. —

ա) «Վերծանութիւն ներկուս ըստ առողանութեան» (ἀνάγκαις νηρέας κατὰ προσώδην). — Ընթերցանութիւնը որ կը կատարուի առողանական օրէնքներու համաձայն:

բ) «Զրուցատրութիւն ըստ ներգոյս քերթողական յեղանակ» (ἐξήγησις κατὰ τοὺς ἐνυπάρχοντας ποιητικούς τρόπους). — Երկի մը բանաստեղծական եղանակներու մեկնաբանութիւնը:

գ) «Լեզուաց և հնազէտ պատմութեանց առձեռն բացատրութիւն» (γλωσσῶν τε καὶ ἱστοριῶν πρίχειρος ἀπόδοσις). — Դիցարանութեանց և բարբառներու ծանօթացումը համապատասխան կերպով մեկնաբանելու համար երկերը:

դ) «Ստուգարանութեան գիւտ» (ἐτυμολογίας εὗρεσις). — Բառերու ստուգարանութիւնը:

ե) «Համեմատութեան տեղեկութիւն» (ἀναλογίας ἐπὶλογισμός). — Բառերու նմանողական ձևերու ընտրութիւնը. «մասունք բանի» կը զերարբերի այս գլուխը:

զ) «Դատումի քերպածաց» (ἀρίσις ποιημάτων). — Բնագիրներու բանասիրական քննութիւնը քերականութեան գլխաւոր մասը կը կազմէ:

Ամփոփելով նախորդ սերունդներու աշխատանքը, Դիոնիսիոսը խօսքի 8 մասեր կը զատորոշէ «մասն բանի» (μέρη τοῦ λόγου).

ա) «Անուն» (ὄνομα). — Կը պարունակէ գոյականը, ածականը, թուականը և կարգմը դերանուններ (հարցական, յարաբերական, որոշեալ և անորոշ):

բ) «Բայ» (ῥήμα).

գ) «Ընդունելութիւն» (μετοχή). — Կը համապատասխանէ դերբայի մեր արդի ըմբռնումին, ու կը նկատուի խօսքի առանձին մաս:

դ) «Յօդ» (ἄρθρον).

ե) «Դերանուն» (ἀντωνυμία). — Կ'ընդգրկէ միայն անձնական և ստացական դերանունները:

զ) «Նախադրութիւն» (πρόθεσις). — Կը պարունակէ նաև նախածանցները:

է) «Ալկաբայ» (ἐπίρρημα).

ը) «Ծաղկապ» (σύνδεσμος).

4) Ճարտասանական երկերը և նրանց արժէքը քերականութեան պատմութեան համար. — Ճարտասանական գործերու մէջ ևս, կը հանդիպինք քերականական տեղեկութիւններու: Ճարտասանական լեզուն, որպէսզի ցանկալի ապաւորութիւն ձգէր ունենդիրներու վրայ, պէտք էր զիմէր ոճական նրբութիւններու և քերականութեան:

5) Հայերի ունեցած լեզուա—քերականական տեղեկութիւնները նախամատենագրական շրջանում. — Տիրքան Բ. ի արքունիքին մէջ կային Յոյն իմաստասէրներ, գիտնականներ, ճարտասաններ և գրողներ, որոնք բնականաբար իրենց հետ բերած կրնային ըլլալ յունական այլ տեսակի նուաճումներու կարգին նաև քերականական տեղեկութիւններ: Քերականութեան մասին ալ նարկութիւններ ունէին նաև ճարտասանական և տրամաբանական երկերը:

6) Լեզուա—քերականական տեղեկութիւնները նախալուծարան հայ մատենագրութեան մէջ (Թրակացիի երկի թարգմանութենէն առաջ). — Հնչարանութիւնն էր լեզուական այն ճիւղը, որուն հայերը առաջին անգամ ծանօթացած ըլլան: Հայ գրերու գիւտը չէր կրնար անտարբեր ձգել հայ լեզուաբանական միտքը հնչարանութեան հանդէպ: Այսուրեւնի համար յունարէն ἀλφάβητοςէն փոխ առնուած (ալփաբետ(f), ալփաբետ(f), ալփափետ(f), և ալփափետ(f) ձևերը հաւանաբար կու գան Հայաստան գործող յունական գպրոցներէն:



Այսուհետև ձեռք կը գործածուի հայ գրերու գրառման վերջ: Ասորերէն արուստայ «գիր» բառը, որ ասոր. ար. «գիր» բառի յոգնակին է, և որ սակայն իբրեւ անեղական կը գործածուի հայերէնի մէջ, հաւանաբար Հայաստան գտնուող Ասորական գաղութներէն կու գայ: Կորիւնը *ܟܘܪܝܢ* հետ միասին, կը գործածէ նաեւ կապ բառը, «ոգջ ամէկ զսեղորայս և զկապս հայերէն լեզուոյն», կամ՝ «կարգեալ յօրինել սեղորայի ք և կապօք»: «Սիւղորայ» բառով Կորիւնը հաւանաբար «վանկ» կը հասկնայ, իսկ «կապօք» ձայնաւորները, իբրեւ բաղաձայններու զօգիչները: Ասորական գաղութներու մէջ «վանկ»-ի համար գործածական եղած է նաեւ «նեգ» բառը, որ փոխառութիւն է ասոր. *həṣā*՝ «կարգալ, հեզել» բառէն: Եզնիկ, Մարկիոնի դէմ գրած իր մէկ հատուածին մէջ, կը գործածէ քերականական եզրեր՝ «միաբար» և «բազմաբար»՝ եզակիի և յոգնակիի փոխարէն: Կիւրեղ Աղեքսանդրացի ունի «արուարար» (արական), «իզարար» (իգական), «բազմար» (յոգնակի), «փոխանակ-անուան» (դերանուն):

6) Թրակացիի քերականութեան թարգմանութեան անհրաժեշտութեան հասունացումը: — Քերականութիւնը՝ ճարտասանութեան և իմաստասիրութեան կողքին, կը նկատուէր իմացական զարգացման կարեւոր ազդակներէն մին: Նշանակալից է որ յունարան գաղացի առաջին արտադրանքները կ'ըլլան Թրակացիի քերականութիւնը, Փիլոնի երկերը, Պիտոլից գիրքը (ճարտասանական ձեռնարկ), Իրենիոսի «Ցոյցք Առաքելական Քարոզութեան»ը և «Ընդդէմ Հերձուածոց» գործերու թարգմանութիւնը: Հայ Եկեղեցին, քաղկեդոնականութեան դէմ մղած իր պայքարին մէջ, անհրաժեշտ էր որ կիրարկէր իմաստասիրութիւնը, ճարտասանութիւնը և քերականութիւնը՝ որոնք այսպէս կը ստանային թէ՛ գործնական և թէ՛ տեսական տարողութիւն:

ԱՆՈՒՇԱՆՈՒԱՆ ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդիւ)

## “ՀԱՅ ՈՒԽՏԱԻՈՐ”

(Պատկերագրող Ուղեցոյց Ս. Տեղեաց)

Տպ. Ս. Յակոբեանց — Երուսաղէմ

1958, էջ՝ 143, Գիծ՝ 400 Ֆիլս:

Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամ խումբ մը Վարդապետ Հայրեր գեղեցիկ գաղափարը ունեցած են հրատարակելու այս հատորը՝ որ նախ ուխտաւորին ձեռքը տրուելիք ամենէն նպատակայարմար ուղեցոյցը կը հանդիսանայ:

Արդարեւ, երկար ատենէ ի վեր կարիքը կը զգացուէր այսօրինակ ուղեցոյցի մը՝ որ հակիրճ այլ համադրական տեղեկութիւններով կտրենար լաւագոյնս լուսարանել Հայ Երուսաղէմ այցելող ուխտաւորը: Տ. Սաւախանեանցի «Ուղեցոյց»ը, տպուած նախորդ դարու վերջերուն, գրաբարխտուն ոճով, շատ համառօտ և ներկայ պահանջներուն զոհացում տալու անկարող, հոռու է իր նպատակին ծառայել կարենալէ: Օրմանեանի «Հայկա-Ներսէս»-ը, միւս կողմէն, թէեւ համեմատաբար աւելի նոր ժամանակի հրատարակութիւն, այնուհանդերձ Ս. Յակոբեանց Մայրավանքէն Ս. Հրեշտակապետաց և Ս. Փրկչի վանքերէն գատ, միջազգային նշանակութիւն ունեցող Սրբավայրերուն մասին ոչինչ կը խօսի, թող թէ Մայրավանքի մասին իր տուած տեղեկութիւններուն մեծ մասն ալ դարձած են ապայծմէ, վանքէն ներս կատարուած զանազան փոփոխութիւններու պատճառով, 1915էն մինչև այսօր:

«Հայ Ուխտաւոր» կը բաղկանայ 143 էջերէ, տպուած լաւորակ թուղթի վրայ, և կը պարունակէ մօտ 40 լուսանկարներ, որոնք կը պատկերացնեն ազգային ինչպէս ընդհանուր քրիստոնէական արժէքով միջազգային Սրբավայրերէն տեսարաններ:

Իր քին զլիսաւոր հրատարակիչը, Հոգչ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան(\*), «Երկու

(\*) Բացի Հոգչ. Տ. Թորգոմ Վրդ.էն, այս հատորին իրենց աշխատակցութիւնը բերած են Գերշ. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան, Հոգչ. Տ. Զաւէն Վրդ. Զինչիւնեան, Հոգչ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէան, Հոգչ. Տ. Վազգէն Վրդ. Գրգորեան, Հոգչ. Տ. Արիս Արդ. Շիրվանեան և Հոգչ. Տ. Լեւոն Արդ. Արէլեան:



Պօսթքին մէջ պարզած է արդէն նպատակը այս հատորին. «Հայ ուխտաւորին ձեռքը ամփոփ ուղեցոյց մը տալ, երեսադէմի՝ և շրջակայքի Սրբաւայրերէն մասնաւորաբար հայկական սեպհականութեանց մասին»։ Ու քիչ ետքը կը յաւելու. «Կատարուած աշխատանքը չունի մասնագիտական նկարագիր։ Զանազան ենք հակիրճ ըլլալ և զանց ընել աւանդական տեղեկութիւնները...»

Գիրքը կը բաղկանայ 9 գլխաւոր մասերէ, որոնց իւրաքանչիւրին մէջ ներկայացուած են առանձինն Ս. Յակոբեանց Մայրավանքը, իր զանազան հաստատութիւններով ու թաղերով (Ս. Յակոբեանց Մայր Տաճարը, Ս. Թէոդորոս Եկեղեցին և Զեռագրաց Մատենադարանը, Տպարանը, Կիւլպէնկեան Մատենադարանը, Ժառանգ. Վարժարանը և Ընծայարանը, Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանը, Պարտիզաթաղը, Պատրիարքարանը՝ իր Դիւանատուններով, Սեղանատունը, Պահանոցը և Փուռը), Ս. Հրեշտակապետաց Եկեղեցին և Վանքը, Ս. Փրկչի Վանքը, Ս. Յարութեան Տաճարը, Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարը, Համբարձման Լերան Եկեղեցիները, Բեթղէնէմի Ս. Մննդեան Տաճարն ու յարակից Սրբաւայրերը, Սողոմոնի Տաճարը և Հայկական Ողջայիքը կամ Ս. Պողիկտոսի Վանքը, Իւրաքանչիւր Սրբաւայրի կամ վանքի մասին տրուած են տեղագրական, պատմական և նկարագրական լուսարանիչ ծանօթութիւններ։ Իսկ գրքի վերջաւորութեան զրուած են երկու յօդուածներ, «Զանազան Բարեպաշտական Արարողութիւնք» և «Ուխտաւորաց Ընդունելութիւն» խորագրերով, որոնք կը խօսին ուխտաւորութեան առնչուած ինչ ինչ ձևակերպութիւններու մասին, և կը պարզեն այն միջոցները՝ որոնց դորձադրութեամբը հայ ուխտաւորը պիտի կրնայ նուազագոյն դժուարութեամբ կարգադրել վանքէն ներս իր և իրեններուն տեղաւորումն ու խմբական այցելութիւններուն մասնակցութիւնը։ Վերջին յօդուածը կուտայ նաև ցանկն ու ամփոփ նկարագրականը Աւագ Եօթնհակի ընթացքին, Հայ Երեսադէմի մէջ կատարուած եկեղեցական հոգեպարար արարողութիւններուն, հանդիսութիւններուն ու թափօրներուն։

\*\*

Ուխտաւորութիւնը, ներկայ դարուն, շատ բան է կորսնցուցած քրիստոնէութեան նախնական դարերու իր արժէքէն ու նշանակութենէն։ Այս երևոյթը բացատրելի է մէկէ աւելի պատճառներով՝ որոնց անդրադառնալ պիտի չուզենք այս էջերէն։ Եւ սակայն, առանց մանրամասնութեանց մըտնելու, կարելի է անվարան հաստատել որ այդ պատճառներէն ամենէն առաջինը կու գայ հոգեկան մարզին մէջ ու կրօնական արժէքներու հանդէպ մարդկութեան պարզած նահանջէն։ Ու այս՝ աշխարհի բոլոր մասերուն մէջ, բոլոր ժողովուրդներուն ալ մօտ, առաւել կամ նուազ չափերով։ Ոչ ոքի զաղտնիք է այլևս թէ օրէ օր կը շատնայ թիւը այնպիսիներու՝ որոնք նիւթին ու մեքենային գերին դարձած, ուրանալ կը տարուին կրօնք ու սրբութիւն։ Որոնք ոսկին փայլէն շլացած, անոր ետեւէն իրենց խելայիզ վազքին մէջ յաճախ կ'անտեսեն իրենց հոգիին արդար ու կենսական պահանջները, փոր մը հացի փոխարէն ոտնակոխելով ամէն սրբութիւն ու բարոյական արժէք։ Որոնք խաղալիք կը դառնան իրենց կործանամէտ կիրքերուն ձեռքը. կիրքեր՝ որոնք ըստ կամոս կը վարեն անոնց կենցաղը։ Ահա թէ ինչու տարուէ տարի ազգերն ու ժողովուրդները կը դառնան աւելի այլամերժ ու հսամուլ, նիւթապաշտ ու անտեսիլ։ Ու այս իսկ է ժխտումը կրօնքին, քրիստոնէական հաւատքին՝ որ եղբայրսրութեան ու իրերօգնութեան գերազանցօրէն ազնիւ սկզբունքներուն վրայ է հաստատած իր ամբողջի հիմերը, և որուն երևոյթներէն մէկն է ու ամենէն սրտառուէ՝ ուխտաւորութիւնը։

\*

Հայ ժողովուրդին համար սակայն, ուխտաւորութիւնը տարբեր իմաստ ու նշանակութիւն է ունեցած կարծես, վաղեմի դարերէն սկսեալ։ Եւ արդարեւ, տարբեր են զգացումները՝ որոնք կը տողորին ու կը լեցնեն Ս. Երկիր այցելող հայ ուխտաւորը։ Վասնզի Ս. Երեսադէմը ըլլալով հանգրձ կրօնական կեդրոն մը, մեզ համար է՝ նաև ու նոյն աստիճան ազգային - հոգեւոր տուն մը



և կրօնական ու մշակութային արժէքներու անփոխարինելի գանձարան մը, իր Ս. Յակոբեանց հնազարեան ու ազգապարծան վանքով ու անոր բազմաճիւղ հաստատութիւններով, որոնք վեր կը բռնեն հայուն անունը և զիրքը միջազգային ու միջբրիտանեական այս ոստանին մէջ ու հայ ուստաւորին սիրտը կը լեցնեն արդար ու անխառն հպարտութեամբ:

Ու այս բոլոր առանձնաշնորհումները, զորս հայը կրցած է ձեռք ձգել Ս. Երկրին մէջ — հոգևոր, մշակութային, կրթական և իրաւական՝ իբրև Ս. Քաղաքի երեք իրաւակից Պատրիարքութիւններէն մին՝ վաշեցիով համահաւասար իրաւունքներ Յոյն և Կաթողիկ երկու մեծ և զօրաւոր եկեղեցիներու կողքին՝ միջազգային սրբավայրու մէջ — արդիւնք են իր զաւակներուն, ու անոնցմէ մասնաւորաբար «մահախոյր» ըլլալու երանութեան արժանացողներուն, լիարուսն ու անսակարկելի առատաձեռնութեամբ տուած սրտաբուխ նուէրներուն: Մեր Գանձատան ճոխ սպաններուն ու եկեղեցւոյ այլ անօթներուն, նկարներուն ու զարդեղէններուն վրայ իբր յիշատակ մնացող անունները խօսուն ապացոյցներն են այդ իրողութեան:

Հարկ չկայ չեչտելու թէ ներկայիս ևս այս Հաստատութիւնը չէն ու պայծառ կը մնայ շնորհիւ իր զաւակներուն բոլորանուէր զոհարեութեան ու կատարած նուիրատուութիւններուն: Հայ ուստաւորը իր լուսման տալով Ս. Աթոռին, իր հայրերուն արդար ու երախտաւոր գործն է որ շարունակած կ'ըլլայ ու սերունդներու արեան գինը եղող այս ազգային-հոգևոր տան ու անով պայմանաւոր արժէքներուն հանդէպ իր տածած անշահախնդիր կեցուածքը յայտնաբերած:

\*

Արդարև, Ս. Երուսաղէմ այցի եկող մը այլուր այցելողէ բոլորովին տարբեր զգացումներով համակուած ու տարբեր տպաւորութիւններ կրած կը բաժնուի անկէ: Եւ ասիկա շատ բնական երևոյթ մըն է: Վասնզի եթէ այլ ոստաններ այցելելով գոհացում տուած կ'ըլլանք ճարտարարուեստի, քաղաքակրթութեան և մշակութային մարզերու հանդէպ մեր ունեցած հետաքրքրութեան, Երուսաղէմ այցելելով մենք ամենէն առաջ գոհացումը կը գտնենք ու պէտք է գտնենք մեր հոգեկան պահանջներուն: Եւ ա՛յս է արդէն զլիսաւոր՝ եթէ ոչ միակ տարբերութիւնը որ գոյութիւն ունի զբօսաշրջիկութեան և ուխտաւորութեան միջև: Առաջինը իբրև մեր մտային ու մարմնաւոր հետաքրքրութիւններն ու բաղձանքները, իսկ երկրորդը՝ հոգին գոհացնող, յագեցնող, լիացնող երևոյթներ:

Կ'արժէ որ Ս. Երկրը այցելող ամէն ինչ ուխտաւոր ա՛յս զգացումներով մօտենայ անոր սրբութիւններուն, ու իր հոգւոյն «սափօրը» լեցուցած «անմահական գինիով» վերադառնայ իր տունը, նոյն այդ հոգեկան գոհացումի, երանութեան վիճակը փոխանցելու համար իր շուրջիներուն: Ու Հայ Ուխտաւոր հատորը այս տեսակէտով մեծ օժանդակ մը պիտի հանդիսանայ անոր, մէկ կողմէն վառ պահելով յիշատակը իր ուխտագնացութեան օրերուն, կեանքի քաղցրութիւնները եղծող յուսաբեկիչ երեւոյթներու առջև, իսկ միւս կողմէն հազորդ պահելով իր շուրջիները ու բոլոր անոնք՝ որոնք բախտը չեն ունեցած այցելելու այս համաքրիստոնէական կեդրոնը, անկէ ճառագայթող աննուազ ու անսպառ լոյսին:

Երուսաղէմ

ԿԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ



## ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԵՌԱԶ

### ՄԵՍՐՈՊ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՈՒՂԵՐՁԸ(\*)

Սրբազան Հայր,

Սուրբ Յակոբեանց Միաբանութիւնը բախտն ունի Ձեր գահակալութիւնէն ի վեր այս ութերորդ Նոր Տարին ողջունելու:

Ամէնքս անհասարակ կը խայտանք ուրախութեամբ՝ տեսնելուս համար Ձեր Ամենապատուութիւնը քաջողջ ու կայտառ, ու աշխատելու և գործելու իր բովանդակութիւնն ու կորովին մէջ, և հպարտ ենք ունենալուս համար Ձեզ նման բազմապիսի ձիրքերով ու անգուցական արժանիքներով օժտուած ամենապատուական Հայրապետ մը, որ իր գահակալութեան առաջին օրէն ի յայտ բերաւ հարագատ հօր՝ մը բարի սիրտը, արթուն ղեկավարի մը խոհական իմաստութիւնը ու գերընտիր դաստիարակի մը բարձր կարողութիւնը, որով տարուէ տարի բարձրացաւ Սուրբ Աթոռիս յարգն ու վարկը թէ՛ յաշն ազգայնոց և թէ՛ յաշն Հոգատար Կառավարութեան և օտարներու՝ և տիպար ու բարեհամբաւ հաստատութեան մը վերածուելու ճամբուն մէջ մտաւ այն:

Միաբանութիւնս, Սրբազան Հայր, բոլոր սրտով կը մողթէ ու կը ցանկայ երջանիկ պատեհութիւնն ունենալ շատ ու շատ նոր տարիներ ողջունելու Ձեր Ամենապատուութիւնը՝ Ս. Յակոբեանց գահին վրայ, որպէսզի հնարաւորութիւն ու միջոց ունենաք ի կատար ածելու Ձեր բարի բարի իդձերն ու նպատակները, ու Առաքելական Աթոռը դնելու ամուր ու ապահով հիմերու վրայ, տալով անոր բարգաւաճ ու զարգացած վիճակ մը բարոյապէս ու նիւթապէս:

Եւ արդէն այդ ուղղութեամբ աշխատանքներ կատարուած են ու կատարուելու վրայ են տակաւին, որոնց մէկ քանիները այս հանդիսաւոր առթիւ թուել անպատեհ չեմ համարիր: 1927ի ամբան պատահած

երկրաշարժի աղէտը թէև պահ մը սահմրուկեցուց ամէնքս, բայց գոհութիւն Տեառն, փաստերը մեծագոյն մասամբ դարմանուեցան հետզհետէ, ու նախկինէն յաւաքոյն վիճակներու վերածուեցան Բեթղէնէ մի մեր վանքն ու եկեղեցին, Պաղչէթաղը, Վանքին հիւանդանոցը և վնասուած ուրիշ կարգ մը թաղեր ու յարկարաժիններ ու Վանքէն դուրս գտնուած բաւական թուով աթոռապատկան շէնքեր: Ասոնց վրայ աւելցան նոր շինութիւններ ալ, ինչպէս Պաբոնտէրի ամարանոցը, և իբրեւ հաստեմարեր կառուածներ՝ Յօպպէի վանքին յարակից ու Մեծ Արարն մէջի նորակառոյց մեծ տուները: Տարւոյս ընթացքին, Սուրբ Աթոռը ճոխացաւ նաև առանձին ելեքտրական լոյսով, որ Միաբանութեան ու Վարժարանին մեծ դիւրութիւն ու յարմարութիւն ընծայելէ զատ, շէնցուց ու պայծառացուց նաև Ս. Աթոռը:

Այս ամենուն պատկը և Ձեր Ամենապատուութեան անունին փառքը կազմող հաստատութիւնը պիտի ըլլայ քաղաքիս Ազգային Երկսեռ Նախակրթարանի և Մանկապարտէզի նոր և հոյակապ շէնքը, որ թէև բաւականին ծանր նստաւ, բայց Ս. Քաղաքիս մէջ ըստ ամենայնի աղգին պատիւ բերող հաստատութիւն մը եղաւ անիկա, և նկատելով թէ ազգային մանկաւոյն համար անհրաժեշտութիւն մըն էր այդ վարժարանը, Սուրբ Աթոռը չընկրկեցաւ ոչ մէկ նիւթական զոհողութեան առջև, ու Աստուծով մօտ ժամանակէն անոր պաշտօնական բացումը տեսնելու առիթն ալ պիտի ունենանք Ձեր բարձր հովանաւորութեամբ և օրհնութեամբ:

Աւելորդ կրկնութիւն մը պիտի ըլլար վերոտին յիշել՝ գրեթէ երեք քառորդ դարէ ի վեր Ազգը մահազող ու Միաբանութիւնը տառապեցնող Կարկուռեան դատին ինպատար Ս. Աթոռին բարեյաջող վերջաւորութիւնը:

Դալով նիւթական վիճակին, չնայելով որ տոկոսաւոր պարտքի պատկանելի գումարի մը տակ ճնշուած է տակաւին Սուրբ Աթոռը, բայց անոր վարկն ու պատիւը այնքան մեծ է հրապարակի վրայ, որ Երուսաղէմի մէջ ամենէն վստահելի ու ամենէն ապահով տունը նկատուած է այն: Հիմա երբ այլևս վերջ գտան մեծ գատերը

(\*) Խօսուած 1929ի Նոր Տարւոյ հանգէսին ի Պատրիարքարան, Դուրեան Պատրիարքի օրով:



ու դարմանուցան երկրաշարժէն յառաջացած վնասները, որոնք չնախատեսուած ծախքերու դուռ բացին, մեծ յոյս ունինք՝ որ պարտքն ալ աստիճանաբար պիտի նւազի ու խնայողական միջոցներու կիրառութեամբ կամաց կամաց հաւասարակշիռ ու ինքնաբաւ վիճակ մը պիտի ունենայ Սուրբ Աթոռը:

Յիշատակութեան արժանի է նաև որ տարւոյս ընթացքին Միաբանութիւնը բախտ ունեցաւ կարգ մը սարկաւազներ ևս աւելցած տեսնել իր շարքին վրայ, որոնք իրենց աստիճանակից երէց եղբայրներուն հետ երեքտասանեակ մը նոր ու թարմ ուժեր աւելցուցին Սուրբ Աթոռին: Անոնք թէև տակաւին ուսանող երիտասարդներ, բայց տաքակոյս չկայ թէ Սուրբ Ուխտիս նուիրեալ անդամներն ըլլալու խորունկ գիտակցութեամբ՝ սրտովին փարած են իրենց հոգևոր կոչումին, ու իրենց մեծ վարդապետին հովանիին տակ ու Անոր շունչով սնած ու զարգացած, այժմէն կը պատրաստուին ըլլալու այս Աթոռին բոլորանուէր, սիրտցաւ ու գործունեայ Միաբանները, անոր կենսական շահերուն ու բարի համբաւին նախանձախնդրութեամբ, նախնեաց խնկելի յիշատակներուն և Սուրբ Տեղեաց ազգային իրաւունքներուն սիրովը լեցուած:

Նոյնպէս տարւոյս մէջ քահանայական սուրբ օծումն ստացան չորս միաբանակից նորընծայ եղբայրներ, որոնցմէ երկուքը<sup>(\*)</sup>, Չեր Ամենապատուութեան շնորհիւ ու հոգածութեամբ, այժմ կ'ուսանին Անգլիոյ մէջ, ու կը պատրաստուին իրենց լուսագոյն ուժերը ի սպաս զնելու ազգային այս պանծալի Հաստատութեան: Ասիկա Ս. Աթոռի տարեգրութեանց մէջ գրեթէ աննախընթաց երևոյթ մըն է, զոր կարելի չէ անյիշատակ թողուլ:

Կրթական գործին զուգընթաց Սուրբ Աթոռը կը շարունակէ իր գրական գործունէութիւնը, զոր սկսած է քանի մը տարիներէ ի վեր: Տպարանը իր տասը գործաւորներով կ'աշխատի անընդհատ, մամուլը կը դառնայ առանց զաղար առնելու ու գրաշարները տառաքլիջներուն առջև մեղուներու նման կ'աշխատին յարատեւ: Այս գործունէութեան իրրեւ արդիւնք, վերջին

երեքուկէս տարուան ընթացքին Ս. Աթոռի Տպարանը լոյս ընծայեց քսանմէկ մեծ ու փոքր հատորներ, որոնց երեքը մամուլի տակ են տակաւին: Այդ հրատարակութեանց մէջ աչքառու տեղ մը կը բռնեն Չեր Ամենապատուութեան այնքան փնտռուած Հայերէն լեզուի դասագիրքերը և հանգուցեալ երջանկայիշատակ Տ. Մաղաքիա Օրմանեան Սրբազանի Աշխատքներ:

Գրական գործունէութեան կարգին՝ այս երրորդ տարին է որ կը շարունակուի Սէնթ, որուն աւելի քան կէս դարէ ի վեր մարած ճրագը վառեցիք, Սրբազան Հայր, և որ կը հրատարակուի Չեր բազմահմուտ ու պատուաբեր աշխատակցութեամբ և Գերշ. Տ. Բարդէն Սրբազան եղբոր փորձ ու բեղուն խմբագրապետութեամբ: Այն իր կրօնաբարոյական ու բանասիրական լուրջ բովանդակութիւնով զգալի պակաս մը կը լեցնէ այսօր, ու կը խօսի աշխարհի չորս հովերուն ցրուած Հայութեան սիրտին ու հոգիին, Սուրբ Սիոնի վառարանէն արծալելով հոգևոր մխիթարութեան ու սփոփանքի անուշ ցուքեր:

Այս ամէն պարագաները զոր յիշատակեցի, Ամենապատու Սրբազան Հայր, անպատում հրճուանքով ու երախտագիտութեամբ կը լեցնեն մեր սիրտերը, ու կը համարինք զանոնք իրրեւ Չեր կողմէ նոր Տարիի արժէքաւոր կազանդէքներ՝ Չեր զաւակներուն ձօնուած:

Այս 1929 տարին պատմական թուական մըն է Սուրբ Աթոռիս համար, վասնզի Չեր հոգևոր որդիները, հեռուէն թէ մօտէն, բախտը պիտի ունենան տօնելու ամենասիրելի Հօրդ ու Հայրապետիդ և մեծանուն Ուսուցչապետիդ քահանայութեան և զրական ու կրթական գործունէութեան Յիսնամեայ նորեկները: Կը մաղթենք որ նախախնամող ողջամբ հասցնէ մեզ այդ բաղձալի և երջանիկ օրուան:

Կը մաղթենք զարձեալ որ Բարձրեալն Աստուած Հայաստանեայց Ս. Եկեղեցին իր նուիրապետութեամբ, Հայ ազգն իր Հայրենիքով ու Առաքելական Սուրբ Աթոռ իր արժանընտիր և սրբազնագոյն Գահակալով և բարեջան ու անձնուէր Միաբանութեամբ անփորձ ու անստան պահէ միշտ և յաւիտեան:

(\*) Տ. Տիրան Արքեպ. և Տ. Նորայր Եպս.

(Սիոն, 1929 Փետրուար - Մարտ, էջ 92-93):



## ՄԵՐ ԹԵՄԵՐԷՆ

### ԻՐԱՔԻ ԹԵՄԷՆ

Պաղատաւէն զրկուած թղթակցութենէ մը կը տեղեկանանք որ Իրաքի Հայոց Առաջնորդ Դերշ. Տ. Զգօն Եպիսկոպոս, ի Ս. Էջմիածին Եպիսկոպոսանալէ յետոյ, իր թեմը վերադարձի ճամբուն վրայ, հանգրւած է նաև Իսթանպուլ՝ ուր տասն օրեր հիւրը եղած է Ամեն. Տ. Գարեգին Պատրիարքին: Անդ պատարագած ու քարոզած է: Այցելած է նաև Ս. Խաչ Գպրեմիանքը, Գալֆայիան ու Գարակէօղեան Սրբանոցները և խօսած է ազգային այս հաստատութեանց աշակերտութեան: Այս կապակցութեամբ հետեւելու շահեկան տեղեկութիւնները կը տրուին Պոլսոյ ազգային կեանքի մասին և Տ. Զգօն Եպս. ի գործունէութեան շուրջ Իրաքի մէջ: — Պոլսոյ մէջ կան 33 գործօն եկեղեցիներ: Ամենքն ալ շէն են և բարեկարգ: Սէրն ու խաղաղութիւնը համատարած են: Եկեղեցիներու և բարեսիրական հաստատութեանց հանդէպ գուրգուրանք կայ: Գարեգին Սրբազան Պատրիարքը թէ և Ֆիզիքապէս փոքր ինչ անհանգիստ էր, բայց միաժամ ժիր է և բոլոր զգայարանքներովը սուր: Ընդհանուրին սէրն ու յարգանքը կը վայելէ: Իր վարչական և թաղական կազմերը ընտիր են. աւագանին ալ վստահութիւն և բարեացակամութիւն կը ցուցնէ: Ընդհանուր պատկերը միթիարական է: Դրպրեմիանքը ունի 112 սաներ, երկու Սաղիմական վարդապետներու անմիջական հսկողութեան ներքեւ:

Դերշ. Տ. Զգօն Եպս. Նոյեմբեր 29ին առաւօտ կանուխ Պաղատաւ հասաւ: Նոյեմբեր 30ին պատարագեց և քարոզեց բնական ունենալով «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»: Յաւարտ Ս. Պատարագի դահլիճին մէջ ընդունելութիւն եղաւ: Մայր Հայրենիքի և Մայր Աթոռին վերելքի մասին Զգօն Սրբազանի տուած վկայութեամբ ժողովուրդը խանդավառուեցաւ: Նոյնպէս եղաւ յաջորդ Կիրակին: Այցելուներու, հետաքրքիրներու և շնորհաւորողներու շարքը անհատնում է Առաջնորդարան: Թեմական

Պորհուրդին (Քաղաքական Ժողով) զիրքն ու գործունէութիւնը գնահատելի է: Վերադարձին, յիսուն տինարի նուէր մը ըրին իրենց նոր եպիսկոպոսացած Առաջնորդին որ մատանի մը առնէ: Գալէն առաջ Առաջնորդարանի գրասենեակին կահկարասիները ամբողջութեամբ նորոգած էին: Ընթացիկ գործերը աւելի կանոնաւոր կ'ընթանան: Նոր Ատենապետը՝ Դուկա. Վարդան Ալէքսանդրեան, Եւրոպայէն վերադարձած է, և շատ ժիր ու շրջահայեաց գործունէութեան լծուած է, Ատենադպիր Տիար Գալուստ Սիւրմէնեանին և Ժողովին լրութեանը հետ:

Տ. Զգօն Եպս. Թեմական Պորհուրդի Պատ. Դիւանին հետ, Էջմիածնէ վերադարձին առիթով, պաշտօնապէս այցելեց արուարձաններէն Արէլիսի Ազգ. Արեւմտեան վարժարանը, որ ունի 125 երկսեռ աշակերտ և ամբողջութեամբ ի նորոյ վերանորոգուած ու կահաւորուած է արդէն: Այցելեց նաև Նորաշէնի Ազգ. Արեւելեան վարժարանը, որ ունի 250 երկսեռ աշակերտ: Երկու վարժարաններուն մէջ տեղի ունեցան պատշաճ ընդունելութիւն և հանդէս:

Տ. Զգօն Եպս. Թեմական այցելութիւն տուաւ Մուսուլ (Դեկտ. 13-17) և Քէրքուկ (Դեկտ. 26-28): Կայաններուն մէջ բազմութեամբ զիմաւորուեցաւ, եկեղեցիները «Հրաշափառ» ու մուտք գործեց, Վեհ. Հայրապետի օրհնութիւնը տուաւ, Էջմիածնի և Հայրենիքի յառաջդիմութեան նկարագրութեամբ սփոփանք և ոգևորութիւն ծայր տուաւ ամէնքի մէջ:

Մուսուլի Ազգային վարժարանը այս տարի ծեփուած և ամբողջութեամբ նոր կահկարասիներով ճոխացած է շնորհիւ Կիւլպէնեան Հիմնարկութեան Խնամակալութեան միջոցաւ ընծայուած նպաստին: Այս, ուսուցչաց ոռճիկներուն բարձրացումը և երեք հարիւր երկսեռ ուսանողներուն ոգևորութիւնը մեծապէս գոհացուցիչ են:

Աւրախալի է նաև այն իրողութիւնը որ Տ. Զգօն Սրբազանի թելադրութեամբ և Թաղականութեան ժիր Ատենապետ՝ Դուկա. Մովսէս Տէր Բակոբեանի թափած քանքերով, Իրաքի նոր կառավարութիւնը վարժարանով մը օժտած է քրտախօս երեսուն զուտ հայ ընտանիքներու զիւղը՝ Ավգորիկ, զոր Զախոյի, Հափրէզքի և շրջակայ հայա-



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Դեկտեմբեր ամսոյ վերջերը, թէ՛ կարգ մը ռատիո-կայաններէն եւ թէ՛ հայ եւ օտար ինչ ինչ թերթերու մէջ, լրատուութիւններ երեւցան «Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան նպիսկոպոսներէն մէկը եւ վեց վարդապետներ» Յորդանանու երկրէն տարագրելու մասին: Լուրերը առնուած էին յայտնապէս պղտոր աղբիւրներէ: — Այս մասին իրականութիւնը հետեւեալն է. — Կառավարական ոչ մէկ հրահանգ տրուած է Միաբանութեանս ռեւէ անդամ մը երկրէն արտորելու մասին: Միայն թէ Յորդանանու երկրին մէջ տիրող օրէնքի մը համաձայն, օտարահպատակներուն բնակութեան արտօնագիրը (իքամէն) կը նորոգուի տարուէ տարի, մէկ տարուան համար միայն: Այս տարի երբ Միաբանութեանս անդամ օտարահպատակ Հայերու, ըստ սովորականին, բնակութեան արտօնագիր խնդրուեցաւ, Քաղաքիս Կառավարիչէն նօթ մը եկաւ որ Ներքին Գործոց Նախարարը չի հաճիր վերանորոգել 1959 տարուան համար բնակութեան արտօնագիրը երեք օտարահպատակ Միաբան Հայերու միայն: Անոնք էին. Ամերիկեան քաղաքացիներ՝ Կերշ. Տ. Շնորհք եպս. եւ Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ., ու Լիբանանեան քաղաքացի Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.: Կերշ. Տ. Սուրէն Արքեպս., իբրեւ Ընդհ. Վարիչ Գործոց Ա. Աթոռոյ, դիմում կատարեց Ներքին Գործոց Նախարարին, խնդրելով որ վերոյիշեալ օտարահպատակ Միաբաններու երկիր մնալու արտօնութիւնը շնորհուի ըստ նախընթացի, ի նկատի ունենալով որ Երուսաղէմի Քրիստոնեայ Պատրիարքարանները միշտ իրենց մէջ ունեցած են օտարահպատակ անդամներ՝ որոնք իրենց կրօնական պարտականութեանց միայն նուիրուած են եւ հաւատարմօրէն, յարգած են երկրին օրէնքները: Ի պատասխան այս դիմումնագրին Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչէն ստացուեցաւ 29 Դեկտ. 1958 թուակիր հետեւեալ նամակը.

«Ի հետեւողութիւն Ձեր խնդրագրին, ուղղուած Ն. Վսեմութիւն Ներքին Գործոց Նախարարին, որով կը խնդրէիք Տ. Շնորհք եպիսկոպոսի իքամէի նորոգութիւնը,

բնակ այլ գիւղերու կարգին, Առաջնորդ Սրբազանը պիտի այցելէ զարնան: — Մուսուլ, Առաջնորդ Սրբազանի այցելութեան զուգարկացեալ Քաղգէացոց նորընտիր պատրիարք Ամեն. Պաւլոս Եջիսի գահակալութեան հանգրիսութիւնը, որուն ներկայ գտնուեցաւ Արթ. Տ. Խորէն Քհյ. Գասապեանի և Իսրայէլ Փիլիկեանի հետ:

Դեկտ. 26-30ին, Քէրքիւլի Հայոց եկեղեցին, զպրօքը՝ 175 աշակերտներով և երիտասարդաց և տիկնանց կազմակերպութիւնները եռուզեռի մէջ են Արթ. Տ. Վարդան Քհյ. Առաքելեանի և Դոկտ. Տիգրան Աստարճեանի ընկերակցութեամբ, Տ. Զգօն Սրբազան այցելեց նորընտիր Միւթէսարըֆին՝ որ յաջորդ օրն իսկ փոխադարձեց այցելութիւնը և խօստացաւ հարկ եղածն ընել, որպէսզի մեր ազգային վարժարանի շինութեան համար, Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ գնուած 7500 քռ. մէթր հողամասին թափուի փոխանցումը կատարուի անյապաղ:

Առաջնորդ Սրբազանը այցելեց նաև Միւլէյմանիէ: Տեղւոյն տասը առևտրական հայ ընտանիքներուն գլուխները ինքնաշարժերով դիմաւորութեան եկած էին մինչև

կէս ճամբան: Ի պատիւ Սրբազանին տրուած ճաշէն յետոյ իրենց տրուեցան խապրիկներ Ա. Էջմիածնէն:

Յունուար 10ին, Թեմական Խորհուրդի Ատենապետ Դոկտ. Վարդան Ալէքսանդրեանի, Պուշքճեան երգիչ եղբարց, երաժիշտ Պր. Կարապետ Քիլմիշեանի ղեկավարած «Կոմիտաս» քառամասն խումբի հետ, ութ ինքնաշարժերով Տ. Զգօն եպս. այցելեց Հապպանիէ, ուր 60է աւելի հայ ընտանիքներ կան: Ունին մատուռ-ակումբ և զպրօք՝ 56 երկսեռ աշակերտներով, ինչպէս նաև Հայերէնի և կրօնի յատուկ ուսուցիչ մը: Կէս ճամբան, ազգայինները, տեղւոյն զինուորական, քաղաքային և կրօնական մեծամեծներուն հետ դիմաւորութեան եկած էին: Հապպանիոյ համար բացառիկ երևոյթ էր: «Հրաշափառի միջոցին, Սրբազանը Հայերէն և Անգլերէն լեզուներով խօսեցաւ պատշաճը: Պատարագեց, քարոզեց, հաղորդեց և «Ջրօրհնէքով մխիթարեց և ոգևորեց տեղւոյն Հայութիւնը, որ իր կարգին, հաւաքական ճաշկերոյթով մը պատուեց ամէնքը:

Առաջնորդ Սրբազանը մօտ օրէն պիտի այցելէ նաև Պասրա:



այսու Ձեզ կը տեղեկացնեմ թէ Ներքին Գործոց Նախարարը իր 24-12-1958 թուակիր պաշտօնագրով իր հաւանութիւնը տուաւ որպէսզի վերոյիշեալ նպիսկոպոսի բնակութեան արտօնութիւնը նորոգուի 1959 տարուան համար: Այս առթիւ կ'ուզեմ որ հաղորդէք Տ. Վազգէն Վրդ. Գրպրբալեանին եւ Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանին թէ իրենց եւս 1959 տարւոյ բնակութեան արտօնագիրը շնորհուած է»:

Ընդունեցէք յարգանքներս

(ստորգ.) ՀԱՍԱՆ ԷԼ-ԲԷԹԻՊ

Կառավարիչ Երուսաղէմի

«Օրինակներ ղրկուած — Երուսաղէմի Ոստիկանապետին եւ Անցագրային Գրասենեակի Փոխ Տնօրէնին, ի հետեւողութիւն սոյն խնդրոց առնչութեամբ իմ 27-12-1958 թուակիր նամակին»:

Տեղական արաբական թերթերու մէջ եւս հերքուեցաւ կարգ մը ռատիօ-կայաններէն տրուած որպէս թէ արքայական այս լուրերը, որոնք կարծես յատկապէս չափազանցուած էին երկրիս բարի անունը վարկաբեկելու յետին նպատակներով:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՊԵՏԻՆ. — Փետր. 22ին, կանխապէս առնուած ժամադրութեան մը համաձայն, մեծ պատգամաւորութիւն մը Ամման գնաց ներկայանալու Երկրիս Վեհ. Թագաւորին, անգամ մը եւս խնդրանք մատուցանելու Տիրան Սրբազանի վերադարձին համար: Պատգամաւորութիւնը, զոր կը գլխաւորէր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., կը բաղկանար ութ հոգեւորականներէ եւ յիսուն աշխարհական ծանօթ ազգայիններէ եւ տիկիներէ, Երուսաղէմէն եւ Ամմանէն:

Նախ քան Վեհ. Թագաւորին ներկայանալը, Պատգամաւորութիւնը այցելեց Երկրի Զինուորական Ընդհ. Հրամանատարին: Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. նախ յայտնեց Պատգամաւորութեան այցելութեան նպատակը եւ ապա Հոգեւոր Հայրերէն մին կարդաց Արաբերէն լեզուով պատրաստուած կարճ յուշագիր մը՝ ուր անգամ մը եւս խնդրանք կ'ըլլար որ Յորդանանու իմաստուն Կառավարութիւնը վերանկատողութեան ենթարկէ Տիրան Սրբազանի վերադարձի եւ վերահաստատման հարցը: Թուղթը կարդացուելէ յետոյ յանձնուեցաւ Հրամանատարին:

Զինուորական Ընդհ. Հրամանատարը իր ուրախութիւնը յայտնեց սոյն պատկառելի պատգամաւորութիւնը ընդունած ըլլալուն համար, եւ խոստացաւ արդարութեան եւ օրէնքի ճամբով իր կարելին ընել պատգամաւորութեան խնդրանքին գոհացում տալու համար, ի հարկին մինչեւ իսկ անձամբ հարցը Վեհ. Թագաւորի բարեհաճ նկատաւման յանձնելով:

Ապա պատգամաւորութիւնը այցելեց Պաշտպանութեան, Արդարութեան եւ Երկրագործութեան Նախարարներուն՝ որոնց առջեւ եւս նոյն իմաստով խնդրագիրներ կարդացուեցան եւ իրենց յանձնուեցան: Նախարարներ հաւաստիացնելէ յետոյ թէ կրօնական համայնքներ բացարձակ ազատութիւն կը վայելին այս երկրին մէջ իրենց կրօնական ներքին գործերը տնօրինելու, համաձայն իրենց օրէնքներուն եւ սովորութեանց, յուսադրեցին որ Հայ համայնքին իրաւունքներն ալ Երկրին արդարութեան օրէնքներով պիտի պաշտպանուին: Պատգամաւորութիւնը պիտի այցելէր նաեւ Վարչապետին եւ Ներքին Գործոց Նախարարին, սակայն ժամանակը անցած ըլլալով, յառաջիկայ օրերուն ձգեց անոնց այցելելը եւ ժամը 1ին ուղղակի բարձրացաւ Արքայական Պալատ:

Երկրիս կորովի, համակրելի եւ երիտասարդ Վեհապետը սիրալիք կերպով ընդունեց պատգամաւորութիւնը իր ամբողջ կազմով, իր ընդունելութեան զահլիճին մէջ: Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. թարգմանի միջոցաւ պարզեց պատգամաւորութեան այցելութեան նպատակը եւ խնդրեց որ թոյլատրէ Վեհապետը որպէսզի պատգամաւորութեան անդամներէն մին կարդայ յատկապէս պատրաստուած խնդրագիրը: Հետեւեալն է անոր թարգմանութիւնը:



### «Զեղ Վեհափառութիւն»,

Մենք, Զեղ Վեհափառութեան ամենահաւատարմ հպատակներ, խորապէս պատուում կը զգանք զմեզ այսօր, երբ Զեղ Վեհափառութիւնը շնորհալի կերպով զմեզ կ'ընդունի այս արքայական ունկնդրութեան համար: Մենք կ'օգտուինք այս բարերասէկ առիթէն ներկայացնելու Զեղ Վեհափառութեան մեր ամենէն անկեղծ բարեմաշքութիւնները, եւ վերանորոգելու մեր հաւատարմութիւնը այս սիրելի Գահին, եւ մեր շատ իմաստուն եւ բաջ բազաւորին: — Զեղ Վեհափառութիւնը եղած է մեր յոյսի փառոսը, մեր բաջութեան աղբիւրը եւ արդարութեան մեր կեիտը: Զեղ Վեհափառութեան առաջնորդութեան ներքեւ, եւ կամօքն Ամենակալ Աստուծոյ, մենք վերապրեցանք մեծ փորձիկի մը մէջէն. եւ Զեղ Վեհափառութեան խնամքին շակ կը հաւատանք թէ մենք միշտ պիտի ապրինք խաղաղ ու երջանիկ, եւ պիտի վայելենք կեանքի լի բարիքները մեր այս սիրելի երկրին մէջ:

Զեղ Վեհափառութեան ամենաբարեհաճ քոյրութեամբ եկած ենք այսեղ այսօր քախանձագին խնդրանք ներկայացնելու Տիրան Արեւիկայ. Ներոյեանի հարցին համար: Ինչպէս Զեղ Վեհափառութիւնը զիսէ, Տիրան Արեւիկայ. պատրիարք ընտրուած էր համաձայն մեր դարաւոր աւանդութիւններուն եւ Սրբոց Յակոբեանց Ուխտի կանոններուն: Շուրջ 300 պատրիարքներ եկած են իմէ՛ք առաջ: Անոնք բոլորն ալ ընտրուած են համաձայն իրենց ժամանակի աւանդութիւններու եւ կանոններու, եւ առանց բացառութեան ամենքն ալ հանձնուած են իրենց ժամանակներու իշխանութեանց կողմէ:

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը չի կրնար ուրիշ պատրիարք մը ընտրել առանց բռնաբարելու իր կանոնները եւ աւանդութիւնները:

Վստահ ենք որ Զեղ Վեհափառութիւնը, իբրեւ զերազոյն պատգաւանը եւ պահապանը Սուրբ Տեղեաց եւ երուսաղէմի Սրբաւայրերու մէջ իրազ «Սրաբուս Գոյի», պիտի չուզէ որ այսպիսի կանոններ ոտնակոխուին: Տիրան Արեւիկայիսկ պատմութեան ընթացքով Պատրիարքն է. ան այժմ տարագիր, հեռու է իր Միաբանութենէն եւ եկեղեցիէն՝ որուն մէջ ան մեծցած է: Կր խնդրենք Զեղ Վեհափառութենէն որ շնորհէ մեզի, բոլորիս, որ Զեղ Գահին հաւատարմ բազմաթիւներու համայնք մըն ենք, եւ կրօնական հաստատութիւն մը՝ նուիրուած Աստուծոյ խօսքը բարոյնելու եւ այս երկրին ծառայելու, արքայական հրամանագիրը՝ որով Տիրան Արեւիկայ կարենայ վերադառնալ, նաեւ հաստատագիրը՝ իբրեւ Պատրիարք Հայոց երուսաղէմի: Ասիկա պիտի ըլլայ ամենաշնորհալի արարք մը՝ որ կը հաւատանք թէ պիտի ըլլայ ի շահ այս երկրին, եւ ի սպաս Զեղ Վեհափառութեան փափանքներուն . . . :

Այս խնդրագիրը Զեղ Վեհափառութեան արդար ձեռնեցուն յանձնելով վստահ ենք թէ Զեղ Վեհափառութիւնը պիտի շնորհէ մեզի այս խնդրանքին կատարումը: Անգամ մը եւս կ'արտայայտենք Զեղ Վեհափառութեան մեր ամենէն անկեղծ երախտիք արքայական ունկնդրութեան այս մեծ պատիւին համար:»

ՍՈՒՐԵՆ ԱՐԲԵՊՍ. ՔԷՄԷԱՆԵԱՆ

Ընդհ. Վարչի Գործոց երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան

Ընթերցումէն յետոյ Վեհ. Թագաւորը իր գոհունակութիւնը յայտնեց խնդրագրին մէջ արտայայտուած հաւատարմական զգացումներուն համար, եւ ըսաւ թէ նկատողութեան պիտի առնէ ներկայացուած խնդրանքը եւ պիտի նայի որ կարելի փութով գոհացուցիչ եզրակացութեան մը բերուի այս հարցը: Պատգամաւորութեան անդամները կրկին իրենց յարգանքը ընծայելէ յետոյ իրենց սիրելի Վեհապետին, աւելի յուսադրուած վերադարձան իրենց տեղերը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՎԱՐՁԱՊԵՏԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ: — Դարձեալ նախապէս առնուած ժամադրութեան մը համաձայն, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի զլխաւորութեամբ, 12 հոգինոց պատգամաւորութիւն մը, բաղկացած 6 հոգեւորականներէ եւ 6 աշխարհական ազգայիններէ, Մարտ 1ին Ամման գնաց, ամբողջացնելու համար Փետր. 22ի պատգամաւորութեան գործը: Պատգամաւորութիւնը նախ այցելեց Ներքին Գործոց Նախարարին, որուն յանձնուեցաւ Տիրան Սրբազանի վերադարձին համար խնդրագիր մը: Ներքին Գործոց Նախարարը, իբրեւ նախկին փաստաբանը Տիրան Սրբազանին, ի միջի այլոց, հաստատեց թէ ինք ալ համոզուած է որ Տիրան Սրբազանին դէմ եղած զրպարտութիւնները շինծու եւ անհիմն են: Իր վերադարձին համար հրահանգը Նորին Վեհափառութիւն Թագաւորէն պէտք է գայ, եզրակացուց:

Ժամը 1ին, պատգամաւորութիւնը ամբողջութեամբ արդէն Վարչապետարան ընդունուած էր: Դարձեալ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի ցուցմունքով կարդացուեցաւ խնդրագիրը, որմէ յետոյ Տոքթ. Վահան Գալպիեան, որ հակառակ իր բազմազարդ վիճակին սիրով յանձն առած էր մաս կազմել թէ՛ Փետր. 22ի եւ թէ՛ այսօրուան պատուիրակութեան, եղաւ Վարչապետին մօտ զլխաւոր խօսողը, եւ իբրեւ անաչառ եւ անկողմնակալ անձնաւորութիւն տուաւ իր բարի վկայութիւնը Տիրան Սրբազանի մասին: Վսեմ. Վարչապետը ըսաւ, ի միջի այլոց, որ իր առաւելագոյն ուշադրութեան առարկայ պիտի ընէ ներկայացուած խնդրանքը, որպէսզի պատուութեան շահերը եւ հայ համայնքին օգուտը իրարու հանդիպին:

ԳԻՒԱՆ Ս. ԱՅՈՒՌՈՑ



## ԳԵՐ. Տ. ՍՈՒՐԵՆ ԵՊՍ. ՔԷՄՀԱՃԵԱՆ

## ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԻ ԿԸ ՍՏԱՆԱՅ

Սուրբ Արթուրյա Տնօրէն ժողովը նկատի ունենալով Միաբանութեան երիցագոյն անդամ Գեր. Տ. Սուրեն Նպիսկոպոսի անձնային ծառայութիւնը Ս. Արթուրյա աւելի քան յիսուն տարիներէ ի վեր, եւ նկատի ունենալով իր այժմու բարձր դիրքը եւ պատշոնը իբրեւ Ընդհանուր Վարիչ Գործոց Ս. Արթուրյ, եւ նկատի ունենալով իր անձնական արժանաւորութիւնը, խնդրանք մատուցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին որպէսզի շնորհէ անոր Արժուրեան պատիւ: Վեհափառ Հայրապետը շնորհեց անոր Արժուրեան տիտղոս Դեկտ. 29 թուակիր հեռագրով, ուր կը հաղորդուէր որ կոնգակը շուտով կը դրկուի:

Յունուար 2ի երեկոյին Միաբանութիւնը պաշտօնական շուրջ հրաւիրուեցաւ ուր Լուսարարապետ Գեր. Տ. Շնորհք Նպս. ուրախութեամբ հաղորդեց բարի լուրը անդրադառնալով ամենքին սիրելի Սուրեն Սրբազանի Արթուրեան բազմամեայ ծառայութեան եւ ի դիմաց ամբողջ Միաբանութեան արագինս շնորհաւորեց զայն ու մաղթեց երկար տարիներու առողջ եւ առողջ ծառայութիւն Ս. Արթուրին:

Այս առիթը կ'օգտագործենք շալու համար Գեր. Տ. Սուրեն Արեւիկոպոսի կենսագրականը իր շատ ընդհանուր գիծերուն մէջ: — Ծնած է 1884ին Սրամպուլ: Իր նախնական կրթութեան զուգահեռ հետեւած է յատկապէս շարականագիտութեան, ծիսագիտութեան եւ հայկական ձայնագրութեան:

1907ին կուգայ Երուսաղէմ եւ կ'արձանագրուի Միաբան Ս. Արթուրյ: 1909ին կը ձեռնադրուի առաջ սարկաւագ ձեռամբ Տ. Յարութիւն Պատրիարքի: Մինչեւ 1918 որպէս սարկաւագ եւ դպրապետ կը ծառայէ Սուրբ Տեղեաց մէջ եւ ի Սուրբ Յակոբ:

1918ին կը ձեռնադրուի կուսակից Բանայ, ձեռամբ Տ. Մկրտիչ Արեւպս. Աղաւնունի, Ս. Գրեգորեանին առջեւ: 1918-1921 ժամասաց եւ դասապետ ի Ս. Յակոբ:

1922ին կը ստանայ Վարդապետական աստիճան, ձեռամբ Տ. Նիքիթէ Դուրեան Պատրիարքի, ինչպէս նաեւ ծաղկեայ փիլոն կրեւու արտօնութիւն:

1922-1926 կը նշանակուի Հոգեւոր Տեսուչ Պէյրութի Ս. Նշան Եկեղեցւոյ, միանգամայն վաւերով Պատրիարքական Փոխանորդի պատշոնը: Ի Պէյրութ նախաձեռնարկ կ'ըլլայ ազգային երկսեռ վարժարաններու հաստատման: 1928ին, հիմնադիրներէն մին կը հանդիսանայ Մարտիրոսի Ազգային Բուժարանին: 1928-1929 կը վարէ Պատրիարքական Փոխանորդի պատշոն ի Դամասկոս: 1927ին կը ստանայ լոնջախաչ կրեւու արտօնութիւն:

1929ին, երբ Ս. Արթուր Դամասկոսի քեմը կը յանձնէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Հոգ. Տ. Սուրեն Վրդ. կը վերադառնայ Ս. Արթուր, եւ կը լծուի վանական ծառայութեան: 1929-1931՝ Ասեմապետ Միաբանական Ընդհանուր Ժողովոյ: 1930-1934՝ տեսուչ Ս. Յարութեան Տանարին: 1934-1941՝ տեսուչ Բերդեհէմի Ս. Ծննդեան վանոց: 1940ին Նպիսկոպոսանալու արտօնութիւն կը ստանայ Միաբանական Ընդհանուր Ժողովէն, սակայն կարելի չըլլաւ իրագործել ժամանակներու աննպաստ բերումով: 1941-1951՝ տեսուչ Ս. Հրեշտակապետաց վանքին: 1944ին անդամ կ'ընտրուի Տնօրէն Ժողովոյ, որուն մէջ կը մնայ ցայսօր:

1951ին կը մեկնի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր կը ստանայ Նպիսկոպոսական ձեռնադրութիւն՝ ձեռամբ երջանկայիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1956ին կ'ընտրուի Ընդհանուր Վարիչ Գործոց Ս. Արթուրյ. այս պատշոնը կը վարէ մինչեւ Տ. Տիրան Արեւպս. առաջին ախտէն վերադարձը եւ Տեղապահ ընտրուիլը:

1957ին երբ Տ. Տիրան Արեւպս. Պատրիարք կ'ընտրուի, Տ. Սուրեն Նպս. կը նշանակուի Պատրիարքական Փոխանորդ Ս. Արթուրյ: Ընտրեալ-Պատրիարքի երկրորդ ախտէն յետոյ, Սուրեն Սրբազան կը վերահաստատուի իր Ընդհանուր Վարիչի պատշոնին մէջ:

**ՍԻՈՆ** Եւ ջերմօրէն կը շնորհաւորէ Սրբոց Յակոբեանց Ուխտի ամենեւնի տարեկան կորովի Սրբազանը՝ երբ կը ստանայ Արժուրեան բարձր պատիւը, որուն լիովին արժանի էր:



## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 4 Յուն. — Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամասերան մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, չորհ. Տ. Վազգէն Վրդ. Գրգրըսեան քարոզեց. «Զի ամենայն որ խոնարհեցուցանէ զանձն իւր բարձրացի» քնարանով, նիւթ ունենալով օրուան ձաշու Աւետարանի ընթերցուածէն փարիսեցիի և Մաքսաւորի առակը: — Կէսօրէ վերջ, չքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ վաղուան տօնին հանդիսաւոր նախատօնակը՝ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի նախագահութեամբ Արարողութեանց աւարտին, «Սրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

● Բշ. 5 Յուն. — Ս. Դաւթի մարգարէին և Բաղդաշ Տեառնեղբոր տօնին առթիւ, Գերշ. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, որուն ներքե, ըստ աւանդութեան, թաղուած է Տեառնեղբոր մարմինը: Պատարագիչ Սրբազանը քարոզեց օրուան սուրբերուն մասին, վեր հանելով անոնցմէ իւր քաջանշխարի նկարագրին աղնուական գիծերը: Ըստ սովորութեան, Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ հանդիսաւոր հոգեհանգստեան պաշտօն՝ Ս. Աթոռոյս բոլոր հանգուցեալ պատրիարքաց հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոսի:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Ս. Սեփիանոսի հանդիսաւոր նախատօնակը՝ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի նախագահութեամբ: Տօնին բուրմառակիր վարդապետներն էին Չորշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան և Չորշ. Տ. Վազգէն Վրդ. Գրգրըսեան:

● Գշ. 6 Յուն. — Ս. Սեփիանոսի նախավկային: Առաւօտեան ժամերգութեան պահուն, ըստ սովորութեան, կատարուեցաւ Սարկաւագաց մասնաւոր հանդէսը: Անոնք, թիւով 5, և 3 Ուրբարակիրներ, առանցորդութեամբ երկու բուրմառակիր վարդապետներուն, մարգարտադարդ սաղաւարտներով և արծաթագամ շապիկներով զգեստաւորուած, տապանակ և բուրմառ ի ձեռին, կատարեցին ժամերգութեան վերջին բաժինը, «Փառք ի բարձունսն» սկսեալ մինչև Ս. Պատարագի սկիզբը: Հանդիսութեան կը նախագահէր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.: Ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ Մայր Տաճարի աւանդատան Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Պատարագեց Չորշ. Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Խղոյեան:

● Դշ. 7 Յուն. — Կէսօրէ վերջ, Մայր Տաճա-

րին մէջ պաշտուեցաւ Գլխաւոր Առաքելոց Պետրոսի և Պողոսի հանդիսաւոր նախատօնակը՝ Գերշ. Տ. Շնորհք Եպս. ի նախագահութեամբ:

● Յաջորդ օրը, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամասերան մէջ:

● Ուր. 9 Յուն. — Աղիւղ Որոման տօնի նախատօնակը հանդիսաւորապէս պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Բէմհանեանի:

● Շբ. 10 Յուն. — Տօն Ս. Աղիւղն Որոման: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Գլխաղրի մասերան մէջ մատուց և քարոզեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Բէմհանեան, խօսելով օրուան տօնիչի երկու սուրբերուն մասին ու հայցելով Ս. Գլխաղրի պաշտպանութիւնը վանական այս Սրբազան Հաստատութեան վրայ: Յետ Ս. Պատարագի, Գերշ. Սրբազանը ամպհովանի ներքե, Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին, որմէ ետք Միաբանութիւն և Ժողովուրդ շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարանի զանգիճք, ուր Գերշ. Սրբազանը իր օրհնութիւնը տալէ ետք բաշխեց բոլորին մէկական Ս. Պատարագի նշխար: — Թափօրին մասնակցեցաւ յատուկ հրաւերով և մեր Եկեղեցւոյ զգեստաւորմամբ, Հապէշաց Եպիսկոպոսը, իր երկու վարդապետներով, որոնք ապա հիւրասիրուեցան՝ մասնակցելով մեր Միաբանական Սեղանին:

● Կիր. 11 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասերան մէջ, ուր իր անդրանիկ վարդապետական քարոզը խօսեցաւ Չորշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ս. Պատարագի ընթացքին, Ս. Թարգմանչաց Վարժարանի քովանդակ ուսանողութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաև օտար վարժարաններու հայ ուսանողներ ստացան Ս. Հաղորդութիւն:

● Դշ. 14 Յուն. — Կալանդ: Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց Ժամօրհնող Չորշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ս. Պատարագի աւարտին, Միաբանութիւն և Ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, ուր Գառնիկ Սրկ. խնամուած ուղերձ մը կարդաց ի զմաց Ժառնգ. Վարժարանի և Ընծայարանի ուսանողութեան, շնորհաւորելով Միաբանութեան նոր Տարին: Ս. Թրգմ. Վարժարանէն փոքրիկ մը ծաղկեփունջով Ամանորի պատշաճ կարճ ուղերձ մը արտասանեց: Ապա, Ս. Աթոռոյս Գործոց Ընդհ. վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Բէմհանեան, խօսք առնելով, անդրադարձաւ անցնող տարւոյն ընթացքին պատահած տխուր իրադարձութիւններուն Միաբանութեան կեանքէն ներս, ու մաղթեց որ նոր Տարին իրականացնէ մեր արդար պահանջներն ու բաղձանքները, ու իր խօսքի աւարտին, շնորհաւորելէ և իր հայրական օրհնութիւնը տալէ ետք բոլորին բաշխեց մէկական նարինջ:



● Կիր. 18 Յուն. — Ս. Թննդեան տունը այս տարի եւս կատարուեցաւ աւանդական կարգով: Առաւօտեան ժամը 10ին, Միաբանութիւնը՝ զբոսարարութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ինքնաշարժեքով թափօրով ուղևորեցաւ զէպի Բեթղեմի, առաջնորդուած զինուորական ինքնաշարժեքով: Բեթղեմի հին և նոր ճամբաներուն միացման կէտին, Բեթղեմի և շրջակայ գիւղերու մոտ թափարներ զիմաւորութեան եկած էին, որոնք իրենց յարգանքը մատուցանելէ յետոյ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. պատուատիրութեան ըմպելիով: Ապա օթններու նոր և աւելի երկար շարանով մը ճամբան շարունակուեցաւ: Այս կէտէն չորս զինուորական ծիաւորներ ընկերացան թափօրացեալ Սրբազանի կառքին: Ս. Թննդեան վանուց մեծ բակին վրայ արդէն կազմուած էր մուտքի թափօրը՝ բաղկացած Միաբան Հայրերէ, ժառ. սաներէ և Ս. Թրգմ. վարժարանի երէց աշակերտներէ: Մեր զանգակները շատոնց սկսած էին ծանուցանել մեր Թննդեան արարողութեանց սկսուած ըլլալը Մեծ Դէպքի պատմական Սրբավայրին մէջ: Եկած էին Բեթղեմի Գայմազամը, Գաղաքացեալ և շրջակայքի բոլոր այլ կառավարական ներկայացուցիչները, որոնք իրենց շնորհաւորութիւնները ընծայելէ յետոյ Սրբազանին, անոր կողքին և ետին գրանցին իրենց տեղերը թափօրին մէջ: Զանգակներու զօղանջը երբ զարկեցաւ՝ հնչեց շնորհուրդ մեծը, և թափօրը բարձրացաւ մեր Թննդեան վանքը, ուր ներկաները Հանգիստացեալ Սրբազանի օրհնութիւնը ստանալէ յետոյ ցրուեցան:

— Կէսօրէ վերջ ժամը 2ին սկսաւ «Շրաշափառ»ով մեր մուտքը, սկսեալ հսկայ Տաճարի սիւնաղարդ գաւթէն մինչև խոնարհ այրը գետնի տակ, ուր Միաբանութիւնը իր ուխտը կատարելէ յետոյ բարձրացաւ Ս. Թննդեան Տաճարի մեր բաժինը՝ ուր կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն: Ս. Թննդեան խթման Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Այրին մէջ: Երգեցողութիւնը կատարեց վանուց երկսես երգչխումբը՝ զեկավարութեամբ Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Յաւարտ Ս. Պատարագի և Նախատեսակի: Միաբանութիւնը կրկին թափօրով բարձրացաւ մեր Ս. Թննդեան վանքի Ս. Յակոբ վանական մատուռը, ուր Թննդեան Աւետարանի ընթերցումէն և Վեպոք ի բարձունքի երգեցողութենէն յետոյ Միաբանութիւնը իջաւ սեղանատուն՝ ընթրիքի:

— Գիշերուան ժամը 10ին սկսաւ առաւօտեան պաշտամունքը Տաճարի հայկական բաժնին մէջ:

● Բշ. 19 Յուն. — Կէս գիշերին, Միաբանութիւն և ներկայ հաւատացեալներ իջան Ս. Այրը՝ ուր կատարուած արարողութիւններէն մաս մը, մէկ ժամուան տեղութեամբ, ձայնաւորութեամբ Յորդանանի Հաշիմական Ռատիկայանի միջոցաւ, որու ընթացքին, Ս. Աթոռոյս Գործոց Ընդհ. Վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհանեան տուաւ իր պատգամը՝ ուղղուած Հայց. Եկեղեցւոյ բոլոր զանգակներուն, ի Յորդանան և ի սփռուած աշ-

խարհի: Սոյն արարողութեանց, ըստ աւանդական սովորութեան, ներկայ գտնուեցան Երուսաղէմի Վանք. Կառավարիչը՝ Հասան Էլ-Քէթիպ, Գաղաքի Ընդհ. Ռատիկանայեալ Ս. Տեղեաց և Հին Քաղաքի Ռատիկանայեալ, Բեթղեմի Գայմազամն ու Ռատիկանայեալ, ինչպէս նաև Անկլիքան Գերշ. Մաք իննէս Արքեպս. իր հետևորդներով և Անգլիկական Հիւպատոսարանի կազմէն ներկայացուցիչներ: Գիշերուան այսպէս կոչուած «Իրաւունքի Պատարագ»էն վերջ կատարուեցաւ «Ջորճնէք»՝ որու ընթացքին քարոզեց Գերշ. Տ. Շնորհք Եպս., որ և մատոյց օրուան հանգիստաւոր Ս. Պատարագը առաւօտեան զէմ Ս. Այրին մէջ: Ժամը արդէն վեց եղած էր երբ Միաբանութիւնը կը բարձրանար հանգիստաւոր թափօրով մեր Ս. Թննդեան վանուց Ս. Յակոբ մատուռը, այնտեղ փակելու համար աւելի քան ութ ժամեր տեղ Ս. Թննդեան գիշերային այս պաշտամունքը՝ իր պատմական Սրբավայրին վրայ:

— Ժամը Տին, ինքնաշարժեքով նոյն թափօրով, Միաբանութիւնը վերադարձաւ Երուսաղէմ ու բարձրացաւ Պատրիարքարան, ուր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Միաբանութեան աստ մեաւցող անդամները ընդունեցին եկողները, որոնք Պատարագիչ Տ. Շնորհք Եպս.-ի բերնով, բերին Ս. Թննդեան աւետիսը, օրհնութիւնը և սրտագին մաղթանքները՝ ազգին և աշխարհի համար: Ապա Տ. Սուրէն Սրբազան տուաւ ամենքին իր խօսքը, մաղթանքները և օրհնութիւնը: Ինչերային հակումէն և յողոթնութենէն յետոյ, երբ շատեր կ'երթային հանգիստի, անձերու, որուն պապականութիւնը կը տոչորէր Ս. Երկիրը գրեթէ ամբողջ տարին, սկսած էր իր տեղատարարը՝ որ պիտի շարունակուէր ամբողջ գիշերը ի գոհունակութիւն ամբողջ երկրին, և որ դուարթ խօսակցութեան զխաւոր Նիւթերէն մէկը պիտի ըլլար յաջորդ օր, պաշտօնական շնորհաւորութեանց ընթացքին բոլոր եկողներուն անխտիր:

Երուսաղէմի մէջ, Ս. Թննդեան ձրագալոյցի արարողութիւնները կատարուեցան, ըստ սովորութեան, Ս. Յարութեան Տաճարին մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որուն Ատեանին մէջ, Գերշ. Տ. Նորայր Եպս. Նախագահութեամբ պաշտուած Նախատեսակէն ետք, Տաճարի մեր Տեսչարանին մէջ վերջ գտան արարողութիւնները՝ Թննդեան Աւետարանի ընթերցմամբ և Վեպոք ի բարձունքի երգեցողութեամբ:

— Իսկ յաջորդ առաւօտ ժամը 4ին, ժամերգութենէն ետք, հանգիստաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յակոբեանի Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր, ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան: Ս. Թննդեան տունին շուրջ քարոզեց և Ս. Պատարագէն յետոյ «Ջորճնէք» ի արարողութեան Նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

Ի բացակայութեան ժառանգաւոր սաներու:



թէ՛ երէկ և թէ՛ այսօր երգեցողութիւնները կատարուեցան տեղացի ազգայիններու կողմէ:

● Գշ. 20 Յուն. — Յիւստակ մեռելոց: Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց Աւագ Թարգման Լոգշ. Տ. Վաղդէն Վրդ. Գրգրայեան: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ ընդհանուր մեռելոց համար:

● Կիր. 25 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լընչտակապետ Պատարագեց Լոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան և քարոզեց Գերշ. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան, մեկնարանելով Յիսուսի փորձութեան զրուակները:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Անուամակոչութեան տօնի հանդիսաւոր նախատօնակը:

● Բշ. 26 Յուն. — Տօն Անուամակոչութեան Տեառն: Առաւօտեան ժամը 8.30ին, Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեանի զխաւորութեամբ, Միաբանութիւնը «Էրաշափառուով» մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց և Հայց. Եկեղեցւոյ առաքելականութեան ու անկախութեան շուրջ քարոզ մը խօսեցաւ Գերշ. Հանդիսապետ Սրբազանը: Վանք վերադարձին, Հայոց թաղի մուտքէն, «Լոյս ի Լուսոյ» շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւն և Ժողովուրդ բարձրացան Պատարագարան, ուր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի նախագահութեամբ կատարուեցաւ «Տնօրնէք» թարգմտութիւն: Օրհնուեցան Ս. Աթոռոյ բարիքները: Ապա, թափօրը, զխաւորութեամբ Վանուցս ժամօրհնող Լոգշ. Լօր, մեկնեցաւ վանքի մասանը, մուռը, խոհանոցը և սեղանատունը, անդէս կատարելու համար Նոյն արարողութիւնը: Օրհնուեցաւ նաև, ի միջի այլոց, օրուան յատուկ հերիսայի աւանդական ճաշը:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Ս. Յովն. Մկրչի ծննդեան հանդիսաւոր նախատօնակը:

● Յաջորդ օր, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ:

● Կիր. 1 Փետր. — Ի Ս. Յարութիւն, մեր վերնամասրան մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Գերշ. Տ. Նորայր Եպս. քարոզեց, խօսելով Հայց. Եկեղեցւոյ ուղղափառութեան և եկեղեցիներու միութեան հարցերուն շուրջ:

● Կիր. 8 Փետր. — Ի Ս. Յակոբ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Գերշ. Տ. Հմայեակ Ծ. Վրդ. քարոզեց, նիւթ ունենալով օրուան ծաշու Աւետարանին ընթերցուածը:

● Կիր. 15 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամասրան մէջ:

● Կիր. 22 Փետր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Քարոզեց Լոգշ. Տ. Իսահակ

Վրդ. Ղազարեան, շնչտելով ինքնաճանաչման դերը, որպէս կարեւորագոյն ազգակ' անձնիւր քրիստոնեայի նկարագրին ազնուացման:

● Եշ. 26 Փետր. — Տեառնընդամաքի հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի Ապա կատարուեցաւ «Անդաստան»:

— Իրիկնաղէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Եկեցէք» ի Հսկման կարգերը:

● Ուր. 27 Փետր. — Տեառնընդամաք: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Գերշ. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան, որ և քարոզեց՝ «Լոյս» ի յայտնութիւն հեթանոսաց ...» բնաբանով:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Ս. Սարգիս զօրավարի տօնին նախատօնակը:

● Շր. 28 Փետր. — Մայր Տաճարի Ս. Սարգիս մատրան մէջ մատուցուեցաւ օրուան Ս. Պատարագը, որու ընթացքին յատուկ հոգեհանգիստ եղաւ Ս. Աթոռոյ մեծ բարեգործ Գալուստ Կիւլպէնկեանի և իր ծնողաց՝ Սարգիս և Տիրուհոյ, ինչպէս նաև իր կողակցին՝ Նուարդի, և իրենց գերդաստանի համայն ննջեցելոց համար: Ազօթք և մաղթանք եղաւ նաև մեծանուն բարեբարի որդւոյն՝ Պր. Նուպար Կիւլպէնկեանի և իր ընտանեկան պարագաներուն համար:

## Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Ուր. 26 Դեկտ. — Եւրպայացւոց Ս. Ծննդեան տօնին առթիւ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի զխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորութեան գնաց Լատինաց Պատրիարքին և Ֆրանչիսկեան Միաբանութեան Ս. Տեղեաց Կիւսթօտին: Իսկ Միաբանութեանէն մաս մը, Լոգշ. Տ. Հայկաներ Վրդ. ի զխաւորութեամբ, այցելեց Յօյն-Կաթօլիկներու Պատր. Փոխանորդին, Մարտիրոսներու Եպս. ին, Անկիլիան Արքեպս. ին, Լուտերականներու Երէցին և Հայ-Կաթօլիկներու Պատր. Փոխանորդին:

● Եշ. 8 Յուն. — Օրթոտօքսներու Ս. Ծննդեան տօնին առթիւ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. ի զխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորութեան գնաց Յունաց Պատրիարքին: Ապա, Գերշ. Տ. Շնորհք Եպս. ի զխաւորութեամբ, Միաբանութեանէն մաս մը այցելեց Ղպտոց Եպս. ին, Ասորւոց Եպս. ական փոխանորդին և Հապէշաց Եպս. ին:

— Նոյն օր, Ժընէվի Գաղթականաց Վարդութեան Բարձր Գոմիւէրի անձնական ներկայացուցիչ Պր. Ասատ Սատրի, իրեն ընկերակից Ամանի Իրանեան Հիւպատոսին հետ, ներկայացաւ Պատրիարքարան և ունեցաւ խօսակցութիւն հայ



դադարեցանք միմյանից մասին՝ Գերշ. Տ. Սուրեն և Շնորհք Սրբազաններու, ինչպէս նաև Նոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի և Տիար Կարպիս Հինգիլեանի հետ, որոնք ապա պտտուցին հիւրերը վանքի զանազան մասերը:

● Ուր. 9 Յուն. — Կ. Վ. ժամը 4ին, Քաղաքիս Անկիլիքան Արքեպս. Գերշ. Տ. Մաք իննէսի և իր տիկնոջ հրաւերին ընդառաջելով, իրենց բնակարանին մէջ տրուած թէյասեղանին, ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Սուրեն Արքեպս., ընկերակցութեամբ Նոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վազգէն վարդապետներու և Տիար Կ. Հինգիլեանի:

● Դշ. 14 Յուն. — Հին Տոմարով Ամանորի առթիւ, Պատրիարքարան շնորհաւորական այցի եկաւ Վսեմ. Քաղաքապետը՝ Քաղաքապետարանի կազմով:

● Շր. 17 Յուն. — Ս. Աթոռոյ Գործոց Ընդհ. Վարիչ Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. Քաղաքիս Վսեմ. Կառավարչին ուղղած զիմուսին որպէս արդիւնք, Ն. Վ. Հիւսէյն Թաղաւորը իր Արքայական հաւանութիւնը տուաւ որպէսզի մեր Ս. Եննիգեան տունը օրը (19 Յունուար 1959) Պետական Տուն հռչակուի Երուսաղէմի և Բեթլէհէմի մէջ, փակ պահուելով բոլոր Կառավարական գրասենեակներն ու հաստատութիւնները:

— Այս առթիւ, Գերշ. Տ. Սուրեն Արքեպս., յանուն Միաբանութեան և Զորդանանի մերադնէից, շնորհակալական հեռագրեր ղրկեց Նորին Վեհափառութեան և Վսեմ. Վարչապետին, իրենց այս ազնիւ բարեացակամութեան համար հանդէպ Պատրիարքարանիս և Հայ Համայնքին:

● Կիր. 18 Յուն. — Ինչպէս նախորդ տարիներ, այս տարի ևս, մեր Ս. Եննիգեան տունին առթիւ, Նոր Երուսաղէմէն, Ռեմէէն, Եաֆայէն, Հայֆայէն և Նազարէթէն իբրեւ ուխտաւոր եկան ըստ 250 հայեր՝ որոնք կատարելով իրենց ուխտն ու երկրպագութիւնը, յաջորդ երեկոյեան իսկ վերադարձան իրենց տեղերը՝ Իսրայէլ:

● Դշ. 20 Յուն. — Մեր Ս. Եննիգեան տունին առթիւ, Պատրիարքարան շնորհաւորական այցի եկան և մեծ զանգիւնի մէջ, գրեթէ ամբողջ Գերշ. և Նոգշ. Հայրերու կողմէ ընդունուեցան յաջորդաբար, Քաղաքիս Վսեմ. Կառավարիչը, իրեն հետ ունենալով Երուսաղէմի Զինուորական և Ոստիկանական հրամանատարները՝ իրենց փոխանորդներով միատես, Մուսթաբաբիքը և Հին Քաղաքի Ոստիկանապետը, Երուսաղէմի Միւլիթիին, Սառաթի Արաբական և Լիբանանեան Ընդհ. Հիւպատոսները, Յունաց և Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքները և Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթօտը՝ իրենց Միաբանութեան անդամներով, Ղպտոց և Հապէշաց Գերշ. Եպիսկոպոսները և Ասորոց Եպս. Նոգշ. Փոխանորդը՝ իրենց Միաբանութեամբ, Անկիլիքան Արքեպս. Գերշ. Տ. Մաք իննէս և Արար-Անկիլիքան Դոնաթէյն Եպս., Պա-

պական Նուիրակը, Ունիւայի ներկայացուցիչներ, Մարտինի Համայնքի Եպս. և Դոմինիկեաններու Վանահայրը՝ ընկերակիցներով, ձերական Հայրերէն խումբ մը, Յոյն-Կաթոլիկ Պատրիարքարանի Փոխանորդը՝ իր հետևորդներով, ինչպէս նաև Երուսաղէմէն ծանօթ օտար աղջայիներ:

● Շր. 31 Յուն. — Երաւի տունի առթիւ, Քաղաքապետական կազմի հրաւերով, Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Նոգշ. Տ. Տ. Կիւրեղ և Վազգէն վարդապետներու և Տիար Կարպիս Հինգիլեանի, ներկայ գտնուեցաւ Երաւի տնկման արարողութեան՝ Համբարձման լիբան Յունաց Գալիլիա կոչուող պուրակին մէջ, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

● Եշ. 12 Փետր. — Քաղաքիս սիրուած և ծանօթ փաստարաններէն Հաննա Աթալլայի մահուան տխուր առթիւ, յանուն Պատրիարքարանիս, յուղարկաւորութեան ներկայ գտնուեցան Նոգշ. Տ. Յովսէփ Վրդ. և Տիար Կ. Հինգիլեան:

● Դշ. 17 Փետր. — Արաբական Զարթոնքի տունին առթիւ, Գերշ. Տ. Սուրեն Արքեպիսկ., յանուն Միաբանութեան և Զորդանանի Հայ Համայնքին, շնորհաւորական հեռագիր ղրկեց Ն. Վեհ. Հիւսէյն Թաղաւորին:

— Նոյն առթիւ, Գերշ. Սրբազան Հայրը, հետն ունենալով Նոգշ. Տ. Վազգէն Վրդ. և մեկնեցաւ Ամման և Արքունի Պալատ ներկայանալով արձանագրեց իր անունը՝ օրուան տունին առթիւ բացուած մասնաւոր տոմարին մէջ:

— Նոյն առթիւ, ի դիմաց Գերշ. Տ. Սուրեն Արքեպս. ի և ընդառաջելով Վսեմ. Կառավարչի ղրկած ժամանակացոյցին, Նոգշ. Տ. Տ. Հայկասեր և Կորին վարդապետներ և Տիար Կարպիս Հինգիլեան զացին Հարամ էլ-Շէրիֆ և այցելեցին մեր ներկայ վեհապետի մեծ-մեծ հօր՝ Հիւսէյն Թաղաւորին շիրիմը, որմէ ետք Ալլաֆի գրասենեակին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

## Տ. ԻՍԽԱԿ ԿՐԴ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՀՈՎԻՒ ՀԱՅՈՒ ՄԻԼԱՆՈՅԻ

Միլանոյի Հայ Համայնքի անունով Տիար Երուսեղ Հիւսիսեանի կողմէ Ս. Աթոռ հասած 7 Յունուար 1959 թուակիր նամակով մը կը խնդրուէր Նոյն Եր. Նոյն մը իրենց համայնքին համար, և կը մատնանշուէր Ս. Ուխտիս Միաբան Տ. Իսահակ Վրդ. Ղազարեանը իբրեւ յարմարագոյն թեկնածու: Ս. Աթոռոյ Տնօրէն Թորգոմը իր 16-1-59ի նիստին մէջ տուաւ իր հաւանութիւնը և արտօնութիւնը որ Իսահակ Վրդ. մեկնի Միլանոյ Նոգշ. Հայրաւորը մօտ օրէն կը մեկնի իր պաշտօնատեղին: Սիւն յաջող և արդիւնաւոր պաշտօնավարութիւն կը մաղթէ իրեն:



## Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔՆՆՅ. ՍԻՄՈՆԵԱՆ

1958 տարւոյ հետ, Դեկտ. 31ին, վախճանեցաւ նաեւ Բեթղեհէմի Ս. Մննդեան վանքի ժամարար՝ Տ. Յովհաննէս Խաչակիր Քննյ. Սիմոնեանը, հասուն տարիքի մէջ: Տէր Հայրը ծնած է Վան 1885ին: Իր տարրական ուսմունքը ստացած է տեղւոյն ազգ. վարժարանը եւ ապա Համբարձում Երամեանի դպրոցը: 1909ին քահանայ ձեռնադրուած է Լիմ Անապատի մէջ, եւ ղրկուած է Մարմրտանք (Մոկաց աշխարհ)՝ քահանայագործելու: — 1915ին իր ժողովուրդով միասին զաղթած է Պարսկաստան ուրկէ հայրենիք վերադարձած՝ տարի մը վերջ, եւ ամենքի հետ նուիրուած վերակառուցողական աշխատանքի, որ սակայն կանգ առաւ Վանայ ժողովուրդի վերջնական զաղթով 1918ին: Տէր Հայրը նոյն տարին իր ժողովուրդով կը հասնի Պաքուպայ (Պաղտատ) ուր կը նուիրուի որբահաւաք գործին: 1921ին կը փոխադրուի Նահր-էլ-Օմար (Պասրա) որբերով միասին: Յաջորդ տարին 317 որբ-որբունիներով կը փոխադրուի Երուսաղէմ: 1924ին կը մեկնի Եթովպիա, իբրեւ Հոգեւոր Հայր, իր որբերէն կազմուած 40 հոգիից նուագախումբով եւ կը վերադառնայ տարի մը յետոյ: 1925ին, Դուրեան Պատրիարք որբերու մէջ կատարած իր անձնդիր աշխատանքները կը վարձատրէ լանջախաչի տրուած թեմամբ: Որբանոցի ցրուելէն յետոյ, Տ. Յովհաննէս կը կատարէ ժամարարութեան պաշտօն՝ նախ Եափայի մէջ (1926 - 1936), եւ ապա վերջին թուականէս մինչեւ իր մահը՝ Բեթղեհէմի մեր Ս. Մննդեան վանքին մէջ:

Տ. Յովհաննէս Քննյ. եղած է ժամանակի եւ պարագաներու յարմարող մարդ եւ գործած է ամենայն նուիրումով. հասած է ամէն տեղ եւ գրեթէ ամէն գործի, յատկապէս որբերու Հայրութիւն ըրած իր շրջանին: Իր ժամարարութեանց ընթացքին եղաւ ճշդապահ, կարգապահ եւ իր գործին անխափան նուիրեալ պաշտօնեայ: Իր ետին կը ձգէ իր այրիացեալ երէցկիւնոջ հետ 5 մանչ եւ 2 աղջիկ զաւակներ:

Իր յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Յունուար 1ին, ի Ս. Յակոբ, եւ մարմինը ամփոփուեցաւ Չամթաղի գերեզմանոցի մէջ:

Տէր ի յոյս երեսաց իւրոց հանգուցէ զհոգի պաշտօնէի իւրոյ:

## ԵՐԿՈՒ ԱՐԿԱԾԱՀԱՐ ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐ

Երուսաղէմի հայութիւնը ցնցուեցաւ ի լուր սրտաճմլիկ մահուան երկու երուսաղէմացի հայ օրիորդներու՝ Ֆիմի Մանտասեանի եւ Հռիփսիմէ Յովհաննէսեանի, որոնք ինն ուրիշ ճամբորդներու հետ զոհ գացին Յունուար 22ին, երբ այն օգանաւր՝ քրով կը ճամբորդէին Երուսաղէմէն Ամման, հետ կապածով մը խորտակուեցաւ Երկուքն ալ հիւրընկալի պաշտօն ունէին օգանաւային ընկերութեանց մօտ: Երկուքն ալ անուանիներ էին Ս. Աթոռոյ Ս. Թարգմանչաց վարժարանին: Ֆիմին 22 տարեկան էր, իսկ Հռիփսիմէն՝ 24: Իրենց կրպուած զապաղները բերուեցան Ամմանէն Յունուար 23ին: Հռիփսիմէին յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը, իսկ Ֆիմինը յաջորդ օրը՝ հեկայ բազմութեան մը ներկայութեամբ: Եկեղեցւոյ մէջ զամբանականը խօսեցաւ Տ. Շնորհք Եպս., իսկ գերեզմանին վրայ՝ Պր. Կ. Յակոբեան: Աստուածային մխիթարութիւն կը հայցենք վաղամեռիկ այս օրիորդներու ծնողաց եւ ընտանեկան պարագաներուն համար, եւ երկնային երանութիւն՝ իրենց մատաղ հոգիներուն:



**«ՍԻՈՆ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԸ ԵՒ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆՆԸ  
ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ,  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Խղմամբի Չայներ - Գրիգոր Զօհրապ: Հրատ. և նուէր Կ. Տօնիկեան Գրատան:  
Կարմիր Փոքորիկը - Ծատուր Պէրպէրեան (նուիրատու):  
«Հաւիթ» Հայալիսական Տարելիբ - (Գ. Տարի, 1957): Նուէր Կիլիկ. Կաթ. Տպարանէն:  
Կրօնի Գիրք - Քրիստոնէական Հայց. Ս. Եկեղեցիի: Մեսրոպ Վրդ. Գրիգորեան (նւրտ.):  
Սիւնի Սիւնեան կը նուիրէ: -

- ա) և բ) Ամբողջական Գործը - Ակսել Բակունց: Ա. և Բ. Հատորներ:  
գ) և դ) Արագած - Ս. Սիւնեան և Օ. Սարգիսեան: Բ. և Գ. Տարիներ:  
ե) և զ) Գիտութեան Գասեր - Հրաչ Տանապետեան: Զ. և Է. Տարիներ:  
է) Կրօնի Գիրք - Պատմ. Հայ Եկեղեցիի: Մեսրոպ Վրդ. Գրիգորեան:  
ը) Ան Օրագիր - Մարտիրոս Սասունցի:

Խիմեան Հայրիկ - Անդրանիկ Լ. Փաշաեան (նուիրատու): [Միութեան, Պէյրութ:  
Գիտար Բան և Պատանի Ըլլալ - Բոպէրթ Ա. Գուք: Հրատ. և նուէր Քրիստ. Զանից  
Պատմութիւն Չարմանալ Գաւառի Հայ Ուսումնասիրաց Միութեան (1930-1955): - Նուէր  
Ա. Նաւասարդեանէ:

Ողջոյն Քեզ, Կեանք (Քերթողագիրք) - Մ. Իշխան (նուիրատու): Պէյրութ, 1958:  
Արտաշէս Իսրայէլեան կը նուիրէ: -

ա) Յիւստակի Ծաղիկներ: բ) Տասը Տարի Շղթայում:  
Կ. Պրէքտէր Բաղարատ Թեան կը նուիրէ: - [Եակիմ առթիւ:  
ա) Ներշնչիկ Տարեգիրք - (29րդ Տարի, 1958): բ) Շիրվանզագէ - Ծննդեան 100ամ-  
ձարտար Կիկոսիկը - Երուանդ Գարաճեան: Հրատ. և նուէր Կ. Տօնիկեան Գրատան:  
Նոնեստան (Քերթուածներ) - Ինտրա: Հրատ. և նուէր Եփեմեան:  
Գրօշակ - Հայ Յեզ. Դաշնակցութեան Օրդան, 1890-1897: Նուէր «Յուսարեք»էն:  
Հայոց Հայրիկ (1820-1907) - Մահուան 50ամեակին առթիւ: Սիւն Արքեպս. Մանուկեան  
Վանագի Պետիկը - Գ. Հատուր: Հեղինէ Դաւիթեան (նուիրատու): [(նուիրատու):  
Հայ Գրականութիւն - Յ. Օշական: Բ. Տպարթ: Նուէր Ս. Սիւնոյս Տպարանէն, 1957:  
«Աւանդութիւն Խմբագրութիւնը կը նուիրէ: -

ա) Գիտութիւն - Գ. Դատարան: բ) Մանուկը Բնութեան Մէջ - Բ. Ժիրայր:  
գ) Կնոջ Կոչումը - Ա. Բ. Ժամկոչեան: դ) Նրազաւարտի Արանքը:  
Արամ Ալըպաշեան - Սիրվարդ (նուիրատու): Նիւ Եորք, 1957:  
Մարգարիտեան Շարան - Արփար Մարգարեան (նուիրատու): Գահիրէ, 1957:  
Ս. Գրականութիւն - Ս. Պաշտօն (նուիրատու): Հալէպ, 1958:  
Սրբազան Վիտեր - Շահան Կառմարեան (նուիրատու): Գահիրէ, 1957: [Թիւերը:  
Սահակ Միսիթարեան կը նուիրէ ժողովրդական Տարեգիրքի 1940ի, 1945ի, 1957ի և 1958ի  
Հայ Աւետարանական Եկեղեցին եւ Հայ Ժողովուրդը - Վեր. Յ. Զագմազմեան: Նուէր  
Քրիստ. Զանից Միութեան: Մարտի, 1958:

Լիբանանի Շրջանի Գարգասէր Տիկնանց Ընդհ. Միութիւն (Համառոտ տեղեկութիւններ)  
Զ. Միրզայեանէ ստացանք: - [- Պէյրութ, 1958:

ա) Արու Ալի Սիւն - Զ. Միրզայեան: բ) Թաց Մայրը - Զ. Միրզայեան:  
գ) Բարա Թահեր Օրեանէ Համադանի - Թրքմ. Զ. Միրզայեան:  
դ) Գեւ - Մ. Լիբանանով: ե) Հեղիկը - Ֆ. Մ. Դատարան:

Արեւուրդի (Քերթուածներ) - Մինաս Նուրի (նուիրատու): Նիւ Եորք, 1958:  
Հանանցներ - Հմայեակ Վրդ. Ինդոյեան (նուիրատու): Պրութիւն, 1955:  
Ներկորդ Աւարանամարք - Վ. Բ.: Հրատ. և նուէր «Ալիք»էն: Թէհրան, 1957:  
Օրացոյց Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի - Իսթանպուլ, 1958:



Բնկիւմներ (Քերթուածներ) - Նշան Շահէն (նուիրատու): Հալէպ, 1958:

Դեպի Կարուն - Նշան Շահէն: Նուէր «Երկիր» էն: Հալէպ, 1948:

Ընտրանքի Մարդիկ - Տաթ. Փօլ Ճէքօպի: Պաքիզ, 1939:

Թէհրանէն, Ա. Կրիգորեան կը նուիրէ. —

ա) Երկրորդ Աշխարհամարտը - Վ. Բ.: Թէհրան, 1957:

բ) Ուղղադրական Կանոններ - Դ. Ե. Զ. դասարանների համար: Թէհրան, 1957:  
«Պայքար» - 1958/ի Բացառիկ: Նուէր «Պայքար» էն, Ամերիկա:

Թովմանէն Թումանեան - Արամ Երեմեան: Նուէր Մ. Մ. Գառնարեանէ: Ֆրէզնո, 1957:

Ամերիկայի Հայ Միութեան Ընկերութիւնը կը նուիրէ. —

ա) Հասնիւր Պատմութիւններ (Դ. Հատոր) - Թրգմ. Յովհ. Գ. Ճէպարեան:

բ) Ճրագ (Դիրք Դ.) - Ա. Ա. Պետրիկեան:

Սողոմոն Թեմիւրեան - Վ. Մինասորեան: Նուէր Հայկազ Գինտեանէ:

Անճրեւոտ Օրեր - Զ. Մ. Որբունի (նուիրատու): Փարիզ, 1958:

Բառագիտութիւն կամ Ուր Մասունք Բանի Հայերէն Քերականութեան - (Զ. Տպագրութ.) -  
Եղիշէ Պատրիարք Դուրեան: Հրատ. և նուէր Ս. Աթոռոյ Տպարանէն, 1958:

Զորս Պանխակ Բնագիրներ - Յ. Թրեմարեան (թրգմ.): Հրատ. և նուէր Վրենայի  
Միթրեան Տպարանէն, 1957: [1914:

Ալպոյն Հայ Նսանագրերու - Յովսէփ Տօղրամաճեան: Հրատ. և նուէր ըստ նախորդին,  
Հոգեւոր Երգեր եւ Շարականներ Հայց. Եկեղեցւոյ - Երուսաղէմ, 1958: Նուէր Ս. Ա.  
Թոռոյ Տպարանէն:

Օրեր եւ Ժամեր - Շաւարշ Միտաքեան: Նուէր Արփիկ Միտաքեանէ: Փարիզ, 1958:

Հանրի Ուրամեայ Դիւցազնամարտը - (Բ. Տպագրութ.): Պ. Այրէս, 1956:

Սեռային Ներգաւակութիւնը Ամուսնութեան Սեղ - Տքթ. Գ. Պ. Քէշիշեան: Նուէր  
«Շիրակ» Տպարանէն: Պէյրութ, 1958:

Յարութիւն Յակօրեան կը նուիրէ 4 Անգլերէն գիրքեր:

Ա. Համարեան կը նուիրէ 4 Անգլերէն գրքոյկներ:

Պաղտատէն, Տ. Զօն Եպս. Տէր Յակօրեան կը նուիրէ. —

ա) Բաբելոնեան Տոմար - Լեւոն Գարմէն: բ) Երգեկա - Դ. Սրբմէնեան:

գ) Երիւմի Կոյր - Ոստանիկ Մ. Խէյրանեան: դ) Ֆրիկ - Տիրայր Արքեպս.:

ե) Փրկչիս Համար - » » » : զ) Յեղափոխութեան Համար - Պ.

է) THE DEPARTMENT STORE - H. Pasternadjan. [Սնագեան:

Լա Յօթօ Բրէս Տպարանը (Պէյրութ) կը նուիրէ. —

ա) LE PATRIARCAT DE CILICIE ET LES ARMÉNIENS CATHOLIQUES (1740-1812)

բ) Սամուէլ (Ա. Բ. Գ. Դիրք) - Բաթթի, Պէյրութ, 1956: [- Mesrob J. Terzian.

Գործնական Քերականութիւն Արդի Հայերէն Լեզուի (Նախապատրաստական Դասընթացք)

— Զարեհ Մեղքունեան (նուիրատու): Պէյրութ, 1957: [1958.

A BOOK OF PRAYERS - Rt. Rev. T. Poladian. Presented by Vahan Poladian, Calcutta,

The Teachings of the Essenes - Edmond Bordeaux Szekely. Presented by Rancho La Puerta.

The Arab Federation (In Arabic) - Government Press, Baghdad.

Peace Like a River - A Novel by Christian Asceticism. Vardis Fisher (donor).

The Bilingual Coins of Hetoum I. (1226-1270), King of Cilician Armenia - Paul Bedikian.

Oil in Iraq - Hikmat S. Suleyman (donor).

AACCA presents the following two volumes:—

a) 1952 Yearbook - Volume I. b) The Digest - 1955-56. Volume III.

Mid-West Religious Education Conference - Sponsored by the Armenian Church Youth  
Organization of America.

Sahifeler Arasinda Öğretmen - Mümtaz Tarhan (In Turkish) - Presented by Father Shahan  
Sivadjian.

TIGRANES THE GREAT - H. K. Armen (Presented by the Author). Detroit, 1940.



Պէտքութէն, Ա. Սիմոնեան կը ներկէ. —

ա) և բ) THE MODERN ENGLISH READER - Step One և Step Two.

գ) և դ) » » READER - Book One և Book Two.

Պէտքութէն, Փրոֆ. Հայկ Խաչատուրեան կը ներկէ. —

ա) COMMON NAMES AND FAMILY RESEMBLANCES.

բ) COMMENTS AND CRITICISM ON PROF. COPI'S "A NOTE ON REPRESENTATION

գ) SOME METAPHYSICAL PRESUPPOSITION OF SCIENCE. [IN ART.,

դ) ON EXISTENCE.

EINFUHRUNG IN DIE GEORGISCHE SPRACHE - Von Kita Tschenkéli (In German).

SIGNS OF LIFE - H. M. Raphaelian (donor). New York, 1957. [Washington.

LOANS AT WORK - Int. Bank for Reconstruction and Development. Presented by I. B. R. D.,

"ADDRESS" By Eugene R. Black, Before the 25th Session of the Economic and Social Council of the United Nations at UN. HQ., N. York City, April 17, 1958.

THE LIFE AND MISSION OF THE CHURCH - Presented by the World's Student Christian Federation, Geneva, 1957.

A BRIEF HISTORY OF AINTAB - Prof. K. A. Sarafian (donor), 1957.

SERMON ON THE MOUNT - American Bible Society, New York, 1958.

THE MODERN RENASCENCE IN THE ARAB ISLAND - Doct. Muhammed Madi. (In Arabic). Second Impression.

THE ATOM IN THE SERVICE OF PEACE - Sheikh Suleiman Altaji Alfarouqi (Arabic).

REVIEW OF GEODETIC AND MAPPING POSSIBILITIES - Frankfort, 1957.

11TH ANNUAL ASSEMBLY OF ACYOA - Souvenir Book, 1957. Presented by ACYOA.

IRAQ OIL IN 1957 - I. P. C., B. P. C. and M. P. C.. Presented by the I. P. C., London.

ON PROFESSOR LAFFERTY'S «THE METAPHYSICAL STATUS OF QUALITIES»

Haig Khatchadourian (presented by him).

[Doct. Yeghia Babigian.

BIBLE SOCIETY AND SECONDARY SCHOOL OF LIFE - (1957-58). Presented by

VIKING 1958 - Hazel Park High School, Michigan, U. S. A.. Presented by V. Ohanian.

WORLD SERVICE - Lutheran World Federation, 1955.

PHYSICAL EDUCATION IN EARLY ARMENIA - James H. Tashjian. Նուէր «Հայրե-

վաճարման Մագիան կը ներկէ. —

նիքսէն, Պոսթըն:

ա) ARCHITECTURE - W. R. Lethaby.

բ) MODERN ARCHITECTURE - J. M. Richards.

գ) HOW TO WIN FRIENDS AND INFLUENCE PEOPLE - Dale Carnegie.

դ) BALLET - Arnold L. Haskell.

ե) THE ININTELLIGENT WOMEN'S GUIDE.

զ) IN SEARCH OF TRUTH - Abel J. Jones.

(Շարունակելի)

تصدرها - بطريكية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النيابة الاسقف هايكازون أبراهيان

العدد ١ - ٢

تطبع في مطبعة دير الارمن - القدس

يناير - فبراير - ١٩٥٩

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Bishop Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.



# 1959-ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

## ԵՐՈՒՍԱԿԱՆԵՐ

Գեր. Տ. Սաւրէն Արքեպս. Քէմհանեան՝  
Գեր. Տ. Նսրայր Եպս. Պաղարեան՝

Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան՝  
Հոգ. Տ. Թարգամ Վրդ. Մանուկեան՝

Հոգ. Տ. Մաշոց Վրդ. Բարիլուսեան՝

Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գարիկեան՝  
Հոգ. Տ. Վաղդէն Վրդ. Գրգրբարեան՝  
Հոգ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր՝  
Հոգ. Տ. Դաւիթ Արդ. Սահակեան՝  
Բար. Վարդան Սրկ. Զաքարեան՝  
Բար. Յակոբ Սրկ. Թաշեան՝

Միաբան Ռաֆայէլ Ճէնողեան՝

Տիար Նսրայր Արսէնեան՝  
Տիար Սահակ Գալստեան՝  
Տիար Մաւրա Մանուկեան՝  
Տիար Մովսէս Ճանսեան՝  
Տիար Պաւստ Զինդլեան՝  
Տիար Յակոբ Թաղարեան՝  
Տիար Թաղար Մանուկեան՝  
Տիար Նշան Ինկիլիկեան՝  
Տիար Յարութիւն Յակոբեան՝  
Տիկ. Արսինէ Քացարեան՝  
Տիկ. Մէրի Քէօրօղլանեան՝  
Տիկ. Զապէլ Օհանեան՝  
Տիկ. Զապէլ Ասլանեան՝  
Օր. Ասրինէ Շէօճէլեան՝

## ԱՆՈՒՄՆԵՐ

Հոգ. Տ. Արիս Արդ. Շիրվանեան՝  
  
Տիար Արքաճամ Գանդաշեան՝  
Պէյրուքէն  
Հոգ. Տ. Գիւս Վրդ. Նազդաշեան՝  
Փարիզէն  
Գեր. Տ. Սերովրէ Եպս. Մանուկեան՝

## ԱՄԵՐԻԿԱՅԵՐ

Արթ. Տ. Վարդան Քհ. Աւագեան՝  
Արթ. Տ. Արսէն Քհ. Աշեան՝  
  
Տիար Կարապետ Հօփլամաղեան՝  
Օր. Խանըմ Սարգիսեան (Յրէզնօ)

Տիար Գեղամ Տանձիկեանին (Պէյրուք)։  
Պաղարեան Գրատան (Հալէպ)։  
Տիար Հարօլա Աղամեանին (Տօրքէսթըր)։  
Տիար Սարգիս Ենիդամշեանին (Անթիլիսս)։  
Տիար Անդրանիկ Մանուկեանին (Պաղատ)։  
Տ. քթ. Կարապետ Կարապետեանին (Պոսթըն)։  
Արթ. Տ. Խ. Քհ. Գերմանիկեանին (Հալէպ)։  
Տիար Մովսէս Բարիլուսեանին (Էջմիածին)։  
Տիար Մովսէս Խաչիկեանին (Նիւ Ճըրզի)։  
Տիար Միսիթար Գարիկեանին (Նիւ Եսրք)։  
Արթ. Տ. Նարեկ Քհ. Շրիքեանին (Աշնճար)։  
Կարաինալ Էօմէն Թիսսէրանին (Հոռմ)։  
Տիար Վահան Սափանեանին (Կալիֆօրնիա)։  
Տիար Յակոբ Զաքարեանին (Պէյրուք)։  
Տիար Գրիգոր Թաշեանին (Պէյրուք)։  
Տիար Վահէ Թաշեանին (Պոսթըն)։  
Տիար Մարգարէ Հէքիմաշեանին (Պալիս)։  
Տիար Միշրան Մէրաինեանին (Պալիս)։  
Տիար Ղազարոս Գարակէօղեանին (Պալիս)։  
Ազգային Մարդկան Միութեան (Ամմոն)։  
Տիար Միշրան Գալպիկեանին (Լոնտոն)։  
Տիար Յակոբ Ճանսեանին (Տիթրոյթ)։  
Տիար Վաղարշակ Պաղարեանին (Պալիս)։  
Տիար Նշան Առաքելեանին (Աղեքսանդրիա)։  
Տիար Սարգիս Մանուկեանին (Վիեննա)։  
Թաշոց Բոյնին (Ճիպէյլ Լիբանան)։  
Տիար Դաւիթ Գալանեանին (Գալիֆ.)։  
Տիար Արաշէս Քացարեանին (Պէյրուք)։  
Տիկ. Թաղաւհի Քէօրեանին (Պոսթըն)։  
Տիար Վահան Օհանեանին (Տիթրոյթ)։  
Տիար Սարգիս Ասլանեանին (Քալիֆօրնիա)։  
Գոնիակեան Էղբարց (Պէյրուք)։  
Տիար Յարութիւն Շէօճէլեանին (Հալէպ)։

Տիար Յովհ. Շիրվանեանին (Պէյրուք)։  
Տ. քթ. Պահրի Քիթթէի (Հալէպ)։  
Տիար Կարապետ Միշրանեանին (Նիկոսիո)։

Տիար Սափան Քիւրքեանին (Դամասկոս)։

Տիար Արշակ Սարգիսեանին (Յրէզնօ)։  
Տիար Մ. Յովհաննէսեանին (Մօնթէվիտէօ)։

Տիար Տիգրան Պաղարեանին (Նիւ Եսրք)։  
Տիար Յակոբ Յարութեանին (Յրէզնօ)։  
Տիկ. Աննա Թիւրէֆեանին (Պրուքլին)։  
Տիար Պարսամ Պարսամեանին (Տիթրոյթ)։  
Տիար Մ. Գարրիկեանին (Ս. Յրանշիսկօ)։  
Յրէզնոյի Հանրային Մատենադարանին։  
» Ս. Երբարդ. Եկդ. Մատենադարանին։



# «ՍԻՈՆ» Ի ՍԻՐԵԼԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

1. — Սիւն Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան պաշտօնական հրատարակութիւնն է: Երուսաղէմ ըլլալով հանդերձ համաքրիստոնէական Ս. Քաղաք մը, մեզի համար յատկապէս է համահայկական կրօնա-մշակութային մեծ հոգեւոր կեդրոն մը: — Այս իրողութիւնը միայն բաւական է որ անոր պաշտօնաթերթը ամէն Հայու հետաքրքրութեան և զուրգուրանքին առարկայ դառնայ:

2. — Սիւն կը ջանայ տալ Աւետարանի մաքուր սնունդը և Եկեղեցւոյ պայծառ լոյսը: Անշեղ կը քալէ Քրիստոսի բացած արքունական ճանապարհէն և կը հրաւիրէ բոլորը որ այնպէս ընեն: Անայլայլ կերպով հաւատարիմ է մեր անցեալի և ներկայի իրական արժէքներուն:

3. — Սիւն կը ջանայ բարձր բռնել դրօշը Հայերէն լեզուի և մեր մշակութային ժառանգութեան:

4. — Սիւն կը հետաքրքրուի և կը հետաքրքրէ իր ընթերցողները համաքրիստոնէական ու Հայ Եկեղեցական այժմէական բոլոր երեւոյթներով:

5. — Սիւն սիրով կը հիւրընկալէ իր մէջ թելադրական նամակներ և չինիշ մատնանշումներ իր ընթերցողներէն, բաւ է որ անոնք համաձայն ըլլան իր ուղղութեան և ոգիին:

6. — Սիւն սիրով պիտի պատասխանէ եկեղեցական, ծիսական, կանոնական և այլ կրօնա-բարոյական խնդիրներու մասին եղած հարցումներուն:

7. — Վարչութիւնս սիրայօժար Սիւն պիտի զրկէ բոլոր հայ հոգեւորականներու և ազգային Հաստատութեանց՝ եթէ այս մասին մեզի դիմում ըլլայ և հասցէ զրկուի: Հանրային ծառայութեան այս նպատակը աւելի դիւրաւ կիրարկելու համար կը սպասենք որ Աստուծոյ նիւթապէս աւելի օրհնուած ազգայիններ օգնեն մեզի յաւելուածական բաժանորդագիրներով որպէսզի մենք ալ օգնենք ուրիշներու:

8. — Պատրիարքարանիս ներկայ ելեւմտական վիճակի մէջ, Սիւն-ի հրատարակութիւնը Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտին համար զոհողութիւն մըն է, զոր սիրով կ'ընէ: Ուստի կը թելադրենք որ Սիւն-ի բոլոր բաժանորդները զործակցին Վարչութեանս անխափան, կանոնաւոր վճարելով իրենց տարեվճարները:

9. — Մեր սրտագին բաղձանքն է որ Սիւն մօտք գտնէ բոլոր Հայ տուններէ ներս, վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ զրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին և նախասիրութեան:

10. — Նման ծախսալից հրատարակութեան մը համար բաժնեգին նշանակած ենք հին աշխարհի համար 1 Սթերլինի չնչին զուժար մը, իսկ Միացեալ Նահանգներու համար 5 Տոլար միայն:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՍԻՈՆ-Ի